7729
23508

33
F-21
1909

1049
p. 155

2010

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ. — ԹԻՒ 14

3
-21
ատ

Ա. ԲԱԽ

1-3

# Հարուստներ եւ Աղքատներ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Թարգմանեց Ս. Ջ.

Printed in Turkey

Կ. ՊՈԼԻՍ 1909

30669-42

1569
39

13782-58

12001

# ՀԱՐՈՒՍՏՆԵՐ ԵՒ ԱՂՔԱՏՆԵՐ

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա· ՏԻՎԻՃԵԱՆ ԴՐԱՏՈՒՆ

## Գ Լ Ո Ւ Խ Ա.

### ԴՐԱՄԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ

1. Օրէնքները գիտութեան մէջ. — Օրէնքը, որպէս արտայայտութիւն երեւոյթների պատճառական կապակցութեան. — Զարգացման երեւոյթները. — Զարգացման օրէնքը. — Շրջավայրի ազդեցութիւնը զարգացման վրայ. — Դիտողութիւնը եւ փորձը, որպէս գիտութեան աղբիւրներ. — Օրէնքը եւ ենթադրական օրէնքը:

2. Դրամատիրական հասարակութեան զարգացման պայմանները. — Աշխատանքի արդիւնաւէտութիւնը. — Աշխատանքի լայն բաժանման վրայ հիմնուած ապրանքային արդիւնագործութեան հնարաւորութիւնը. — Գիտելութեան մակերեւոյթը հասարակութեան մէջ. — Գործողութիւնների ազատութիւնը:

3. Դրամատիրական հասարակութեան զարգացման ընթացքը. — Արդիւնագործութեան եւ դրամագլխի կենտրոնացումը, որպէս հետեւանք աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացման. — Արդիւնաբերողական ոյժերի զարգացումը եւ աշխատանքի հասարականացումը. — Հասարակութեան շերտաւորումը, — Դրամատիրական կարգերի անկայունութիւնը. — Դրամատիրական կարգերի կործանումը. — Եզրակացութիւններ:

*Մեր գրքի նախընթաց մասերում(*) մենք քննեցինք դրամատիրական արդիւնագործութիւնը և քաչխումը և պարզեցինք, մեր այժերի ներածին չափ, այն ազդեցութիւնը, որ նրանք գործում են հասարակական կարգերի վրայ: Մենք տեսանք, որ դրամատիրական արդիւնագործութեան և քաչխման համապատասխանում է դրամատիրական հասարակութիւնը իր դասակարգերով և նրանց անընդհատ պայքարով, իր դասային կառավարութեամբ, որ պաշտպանում է դրամատէրերի շահերը ընդդէմ աշխատաւոր դասի ամող ապստամբական ոգիին: Ուսումնասիրելով դրամատիրական հասարակութիւնների ծագումը և աճումը զանազան երկիրներում, դիտեցինք մի քանի ընդհանուր յատկանիշներ: Այդ յատկանիշները ցոյց են տալիս այն, որ դրամատիրական տնտեսութեան ճանապարհի վրայ կանգնած հասարակութիւնները իրենց զարգացման մէջ ենթարկւում են, բուն երեւոյթին, մի ընդհանուր օրինի: Դրամատիրական հասարակութեան զարգացման այդ օրէնքի ճանաչութեամբ է, որ պիտի մենք զբաղւենք այս մասում: Բայց նախ քան այդ խնդրին դիմելը՝ մենք անհրաժեշտ ենք համարում որոշել՝ թէ ինչ ենք արդեօք մենք հասկանում ընդհանրապէս օրէնք և մասնաւորապէս զարգացման օրէնք ասելով:*

## 1. ՕՐԻՆՔՆԵՐԸ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

**Երեւոյթներ եւ նրանց պատճառական կապակցութիւնը.** — *Մեզ չրջապատող իրականութիւնը ներկայանում է մեր առաջ, որպէս երեւոյթների մի անվերջ բազմութիւն:*

(*) **Հարուստներ եւ Աղքատներ,** Ա. եւ Բ. Մասեր, «Առաջի Դարպարան»:



*Ինչ է երեւոյթը: Երեւոյթը առարկաների փոխադարձ յարաբերութիւնն է, որ մարդս ճանաչում է իր զգայարանքների՝ տեսողութեան, լսողութեան, հոտոտելիքի, ճաշակի և չօշափելիքի միջոցով(*):*

*Վերցնենք մի որևէ օրինակ: Խնձորը ընկնում է խնձորենուց գետնի վրայ: Այս երեւոյթի մէջ արտայայտւում է երեք առարկաների փոխյարաբերութիւնը՝ հողի, խնձորենու և խնձորի: Քանի դեռ խնձորը չէր ընկել, խնձորենին ամուր էր գետնի վրայ, իսկ խնձորը կախուած էր խնձորենու վրայ: Խնձորն ընկնելուց յետոյ, խնձորենին մնաց իր տեղում, իսկ խնձորը՝ գետնի վրայ: Փոխուեց մեր դիտած երեք առարկաներից մէկի՝ խնձորի, դրութիւնը: Այդ փոփոխութիւնը մարդս նմանում է տեսողութեան միջոցով — նա տեսնում է, ինչպէս խնձորը ընկնում է ծառից գետնի վրայ, և լսողութեան միջոցով նա լսում է այն թրխկոցը, որ առաջացնում է խնձորը գետնի վրայ ընկնելու պահուն: Առհասարակ, ինչ երեւոյթ էլ վերցնենք, վերջինս միշտ կը ներկայանայ մեր մտքին, որպէս մեր դիտած առարկաների փոխյարաբերութիւնը: Առարկաների փոխյարաբերութիւնը կարող է մնալ դիտողութեան ժամանակ առանց փոփոխութեան կամ կարող է փոփոխել: Խնձորը կախուած է խնձորենու վրայ, որ բանում է գետնի վրայ: Այս դէպքում բոլոր երեք առարկաները էլ՝ խնձորը, խնձորենին և գետինը գտնւում են հանդիսատեսութեան մէջ, և նրանց փոխյարաբերութիւնը մնում է այդ ժամանակ անփոփոխ: Ընդհակառակը, երբ խնձորը ընկնում է գետնի վրայ, — մեր դիտած առարկաներից մէկը, խնձորը, դուրս է գալիս հանդիսատեսութիւնից, ուստի և բոլոր երեք առարկաների փոխյա-*

(*) Աւելի ճիշտը — երեւոյթը փոխյարաբերութիւնն է այն տպաւորութիւնների, որ մենք ստանում ենք առարկաներից:

բաբերութիւնը փոխւում է, — սկզբում խնձորը խնձորենու վրայ էր, յետոյ կարեց և անցաւ օդի միջով և, վերջապէս, ընկաւ գետին: Այն երեւոյթները, որոնց առարկաները դիտողութեան ընթացքում գնում են հանդիսա դրութեան մէջ, կոչւում են դիտութեան մէջ կայուն (սթաթիք) երեւոյթներ: Իսկ այն երեւոյթները, որոնց առարկաները դիտողութեան ժամանակ փոխում են իրանց դիրքը կամ դրութիւնը, կոչւում են անկայուն (տինամիք) երեւոյթներ: Յետոյ մենք կը տեսնենք՝ թէ ինչո՞ւ մեզ այդ հարկաւոր է իմանալ:

Մենք ասացինք, որ մեզ շրջապատող աշխարհը ներկայանում է մեր առաջ, որպէս երեւոյթների անհամար բազմութիւն: Երեւոյթների այդ բազմութեան մէջ կան այնպիսիները, որոնք կապւած են իրար հետ անխզելի կերպով. կան և այնպիսիները, որոնք պատահմամբ տեղ են գրաւում և որոնց կապը միւս երեւոյթների հետ նկատելի չէ առաջին հայեացքից:

Նոյնիսկ ամենապարզամիտ վայրենին գիտէ, որ երբ ծագում է արեւը, լոյս և ջերմութիւն է նա տարածում չորս դին և բոլոր կենդանի արարածները սկսում են շարժուել և զբաղուել իրանց գործերով: Եւ ընդհակառակը, երբ արեւը մայր է մտնում, մթնում է և ցրտում, և կենդանիները պահ են մտնում իրանց բները: Վայրենու մտքում արեգակի ծագման երեւոյթը կապւում է ջերմութեան, լոյսի և կենդանի արարածների գործունէութեան երեւոյթների հետ, որովհետև այդ բոլոր երեւոյթները չարունակ միասին և միաժամանակ են տեղի ունենում: Հետզհետէ նա հասկանում է, որ ոչ միայն այդ երեւոյթները կրկնւում են միաժամանակ, այլ որ կայ մի ներքին կապ նրանց միջև, որ արեւի ծագումը լոյսի և ջերմութեան պատճառն է, որովհետև առանց արեւի ոչ լոյս կայ, ոչ ջերմութիւն:



Քանի մարդկային միտքը զարգանում է, այնքան նա աւելի ու աւելի է ըմբռնում երեւոյթների ներքին կապը և սովորում ճանաչել նրանց ընդհանուր պատճառը: Մարդս տեսնում է, որ խնձորը՝ ծառից կարելով՝ ընկնում է գետին: Ձեռքով վեր գցած քարը սկզբում սլանում է վերեւ, յետոյ մի վայրկեան կանգ է առնում և, վերջապէս, ընկնում է յետ, գետին: Կշռքի նժարի վրայ դրած առարկան քաշում է այդ նժարը դէպի վար: Իսկ որպէսզի կշռքի երկու նժարներն էլ նորից ընկնեն նախկին դրութեան մէջ, պէտք է որևէ ծանրութիւն դնել միւս նժարի վրայ: Գետնից ծանր առարկան բարձրացնելու համար հարկաւոր է որոշ այժ գործադրել ևայլն: Եւ այս դիտելով ու մտածելով, մարդս գալիս է այն եզրակացութեան, որ այդ բոլոր երեւոյթները առաջ են գալիս մի ընդհանուր պատճառից, նրանից, որ բոլոր առարկաները իրանց ծանրութիւնն ունեն:

Սակայն ինչից է ծագում ծանրութիւնը: Մարդկային միտքը երկար չաշխատեց այդ հարցի համար, մինչև որ Նիւտօն անունով մեծ դիտականը գտաւ, որ առարկաների ծանրութիւնը առաջանում է նրանից, որ երկիրը ձգում է նրանց դէպի իրեն: Նիւտօնը գտաւ տարմիանների ձգողութեան օրէնքը: Իսկ ինչ է օրէնքը: Օրէնքը այնպիսի եզրակացութիւն է, որ արտայայտում է երեւոյթների պատճառական կապակցութիւնը եւ այդպիսով նախատեսում նրանց ընթացքը: Եւ խնձորի գետին ընկնելը և այն չանքը, որ պէտք է թափել ծանր քարը գետնից բարձրացնելու համար՝ կախւած է մի պատճառից — նրանից, որ երկիրը ձգում է դէպի իրեն այդ առարկաները: Միաժամանակ իմանալով ձգողութեան օրէնքը, մենք առաջուց կարող ենք ասել, որ երկրի երեսի վրայի օդի մէջ եղած իւրաքանչիւր առարկայ կ'ընկնի գետին, որ կշռքի վրայ դրւած իւրաքանչիւր առարկայ կշռքի նժարը կը քաշէ դէպի վար ևայլն:

*Ուղիղ օրենքը հնարաւորութիւն է տալիս նախատեսելու երեւոյթները եւ նախազուշակել նրանց ընթացքը։*

**Զարգացման երեւոյթները.** — Վերեւում մենք ասացինք, որ երեւոյթները լինում են կայուն, որոնց ժամանակ դիտուղ առարկաները դիտողութեան ընթացքում մնում են անշարժ, և անկայուն, որոնց ժամանակ առարկաները գտնւում են փոխոխման կամ շարժողութեան մէջ։

Անկայուն երեւոյթների մէջ կան այնպիսիները, որոնք իրար հետ կապւած լինելով՝ յաջորդում են իրար որոշ կարգով հետզհետէ բարդանալով։ Այդ երեւոյթի վրայ հարկաւոր է առանձին ուշադրութիւն դարձնել։

Վերցնենք էլի օրինակ։ Մի որեւէ հացահատիկ, դիցուք, կարող է երկար ժամանակ պահպանուել առանց նկատելի փոխոխման, եթէ միայն նրան պահելու լինենք չոր տեղում։ Բայց եթէ հացահատիկը դրւի խոնաւ հողի մէջ, այդ դէպքում նրա հետ կը կատարւին մի շարք յաջորդական փոխոխութիւններ։ Սկզբում հացահատիկը քաշում է իր մէջ խոնաւութիւնը, ուռչում է և կակղանում։ Յետոյ նա քաղցրանում է և ծիլեր է թողնում։ Այդ ծիլերից մի քանիսը անցնում են հողի տակը, ամրանում են այնտեղ և արմատներ դառնում, իսկ միւսները բարձրանում են հողի մակերեւոյթի վրայ, ծղօտ և տերեւ դառնում։ Ժամանակի ընթացքում ծղօտների վրայ երեւան են գալիս ծաղիկներ, որոնք տեղաւորւում են իրար կողմի, կազմելով հասկ։ Իւրաքանչիւր ծաղկի մասերից մէկը, կիսքը, սկսում է աճել այն ժամանակ, երբ միւս մասերը թափւում են, հասկը լցւում է և բոլոր պտուղ տալիս։

Եթէ հողը, որի մէջ ընկաւ հացահատիկը, խոնաւ չը լինէր, հացահատիկը չէր կարող ուռչել, քաղցրանալ և աճել։ Եթէ հացահատիկը ընկնի սեւահողի փոխարէն մա-



քուր, բայց խոնաւ աւազի մէջ, նա կուռչի և կրակի ծիլեր տալ, սակայն չհասոյ նա սկսում է փչանալ, որովհետեւ աւազի մէջ բոլոր չի կարող գտնել այն անհրաժեշտ հիւթերը, որ նա դուրս է քաշում սեւահողից իր արմատների միջոցով։ Եթէ՝ հացահատիկը ընկնի լաւ խոնաւ հողի մէջ, բայց մեծ քարի տակ, նա դարձեալ կ'ուռչի և ծիլեր կը տայ, բայց այնուամենայնիւ կը փչանայ, որովհետեւ նրա ծղօտը չի կարող բարձրանալ հողի մակերեւոյթի վրայ, իսկ հողի մակերեւոյթի վրայ լինելը նրան անհրաժեշտ է, որպէսզի արեւը նրան լուսաւորէ և օգնէ նրան վերցնել օդից այն, ինչ որ հարկաւոր է նրա մնդի հաւար։ Եթէ հողը, որի մէջ ընկել է հացահատիկը, չափազանց վատ է, բոյսը մի առժամանակ կ'աճի, բայց նա կը լինի թոյլ և ծաղիկ չի տար կամ կը տայ դառնարկ ծաղիկ։ Ուրեմն, որպէսզի հացահատիկը կարողանայ կատարելապէս բոյս դառնալ, անհրաժեշտ է, որպէսզի նա կարողանայ անարգել ուռչել, քաղցրանալ, աճել, ամրանալ իր արմատներով հողի մէջ և դուրս քաշել վերջինից անհրաժեշտ հիւթերը, տարածել հողի մակերեւոյթի վրայ ծղօտներ, կրկին աճել, ծաղկել և պտուղ տալ։ Մենք այստեղ գործ ունենք մի շարք երեւոյթների հետ, որոնց միջև գոյութիւն ունի պատճառական կապակցութիւն (եթէ հացահատիկը չ'ուռչէր. նա չէր աճի և այլն...) և որոնք յաջորդում են իրար որոշ կարգով։ Միևնոյն ժամանակ յիշեալ երեւոյթները յաջորդում են իրար, հետզհետէ բարդանալով։ Սեղ հացահատիկը աւելի բարդ երեւոյթ է, քան չորը, որովհետեւ նրա մէջ աւելի երեւոյթներ են կատարւում, քան չորի մէջ. նոյն պատճառով ծաղկող բոյսը աւելի բարդ է, քան դեռ չը ծաղկածը և այլն...։

Այդ բոլոր երեւոյթների, այդ բոլոր կերպարանափոխութիւնների ամբողջութիւնը կազմում է այն, որ կոչ-

ւում է բոյսի զարգացում, իսկ բոյսի հետ կատարվող կերպարանափոխությունների որոշ հետևողականությունը կազմում է բոյսի զարգացման ընթացքը։

*Ուրեմն, ինչ է զարգացումը։* Զարգացում խոսքի տակ մենք հասկ ենք անկայուն երևույթների (փոփոխությունների) ամբողջությունը, երևույթների, որոնք զանվում են իրարից պատճառական կապակցության մեջ և յաջորդում են իրար հետզհետե բարդանալով։

*Ուշադրություն պետք է դարձնել այստեղ այն հանգամանքի վրայ, որ զարգացման ընթացքում երևույթների յաջորդականությունը կատարվում է այնպես, որ մի երևույթը չնիկատելի կերպով փոխվում է և դառնում մի ուրիշ երևույթ, այդ պատճառով իսկ հնարավորություն չը կայ ասել, որտեղ է վերջանում մի երևույթը և որտեղ սկսվում մյուսը։* Ցորենի բոյսը իր արտաքինով նման չէ այն հացահատիկին, որից նա ծագել է։ Բայց եթե ուսումնասիրենք լինենք հացահատիկի կազմվածքը և բոյսի զարգացման ընթացքը, կը համոզվենք, որ ցորենի բոյսը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի քանի անգամ մեծացած փոքրիկ բոյսը (սերմը), որ սրտէն պատրաստ դրությունն ունի իբրև՝ ցորենի մեջ և որը անընդհատ աճում է այն ժամանակից, երբ ուռչում է ցորենը։

**Զարգացման օրենքը.** — *Մենք տեսանք բոյսի զարգացումը ցորենի հատիկից և նկատեցինք այն կերպարանափոխությունները, որոնց պիտի ենթարկվի նա նախքան կատարելապես կը զարգանայ։* Փորձը ցույց է տվել, որ ինչ հատիկ էլ դնենք լինենք խոնավ հողի մեջ — հաճար, սիսեռ, կտավատ կամ կանեփ — նրանք բոլորն էլ ենթարկվում են նոյն փոփոխություններին և ճիշտ նոյն կարգով, ինչպես և ինչ կարգով որ զարգանում է ցորենի հատիկը։ Չը կայ այնպիսի հատիկ, որ նախ աճէր, իսկ յետոյ ուռ-



չէր, չը կայ այնպիսի բոյս, որի ծաղիկը դուրս գար պըտուղից և ոչ թէ պտուղը՝ ծաղիկից։ Պարզ է, որ մենք գործ ունենք այստեղ օրենքի հետ։

*Մենք վերևում ասացինք, որ օրէնքը այն եղրակացությունն է, որ արտայայտում է երևույթների պատճառական կապակցությունը և դրանով նախորոշում նրանց ընթացքը։* Զարգացման երևույթները միայն աչքի առաջ ունենալով, մենք այս բնորոշումը պիտի լրացնենք մի նկատողությամբ՝ նրանով, որ այդ երևույթները հետևում են իրար, հետզհետե բարդանալով։

*Այսպէս ուրեմն, զարգացման օրենքը այն եզրակացությունն է, ու արտայայտում է պատճառական կապակցությունը եւ որոշում ընթացքը այնպիսի երեւոյթների, որոնցից յաջորդում են իրար հետզհետե բարդանալով։*

*Այս բնորոշումը նայնպէս է վերաբերում բոյսի զարգացման օրէնքներին, որչափ և կեղանուս, մարդու կամ մարդկային հասարակության զարգացման օրէնքներին։* Զարգացման օրէնքները լինում են պէսպէս, բայց նրանց էությունը, այսինքն երևույթների յաջորդական բարդացումը և նրանց փոխադարձ պատճառական կապակցությունը մնում են նոյնը բոլորի համար։ Հասկ զարգանում է ձուլից ոչ այնպէս, ինչպէս ցորենի բոյսը հատիկից, բայց զարգացման հետևիւնը նոյնն է երկու դէպքումն էլ։

**Շրջապատի ազդեցությունը զարգացման վրայ.** — *Մենք տեսանք թէ որպիսի փոփոխությունների պիտի ենթարկվի ցորենի հատիկը՝ նախքան կատարեալ բոյս կը դառնայ։* Ինքն բոս ինքնեան հասկանալի է, որ հատիկի այդ բոլոր կերպարանափոխությունները կարող էին տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ կայ այն ամենը, որ անհրաժեշտ է դրա համար — ջուր, ջերմություն, յարմար հող, արևի լոյս և այլն։

Այդ պատճառով, հացահատիկի զարգացման օրէնքի մասին խօսելով, մենք ենթադրում ենք, որ նրա համար անհրաժեշտ բոլոր պայմանները գոյութիւն ունեն և ոչինչ չի խանգարում նրան: Լինելով ընդհանուր, այդ օրէնքը կարող է հաշւի առնել միայն ընդհանուր պայմանները, որոնք անհրաժեշտ են բոյսի զարգացման համար, միևնոյն ժամանակ ենթադրւում է, որ այդ պայմանները ոչ միայն գոյութիւն ունեն, այլ և ձեռւմ են անփոփոխ: Ենթադրւում է, որ հողի մէջ կայ ճիշտ այնքան ջուր, որքան հարկաւոր է բոյսի համար, — ասելին կարող է ձեռւել, որ նա պարունակում է իր մէջ բաւականաչափ սննդարար նիւթեր, առանց վնասակար խառնուդների, որ արեւը բաւականաչափ լոյս և ջերմութիւն է տալիս և չի այրում բոյսը և այլն, և այլն: Իրականութեան մէջ չրջապատող պայմանները — շրջապատը վերին աստիճանի բազմազան և փոփոխուղ է: Նրանց այդ բազմազանութիւնը անչուշտ իր ազդեցութիւնը պիտի թողնէ բոյսի զարգացման ընթացքի վրայ:

Երկու հացահատիկներից մէկը ընկնում է կաւոտ սեւահողի, իսկ միւսը՝ աւազոտ սեւահողի մէջ: Երկու հողերն էլ միատեսակ լաւ և հարուստ են սննդարար նիւթերով: Բայց բոյսերի զարգացման ընթացքը տարբեր կը լինի այդ երկու դէպքում: Եթէ ամառը չորային է, աւելութիւնը կաւոտ սեւահողի մէջ ընկած հացահատիկի կողմն է, որովհետև կաւոտ հողը պահում է ջուրը, իսկ աւազոտը քայ է թողնում: Այդ պատճառով էլ առաջին բոյսը կը զարգանայ աւելի արագ և լաւ, քան երկրորդը: Եթէ, ընդհակառակը, ամառը անձրեւային է, աւաւելութիւնը աւազոտ հողի մէջ ընկած հացահատիկի կողմն է, որովհետև աւելորդ ջուրը չի կանգ առնի այստեղ և հացահատիկը կառանայ ճիշտ այնքան ջուր, որքան հարկաւոր է իրան, մինչդեռ կաւոտ հողի մէջ բոյսը կարող է փախել և նրա զարգացումը կ'ընդհատւէր: Եթէ երկու հացահատիկներն էլ գտնւէին բոլորովին միատեսակ պայմաններում, նրանք կը զարգանային միատեսակ, որովհետև նրանց զարգացման օրէնքը նոյնն է: Բայց չրջապատող պայմանները շատ տարբեր են, ուստի և նրանց զարգացման ընթացքը՝ տարբեր է: Նշանակո՞ւմ է այդ արդեօք, որ օրէնքները ընդհանրապէս առնչութիւն չունեն իրականութեան հետ և գոյութիւն ունեն միայն իմաստուն մարդկանց գլխում: Ելքէք: Շրջապատող պայմանները — չրջավայրը — կարող են ներգործել միայն զարգացման ընթացքի վրայ, դանդաղեցրել կամ արագացնել այս կամ այն փոփոխութիւնը, բայց զարգացման ընդհանուր օրէնքը պահպանում է լրիվ իր ոյժը: Հացահատիկի ուսչելը, քաղցրանալը և ծլելը կարելի է արագացնել, կարելի է բոյսի զարգացումը աւելի լիակատար դարձնել՝ նրա ծաղիկները աւելի բարձր և հատ կը լինեն, ծաղիկները հասկի վրայ աւելի խիտ և բազմաթիւ կը լինեն, հասկիները՝ աւելի խոշոր և ծանր: Բայց ինչպէս ուզում ես պարարացրու հողը, չես կարող անել այնպէս, որ բոյսը առաջ հասկ տայ և յետոյ միայն ծաղիկ:

Մարդկային միտքը վաղուց հետ ճանաչել է բնութեան օրէնքների էութիւնը: Երբ գիւղացին գործածրւում է իր աշխատանքը հողը վարելու, ապահանելու, և գցում է նրա մէջ հատիկները, փոխանակ նրանց աղալու և ալիւրից հաց թխելու, նա այդ դէպքում ինքնաին ունի բոյսի զարգացան անխուսափելի ընդհանուր օրէնքը, նա գիտէ, որ եթէ «ժամանակին Աստուած անձրեւ ուղարկէ» (բոյսի զարգացման համար անհրաժեշտ ընդհանուր պայմանները), նրա ամէն մի հացահատիկը տասնապատիկը կը տայ նրան: Նա գիտէ ոչ միայն այդ, այլև այն, որ իր կամքով նա կարող է փոխել զարգացման բնական պայմանները և դրանով ազդել նրա բն-

թացքի վրայ։ Եթէ հողը վատ է, նա արհեստական կերպով պարարտացնում է նրան։ Եթէ հողը ճահճային է, նա չորացնում է նրան, չնկելով ջրի համար առանձին ջրանցք։ Սառցած բերքից ամենալուր հացահատիկները պահում է որպէս սերմնացու և այդ միջոցով չարաշահ լաւացնում է իր ցանքը։ Մարդս ոչ միայն ընտելացրել է կենդանիներին որոշ տեսակները, այլ և իր բարեհայեցողութեամբ նա կարողանում է փոփոխել և աղնւացնել նրանց ցեղը, թողնելով ամման համար միայն այն տեսակները, որոնք նրան հաճելի են և օգտակար։ Մի խօսքով, մարդս օգտագործում է բնութեան օրէնքներից իր նպատակների համար։ Նա զգում է և գիտէ, որ բնութեան օրէնքների ընդդէմ չկայ ոյժ, որ նրան նոյնքան անկարելի է դուրս գալ, որքան և սեփական կաշուց։ Բայց և այնպէս փորձը ցոյց է տալիս նրան, որ նա բնաւ անօգնական չէ նրանց առաջ։ Մարդկային ամբողջ գործունէութիւնը սկսած առաջին վայրենու գործածած առաջին ձեռնափայտից մինչև ժամանակակից ամենակատարեալ մեքենաները, որոնցից մէկը գլուխը պատրաստ է գալիս, է անընդհատ եւ գիտակցական միջամտութիւն երեւոյթների բնական ընթացքի մէջ նրանց մարդուս պահանջներին յարմարեցնելու համար։ Բնութեան օրէնքները անփոփոխելի և անխուսափելի են։ Բայց մարդկային պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդ օրէնքների շրջանակում մարդուս մտքին և կամքին թողնուած է գործունէութեան լայն ասպարէզ։ Ահա թէ ինչու պէտք է ոչ թէ ընկճուել բնութեան օրէնքների անխուսափելիութեան հանդէպ, այլ ճանաչելով նրանց և հետեւելով մարդուս կամքի ու մտքի այդին համարձակ կերպով ձգտել տեղծելու աւելի ու աւելի բարօրութիւն բոլորիս համար։ Չի կարելի ոչնչացնել մահը, բայց կեանքը կարելի է և պէտք է անընդհատ լաւացնել։



**Գիտողութիւնը եւ փորձը, որպէս գիտութեան աղբիւրներ.** — Ինչպէս են գտնում բնութեան օրէնքները։ Մարդուս ուսումնասիրած երեւոյթները կարելի է բաժանել երկու տեսակի։ Երեւոյթների մի չարքի մէջ նա չի կարող ոչինչ փոխել իր կամքով և պէտք է նրանց ուշադիր ուսումնասիրէ. այնպէս, ինչպէս նրանք ներկայանում են բնութեան մէջ։ Երկնային մարմինների չարժումը ուսումնասիրելու համար նա ունի միայն մի միջոց — նայել նրանց վրայ հասարակ աչքով կամ հեռադիտակով։ Նոյնպէս և օդի չարժումը երկրի մակերեւոյթի վրայ ուսումնասիրելու համար մարդս կարող է միայն դիտել, ո՛րտեղից և ի՛նչ պայմաններով փչում են քամիները։ Նա անկարող է փոխել քամիների ոյժը և ուղղութիւնը տեսնելու համար թէ ինչ դրսից կը գայ դրանից։ Մի խօսքով, բնութեան մէջ կան այնպիսի երեւոյթներ, որոնց ուսումնասիրել կարելի է միայն հասարակ դիտողութեամբ։ Ճանաչել նրանց կարելի է դիտողութեան միջոցով(*)։

---

(*) Պէտք է ասել, որ բնութեան մարդկային ազդեցութեան ըստ երեւոյթին անմասչելի երեւոյթների ծրջանակում անգամ մարդուս միտքը եւ կամքը սկսում են արտայայտել իրանց զօրութիւնը։ Ինչ կարող է աւելի սարսափելի լինել նոզագործի համար քան կարկուտի ամպը, որ մի բանի րոպէում ոչնչացնում է նրա ցանքը, երկար ամիսների աշխատանքի արդիւնքը, եւ որ մասնում է նրան հաղցի եւ զոհողութիւնների։ Անցնում է կարկտի այդ ամպը երկնքով «բնութեան անողոք օրէնքի» ոյժով եւ կարծես այդ անողոքութեան փառքը պահպանելու համար թափում է կարկուտը գիւղացու արտերի վրայ, այլ ոչ անմեղ հողի վրայ, որ նրանց կողքին է։ Թուում է թէ խելոք գիւղացուն մնում է միայն խոնարհուել եւ ապասել անխուսափելիին։ Սակայն ահա գտնւեց միջոց եւ կարկտի այդ աճուկի ամպի դէմ։ Իտալիայում, Ֆրանսիայում եւ Շւեյցարիայում խաղողի բանկագին այգիները զինւած են այժմ բազմաթիւ բնդաւօդներով, որոնք շարած են խաղողի այգիներում որոշ տարածութեան վրայ իրարից։ Հէնց որ երկնքում երեւաց կարկտի ամպը բնդաւօդամիգներ կանգնում են իրանց տեղերը եւ երբ ամպը բաւականաչափ մօտենում

*Բայց բնութեան մէջ կան և այնպիսի երեւոյթներ, որոնց մարդս կարող է վերաբերմունք արհեստականօրէն, կամ պայմաններ, որոնց նա կարող է փոփոխութեան ենթարկել կամայականօրէն: Այնպէս, օրինակ, սրկած խըմելու ընդհանրը կարելի է վերաբաշխել որոշ բաժանութիւնից խմելու վայր գնելու միջոցով: Ընդհանրապէս, մարմինների վայր ընդունելը ուսումնասիրելու համար բնաւ հարկաւոր չէ սպասել, մինչև որ այս կամ այն ապրանքան կ'ընդունի դասին երեւոյթի բնական ընթացքի շնորհիւ: Ապրանքները կարելի է մեր կամքով ստիպել վայր ընդունել:*

*Նոյնպէս և, օրինակ, ջրի՝ հացահատի զարգացման ընթացքի վրայ ունեցած ազդեցութիւնը ուսումնասիրելու համար հարկաւոր չէ դիտել տարէ տարի թէ անձրեւների որպիսի քանակութեան ժամանակ ինչպիսի բերք է լինում: Աւելի դիւրին է այդ նպատակով փորձնական ցանքեր անել, այսինքն միատեսակ հողաբաժիններ վրայ ցանել միատեսակ սերմնացու, ոռոգելով նրանց արհեստական կերպով ջրի տարբեր քանակութիւններով: Այստեղ արդէն իսկոյն կ'երեւայ թէ ինչքան ջուր է հարկաւոր հացահատի ամենալաւ զարգացման համար: Այդ երեւոյթները, որոնք կարող են վերաբաշխուել կամ ուրիշ պայմանները կարելի է փոփոխել կամայականօրէն, ուսումնասիրուում են փորձի միջոցով: Հետեւապէս, փորձը մի այնպիսի դիտողութիւն է, որի ժամանակ դիտող երեւոյթի պայմանները կարող են փոփոխել դիտողի կամքով:*

---

է, սկսում են կրակել նրա վրայ: Օդի ցնցումից ամբը թափւում է գետին որպէս անձրեւ կամ մանր կարկուտ, որ վնասակար չէ: Նկատենք նոյնպէս, որ լուրջ գիտականները այժմ խօսում են *անձրեւը արհեստական կերպով առաջացնելու* հնարաւորութեան մասին օդի վերին խաւերի ցնցման միջոցով: Եւ իրօք, ո՞րն է այն ոյժը, որ կարող է ասել մարդկային մտքին.— Սա է ձո սահմանը, որից դէն չես անցնի:



*Այսպիսով, դիտողութիւնը եւ փորձը միակ միջոցներն են ուսումնասիրելու բնութեան երեւոյթները և մեր գիտութեան միակ աղբիւրը: Ուստի և վերեւում դրած հարցին՝ թէ ի՞նչպէս ենք մենք ճանաչում բնութեան օրէնքները, մենք պիտի պատասխանենք.—Բնութեան օրէնքները մենք ճանաչում ենք դիտողութեան և փորձի միջոցով:*

**Օրէնքներ եւ ենթադրական օրէնքներ.** — *Ճանաչել օրէնքը իսկոյն այնքան էլ հեշտ բան չէ, որովհետև նա արտայայտում է բազմաթիւ երեւոյթների պատճառական կապակցութիւնը: Եւ իրօք, բնաւ բաւական չէ նայել երկնքին՝ աստղերի չարժման օրէնքը իսկոյն ճանաչելու համար. բաւական չէ քարը նետել, որպէս զի նրա ընկնելուց մենք իսկոյն հետեւցնենք մարմինների վար ընկնելու օրէնքը:*

*Երեւոյթների պատճառական կապակցութիւնը պարզելու համար պէտք է բազմաթիւ դիտողութիւններ, բազմաթիւ փորձեր անել: Իսկական օրէնքի բնորոշ յատկութիւնն է նրա անփոփոխութիւնը, — մի անգամ ճանաչած լինելով, նա հաստատւում է յետագայ դիտողութիւններով և փորձերով: Երկնային մարմինների չարժման օրէնքի հիման վրայ գիտականը հաշւում է, որ այսինչ ժամին լուսինը կը լինի արեւի և երկրի միջև, և որ այդ պատճառով լուսինը կը ծածկէ մեզանից արեգակը և տեղի կ'ունենայ արեւի խաւարում: Եւ մինչև օրս էլ դիտողութիւնը հաստատել է այդ հաշւի ճշտութիւնը:*

*Հենց նոյն օրէնքի հիման վրայ մի գիտնական հաշւեց, որ այս ինչ ժամին երկնքի այս ինչ մասում կը լինի մի անյայտ գիտաւոր աստղ, մինչեւ այդ մարդկային աչքը չէր տեսել: Նայելով հեռադիտակով և գտան անտեսանելի գիտաւոր աստղը: Հենց այդ պատճառով որ*

1569
39

СОЮЗ ССР А.

իւրաքանչիւր նոր դիտողութիւն հաստատում է նրա ճշտութիւնը, երկնային մարմինների չարժման օրէնքը, որ հիմնած է նրանց փոխադարձ ձգողութեան վրայ, ամենալաւ օրինակն է բնութեան անխորտակելի օրենքի:

Երեւոյթների ահագին քանակութեան համար, որոնց կարելի է ուսումնասիրել փորձի միջոցով, նոյնպէս ըստ նրան են լաւագոյն օրէնքները: Սակայն բացի այդ և բազմաթիւ այլ երեւոյթներից, որոնց մասին մենք առնառաջ այժմ ոչինչ չ'գիտենք, կան և այնպիսիները, որոնք կարդին ուսումնասիրուած չեն չորրորդ դիտողութեան և փորձի պակասութեան: Անհնար է ամէն մի երեւոյթ ենթարկել յաճախակի դիտողութեան, նոյնպէս և անհնար է յաջողեցնել ամէն մի փորձ: Յայտնի է, օրինակ, որ, երբ մարդս մեծաւոր աշխատանքով է զբաղուած, մեր ուղեղի մէջ կատարւում է ինչ-որ մի բան, որովհետև արիւնը դէպի գլուխն է հոսում և ամբողջ գլուխը սկսում է այրել: Բայց անմիջական փորձով հետազօտել այն փոփոխութիւնները, որոնք կատարւում են ուղեղում մեծաւոր աշխատանքի ժամանակ, անկարելի է, որովհետև չի կարելի բանալ մտածող մարդու գանգը և տեսնել թէ ինչ է այնտեղ կատարւում: Եթէ օրէնքները կարդին իրանց բոլոր մանրամասներով ու առանձնայատկութիւններով ուսումնասիրուած չեն, նրանց պատճառական կապակցութիւնը կարող է արտայայտել միայն ենթադրօրէն: Ուրիշ խօսքով, անկատար հետազօտած երեւոյթների համար կարելի է դուրս բերել միայն ենթադրական օրէնքներ: Ենթադրական օրէնքները — հիպօթեզները — կարող են դուրս գալ և՛ ճիշտ և՛ սխալ: Եթէ յետագայ դիտողութիւնները և փորձերը հաստատում են նրանց լաւագոյն, նրանք դառնում են իսկական օրէնքներ, որոնք արտայայտում են դիտող երեւոյթների իսկական պատճառական կա-



պակցութիւնը: Իսկ եթէ յետագայ դիտողութիւնները և փորձերը չեն հաստատում ենթադրական օրէնքները, այդ դէպքում — նայելով հանգամանքին — նրանք կամ ուղղուում են կամ բոլորովին դուրս են դցւում դիտութիւնից, որպէս իրականութեան անհամապատասխան ենթադրութիւններ:

Մօտենանք այժմ այն խնդրին, որ մեզ հետաքրքրում է, այսինքն դրամատիրական արդիւնաբերութեան վրայ հիմնուած հասարակութեան զարգացման ընթացքի ուսումնասիրութեան: Ամէն մարդու համար էլ պարզ է, որ հասարակական զարգացումը ուսումնասիրելու համար չի կարելի դիմել անմիջական փորձին, ինչպէս այդ անում են, երբ ուսումնասիրում են զարգացման բազմաթիւ այլ երեւոյթները: Կենդանու կամ բոյսի զարգացման պայմանները կարելի է փոփոխել կամայականօրէն, բայց չի կարելի կամայականօրէն փոխել հասարակական զարգացման պայմանները: Այսպիսով հասարակական զարգացման երեւոյթների ուսումնասիրութեան համար կայ մի ճանապարհ — դիտողութիւնը: Երկնային աստղերի չարժման օրէնքի օրինակից մենք տեսանք, որ դիտողութիւնը կարող է շատ կարեւոր և ճիշտ օրէնքներ գտնել տալ: Բայց դրա համար անհրաժեշտ է, որպէս դի դիտողութիւնը կարելի լինի կրկնել շատ անգամներ, այնքան անգամ, որքան անհրաժեշտ է դիտող երեւոյթների պատճառական կապակցութիւնը լիակատարօրէն պարզելու համար: Համապատասխանո՞ւմ են արդեօք այդ անհրաժեշտութեանը հասարակական զարգացման երեւոյթները: Դժբաղդաբար, ո՛չ: Հասարակական զարգացումը կատարւում է չափազանց դանդաղ, այնպէս որ հարկաւոր են տասնեակ, իսկ երբեմն հարիւրաւոր տարիներ, որպէս դի որոշ երեւոյթների հետևեն մեկը միւսը երեւոյթներ, որպէս դի հասարակական կեան-

քի սրոչ ձեւերին հետեւելն այլ, աւելի լարձր ձեւեր։ Իսկ որովհետեւ դրամատիրական արդիւնագործութիւնը սկսեց զարգանալ ընդամէնը միայն հարիւր տարի սրանից առաջ և դոյութիւն ունի ոչ բոլոր երկիրներում, ուստի և նրա զարգացման գիտական ուսումնասիրութեան համար դիտողութեան միջոցով դեռ չատ քիչ ժամանակ և նիւթ է եղել։

Բանից դուրս է գալիս, որ դրամատիրական հասարակութեան զարգացումը բոլորովին անմասնելի է ուսումնասիրութեան՝ փորձի միջոցով, իսկ նրան դիտողական միջոցով լայնօրէն և խորապէս ուսումնասիրելու համար՝ բաւականաչափ ազատութիւն չկայ։ Այդ դրութեան անմիջական հետեւանքն այն է, որ այդ զարգացման բոլոր կողմերը մեզում մեզ չեն պարզուած։ Հասարակական կեանքի որ երեւոյթները սրանց են հետեւում, և որտեղ է նրանց պատճառական կապակցութիւնը — դրա համար, չատ դէպքերում, աւ այժմ կարելի է միայն ենթադրութիւններ անել։ Այնուամենայնիւ Մարքսը և նրա ընկեր Էնգելսը որոշ դիտողութիւնների հիման վրայ նախագծեցին դրամատիրական հասարակարգեան եւթադրական օրէնքը։ Այդ օրէնքը ենթադրական է, որովհետեւ այն երեւոյթները, որոնց պատճառական կապակցութիւնը նա արտայայտում է, բաւականաչափ պարզուած չեն, ուստի և նրանց պատճառական կապակցութիւնը չի կարող ապացուցած համարուել։ Որպէս ենթադրական օրէնք նա կարօտ է ստուգման յետագայ դիտողութիւնների միջոցով։ Յետոյ մենք կը տեսնենք թէ ո՛րտեղ նա արդարացի դուրս եկաւ և ո՛րտեղ նա սխալ։ ստուգման և լրացման ենթարկուի։

Այժմ անցնենք Մարքսի և Էնգելսի դրամատիրական հասարակութեան զարգացման այդ ենթադրական օրէնքին՝ նախապէս չափ պարզ և ճշդրիտ մեկնութեան։



## 2. ԴՐԱՄԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Աշխատանքի արդիւնաւէտութիւնը.** — Մենք տեսանք, որ հայրենասիրի զարգացման համար անհրաժեշտ են մի շարք պայմաններ (խոնաւութիւն, ջերմութիւն, պարարտ հող, արեւի լոյս), աւանդ որոնց նրա զարգացումը կամ բոլորովին տեղի չի ունենում կամ չի նպաստում իր բնական վախճանին։ Զարգացման իւրաքանչիւր երեւոյթ — լինի այդ բոյսի, կենդանու կամ հասարակութեան զարգացումը — միեւնոյն է — ունի իր էական պայմանները, որոնց ներկայութիւնը անհրաժեշտ է, որպէս զի զարգացումը կարողանայ ընթանալ իր ճանապարհով։ Արդ՝ որո՞նք են դրամատիրական հասարակութեան զարգացման պայմանները։ Որովհետեւ հասարակութիւնը դրամատիրական է դառնում միայն այն ժամանակ, երբ նրա մէջ աւաջ է գալիս դրամատիրական արդիւնագործութիւնը, — ուստի այդ հարցը կարելի է անմիջապէս և դնել այսպէս.—Որո՞նք են դրամատիրական արդիւնագործութեան զարգացման պայմանները։

Դրամատիրական արդիւնաբերութիւնը սկսում է այնտեղ, որտեղ արդիւնաբերութեան միջոցները դրամագլուխ են դառնում։ Իսկ դառնում են նրանք դրամագլուխ այն ժամանակ, երբ նրանք պատկանում են ոչ թէ իրան՝ արդիւնաբերողին, այլ այն անձնաւորութեան, որ գործադրում է նրան ուրիշի աշխատանքի միջոցով չատ տանալու համար։ Ոչ մի կասկած չը կայ նրանում, որ այդ ժամանակից, երբ գոյութիւն ունի հասարակութիւնը, աւելի ուժեղները և աւելի խորամանկները չատ էին աւելի թոյլերի ու աւելի մրամիտների ձեռքից նրանց արդիւնաբերութեան միջոցները։ Բայց որպէսզի արդիւնագործ-

ծովթեան միջոցները դրամագլուխ դառնան, դեռ բաւական չէ խլել նրանց ուրիշի ձեռից. պէտք է դեռ ստիպել այդ ուրիշին աշխատել նրանից խլուած արդիւնաբերութեան գործիքներով՝ նրանից չար առանալու նպատակով: Իսկ չար առանալ կարելի է միայն այն ժամանակ, երբ աշխատող մարդը կարող է արտադրել աւելի, քան հարկաւոր է նրա սեփական ապրուստի համար: Ուրիշ խօսքով, արդիւնաբերութեան միջոցները կարող են դրամագլուխ դառնալ այն ժամանակ, երբ աշխատանքի արդիւնաւէտութիւնը հասել է արդէն այնպիսի աստիճանի, ուր մարդս արտադրում է աւելի, քան հարկաւոր է նրան ապրուստի համար: Այսպիսով, աշխատանքի արդիւնաւէտութիւնը դրամատիրական արդիւնաբերութեան զարգացման առաջին հիմնական պայմանն է:

Աշխատանքի արդիւնաւէտութիւնը դրամատիրական արդիւնաբերութեան զարգացման համար ունի նոյն նշանակութիւնը, ինչպէս, օրինակ, խոնաւութիւնը հացաբոյսի զարգացման համար: Եթէ խոնաւութիւն կայ, հացահատիկը ուռչում է և աճում: Բայց նրա յետագայ բախտը կախուած է այն բանից՝ թէ կան արդեօք բոյսի զարգացման համար անհրաժեշտ մնացած պայմանները: Եթէ նրանք չը կան, այնպէս էլ նա կը վերջանայ իր դոյութիւնը, չը հասնելով լիակատար զարգացման: Նոյնպէս և աշխատանքի արդիւնաւէտութեան որոշ աստիճանի վրայ դրամատիրական արդիւնաբերութիւնը, այսինքն արդիւնաբերութիւնը, որ դոյութիւն ունի ոչ թէ արդիւնաբերողի սեփական կարիքներին բաւարարութիւն տալու, այլ ուրիշի աշխատանքից չար առանալու համար, կարող է սկսել հասարակութեան մէջ և իրօք սկսում է: Բայց միայն այդ պայմանը բաւական չէ, որպէս զի դրամատիրական արդիւնաբերութեան զարգացումը առաջ գնայ ամբողջ թափով:



**Աշխատանքի լայն բաժանման վրայ հիմնուած ապրանքային արդիւնաբերութեան հետևանքները.** — Հասարակական կեանքի սկզբում աշխատանքի արդիւնաւէտութիւնը կախուած է գլխաւորապէս այն բնական պայմաններից, որոնց մէջ նա գործադրւում է: Ձկով հարուստ ջրի մէջ ձկնորսը միևնոյն ժամանակի ընթացքում և միևնոյն աշխատանքի միջոցով աւելի ձուկ կ'որսայ, քան ձկով աղքատ ջրի մէջ: Պարարտ հողի վրայ միևնոյն պայմաններում գիւղացին աւելի ցորեն կը հաւաքէ, քան վատ հողի վրայ: Բայց հասարակութեան ամման և զարգացման հետ չարունակ նկատւում է աշխատանքի բաժանման զարգացումը, և սա է, որ, ինչպէս մեզ յայտնի է, դառնում է աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացման գլխաւոր խթանը: Իր կողմից աշխատանքի արդիւնաւէտութիւնը առաջ է բերում արդիւնքների փոխանակութիւնը և արդիւնաբերութիւնը փոխանակութեան համար — ապրանքների արդիւնաբերութիւնը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այնտեղ, որտեղ աշխատանքի բաժանում չը կայ, անհնար է և փոխանակութիւնը: Եթէ իւրաքանչիւր մարդ ինքն է արտադրում իր կարիքները հոգալու համար անհրաժեշտ բոլոր առարկաները, նրան բոլորովին հարկաւոր չէ փոխանակել նրանց ուրիշ արդիւնաբերողների հետ: Ընդհակառակը, եթէ ապրանքների փոխանակութիւնը դժուար է կամ անհնար, անհնար է և՛ աշխատանքի բաժանումը. անհնար է, հետևապէս, և՛ աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումը, և՛ արդիւնաբերութեան միջոցների վերածումը դրամագլխի: Ինչ մեծ չափ լայն փոխանակութիւնը, ուրեմն և արդիւնքների արտադրութիւնը փոխանակութեան համար — ապրանքային արդիւնաբերութիւնը — հնարաւոր է միայն կամ այն դէպքում, երբ շատ մեծ ազգաբնակութիւն է խտացած մի տեղում, կամ, երբ զանազան

ապրանքներ արտադրող առանձին հասարակութիւնների միջև դոյութիւն ունենն հաղորդակցութեան չատ յարմար միջոցներ։ Այսպիսով, լայն փոխանակութեան հնարաւորութեան, այսինքն ապրանքային արդիւնաբերութեան հնարաւորութեան հետ անմիջապէս կապւած աշխատանքի լայն բաժանումը դրամատիրական արդիւնաբերութեան զարգացման երկրորդ հիմնական պայմանն է։

**Գիտութեան մակերեւոյթը հասարակութեան մէջ.** — Աշխատանքի արդիւնաւէտութեան որոշ աստիճանը և լայն փոխանակութեան հնարաւորութիւնը դեռ բաւական չեն դրամատիրական արդիւնաբերութեան զարգացման համար։ Նրանց չնորհիւ դրամատիրական արդիւնաբերութիւնը կարող է ծագել և պահպանուել մի առժամանակ, բայց նրա զարգացումը անխուսափելիօրէն պէտք է կանգ առնի, ինչպէս կանգ է առնում հացաբոյսի զարգացումը, երբ հացահատիկը ընկնում է պարարտ հողի տեղ խոնաւ աւազի մէջ։

Արդիւնաբերութիւնը, ինչպէս և զարգացման իւրաքանչիւր երեւոյթ, չի կարող կանգնած մնալ մի տեղ. նա պէտք է առաջ գնայ անընդհատ յարդանալով, վերածել նախ կատարեալ ձեւից աւելի կատարեալ ձեւի։ Արդիւնաբերութեան կատարելագործումը իրօք նշանակում է աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացում, ապառման առարկաների արտադրութեան համար անհրաժեշտ աշխատանքի քանակի կրճատման միջոցով։ Այդ կրճատումը կարող է տեղի ունենալ կամ աշխատանքի բաժանման լայնացման կամ մարդկային աշխատանքը մեքենայի աշխատանքով փոխարինելու միջոցով։ Իրօք, ինչպէս մեզ արդէն յայտնի է, աշխատանքի բաժանման լայնացումը տեղի է ունենում մեքենաների ներմուծմամբ։ Բայց մեքենան արդիւնաբերութեան մէջ մտցնելու համար պէտք է նախ նրան ստեղծել։ Իսկ ստեղծել կարելի



է միայն այն դէպքում, երբ հասարակութեան մտաւոր զարգացումը եւ գիտութիւնը հասել են բաւական բարձր աստիճանի։

Յաճախ կարելի է լսել այն կարծիքը, թէ արդիւնաբերութեան կարիքներն են ստեղծում գիտութիւնը։ Այս կարծիքը մասամբ ճիշտ է։ Ոչ թէ ինքը գիտութիւնը առաջ է գալիս արդիւնաբերութեան կարիքներից, այլ միայն նրա գործադրութիւնը արդիւնաբերութեան համար։ Քիմիայի հիմնական օրէնքները գտնւած են ոչ թէ այն պատճառով, որ կէս-դար յետոյ պէտք է առաջ գար քիմիական արդիւնագործութիւնը, այլ ընդհակառակը, խոշոր քիմիական արդիւնագործութիւնը կարող է առաջ գալ և առաջ եկաւ միայն չնորհիւ այն բանին, որ քիմիան, որպէս գիտութիւն, հասել էր զարգացման բարձր աստիճանի։ Ելեկտրականութեան գիւտը արւած էր մի քանի տասնեակ տարի աւելի առաջ, քան նրան սկսեցին գործադրել արդիւնաբերութեան մէջ։ Կարելի է տասնեակ օրինակներ ցոյց տալ թէ ինչպէս նոր գիտական գիւտերը ստեղծեցին նոր արդիւնաբերութիւններ։ Արդիւնաբերութեան կարիքները առաջ են բերում այսպէս կոչւած գործնական գիտութիւնները, այսինքն գուտ գիտութեան եղրակացութիւնների կիրառութիւնը արդիւնաբերութեան ձեւերի մշակման և բարելաւման համար (տեխնոլոգիա)։ Բայց գուտ գիտութիւնը ստեղծւում է ոչ թէ արդիւնաբերութեան կարիքներով, այլ արդիւնք է մարդու ձգտման դէպի ճանաչողութիւնը. ձգտման, որ ունի աւելի ընդհանուր պատճառ։ Դրա մասին խօսք կը լինի ներքևում՝ «Ինչն է հասարակական զարգացման խթանը» գլխում։

Արդիւնաբերութեան կարիքների և գիտութեան միջև եղած յարաբերութիւնների մասին մեր ասածի ճշտութիւնը հաստատւում է և նրանով, որ կան այնպիսի

արդիւնաբերութիւններ, որոնց հասել են փոքրիկ միջոցով անցիչների ժամանակից ի վեր, բայց որոնց գիտական հիմքը ճանաչել և ուսումնասիրել է մեր ժամանակում: Գիտու արատաղրութիւնը խաղողից և անհատական տնեից համ չքների արատաղրութիւնը չաքարային ու ալիւրային նիւթերից կարող է ամենալաւ օրինակը ծառայել: Երկրագնդի բոլոր ժողովուրդները ամենահին ժամանակներից ի վեր գիտցել են արտադրել տնեից համ չքներ և լայն չափերով գործածել նրանց: Սառածաչունչը նոյնիսկ անհրաժեշտ է համարել պատմել մեզ իսրաէլ համար, թէ ինչպէս ողորմած հոգի Նոյը չարիից աւելի խաղողի ջուր խմեց և ինչ դուրս եկաւ դրանից: Այդպիսի հին և լայն տարածուած արդիւնաբերութիւնը միշտ ունեցել է կատարելագործման իր կարիքները, որոնք պէտք է առեղծէին մի ամբողջ գիտութիւն խմորման մասին: Մի այդպիսի գիտութիւն իրօք առաջ եկաւ, բայց առաջ եկաւ միայն մի քանի տասնեակ տարի սրանից առաջ մի շարք գիտութիւնների կապակցութեամբ. գիտութիւնների, որոնք կամ շատ հետաւոր և կամ ոչ մի առնչութիւն չ'ունէին արդիւնաբերութեան հետ:

Այսպիսով, գիտելիքների որոշ աստիճանը հասարակութեան մէջ դրամատիրական արդիւնաբերութեան զարգացման երրորդ պայմանն է: Որքան շատ են հասարակութեան մէջ ընդհանուր օրէնքները ուսումնասիրող և ճանաչող մարդիկ, այնքան աւելի հնարաւորութիւն է առեղծւում դրամագլխի համար չհանգրծելու նրանց գիտութիւնը արդիւնաբերութեան կատարելագործման և լայնացման համար: Եւ իրօք՝ մենք տեսանում ենք, որ դրամագլուխը ագահութեամբ յարձակւում է ամեն մի նոր գիտական գիւտի վրայ և իսկոյն փորձում է՝ թէ չի՞ կարելի արդեօք հիմնել նրա վրայ որևէ նոր չտահտա արդիւնաբերութիւն կամ կերտուել նրան հին բարելաւման



համար: Շատ յաճախ այդ փորձերը ոչինչ հետեւանք չեն ունենում. որովհետև ոչ բոլոր գիտական գիւտերը կարող են իսկոյն գտնել իրանց գործադրութիւնը կեանքի մէջ: Բայց դրամագլուխը չի յուսահատւում և սպասում է յարմար րոպէի:

**Գործողութիւնների ազատութիւնը.** — Դրամատիրական արդիւնաբերութեան զարգացման վերոյիշեալ երեք պայմաններից զատ՝ կայ մէկը եւս, առանց որի սկսած դրամատիրական արդիւնաբերութիւնը չի կարող հասնել լիակատար զարգացման: Այդ պայմանը գործողութիւնների ազատութիւնն է: Հասարակութեան մէջ, որտեղ աշխատանքի բաժանումը զարգացած չէ, առանձին արդիւնաբերողները համարեա կախում չ'ունեն իրարից ոչ իրանց արդիւնաբերութեան, ոչ էլ իրանց գոյութեան մէջ: Հողագործը ստանում է իր հացը իր մշակած արտից, կաթը և միսը իր պահած անասուններից, քթանը և մահուդը պատրաստում է նրա կինը սեփական կտաւից և բուրդից, կօշիկները նա ինքն է չինում մասլաչ ծառից քաշած կեղեւից: Այդպիսի հողագործի համար բոլորովին միեւնոյն է թէ ինչ է կատարւում նրա անտեսութիւնից դուրս: Նա կարող է իր ամբողջ կեանքը անցկացնել իր վայրենի առանձնութեան մէջ, չըղգալով դրանից ոչ մի անյարմարութիւն: Բայց գործը բոլորովին այլ կերպարանք է ստանում, երբ աշխատանքի բաժանման չնորհիւ առաջ է գալիս արդիւնաբերութիւնը փոխանակութեան համար, երբ առաջ է գալիս ապրանքային արդիւնաբերութիւնը: Այստեղ արդէն մեր հողագործը չի կարող հանդիստ իր անկիւնում նստել և իր վայրենի անկիւնից դուրս չը գալ, նա ստիպւած է չարժւել: Նա ստիպւած է փոխանակել իր ապրանքները ուրիշ արդիւնաբերողների հետ, և դրա համար

չուկայ է բերում նրանց: Նրա համար այժմ միևնույնը չէ թէ ինչ է կատարում միւս արդիւնաբերողների մօտ, որոնց հետ նա վոխանակում է իր ապրանքները: Նա չահագրգռած է, որպէս զի նրանք արտադրեն իրանց ապրանքները հնարաւորին չատ նուազ աշխատանք թափելով, որովհետև այդ դէպքում նրանք իրանց ապրանքի համար էլ կը ստանան ապառնան նրա չունեցած առարկաների ամենամեծ քանակութիւնը: Իր կողմից նա յարմարուում է շուկայի պահանջներին:

Եթէ բարձրացաւ գարու պահանջը, նա կը ցանէ գարի՝ վարսակի փոխարէն. ապառնում է գարին, նա կը ցանէ հաճար: Այլապէս ապրանքը նրա ձեռքում կը մնայ, կամ նա ստիպուած կը լինի ծախել նրան չնչին գնով: Շարժելու, չուկայի պահանջներին յարմարելու համար արդիւնաբերողը, պարզ է որ պէտք է գոծողութիւնների ազատութիւն ունենայ:

Նրան հարկաւոր է, որպէս զի նրա գլխի վրայ չը լինի իշխանութիւն, որը կարող կը լինէր նրան ստիպել — ինչպէս այդ անում էր հին ժամանակներում — ծխախոտ անկել, երբ նա ցորենի կարիք ունի, կամ աշխատանքի ամենաստաք ժամանակ քչել նրան՝ ճանապարհները սարքելու և ծառերով զարդարելու՝ մի որևէ բարձրաստիճան անձնաւորութեան անցնելու առթով:

Արդիւնաբերողը, եթէ գործողութիւնների ազատութիւնից զուրկ է, իհարկէ նեղւում է իր անհատական գործերի մէջ, — բայց նա ընտրողութիւն անել չի կարող. նա արտադրում է, ինչպէս կարող է, միայն թէ սովամահ չը լինի: Այդպէս չէ դրամատիրոջ դրութիւնը: Եթէ հասարակ արդիւնաբերողին հարկաւոր է գործողութիւնների ազատութիւնը, դրամատիրոջ հարկաւոր աւելի եւս: Հասարակ արդիւնաբերողը աշխատում է իր մի զոյգ ձեռքերի միջոցով և արտադրում է մի քիչ աւել,



քան հարկաւոր է նրա սեփական և նրա ընտանիքի կարիքները հոգալու համար: Իսկ դրամատիրոջ համար աշխատում են բազմաթիւ ձեռքեր և արտադրում են նրա համար չատ ապրանքներ, որոնց վաճառքի համար նրան հարկաւոր է մեծ չուկայ: Շուկան դրամատիրոջ համար չափազանց զգայուն մի տեղ է, և նա ստիպուած է մեծ ճարպիկութիւն բանեցնելու, որպէս զի կարողանայ գնորդների պահանջներին յարմարուել: Ես հասկանալի է, որ որքան մեծ է դրամատիրական ձեռնարկութիւնը, այնքան աւելի է զգում դրամատէրը գործողութիւնների ազատութեան անհրաժեշտութիւնը, այլապէս նա չի կարողանայ ծայրը ծայրին հասցնել և կը գրկուի իր դրամագլխից: Իսկ եթէ չանկարծ դրամատէրի գլխին կանգնած է մի ահեղ ոյժ, որ նրան հրամայում է այս չանել, այն չանել և նեղում է նրան ամեն տեսակ տուգանքներով, որովհետև նա բանուորներին այնքան չի ճնշում կամ պահում է անբաւական էնժէնիր, — այդ դէպքում դրամատէրը չի կարող վաստակ լինել իր գործի համար և չի կարող ազատուել, որ գործադրած դրամագլուխը ազատած չահը կը տայ նրան, և չի կորսրի խպատ: Հասարակ արդիւնաբերողից դրամատէրը զանազանուում է նրանով, որ հասարակ արդիւնաբերողը ստիպուած է արտադրել ամեն տեսակ պայմաններում սովամահ չը լինելու համար: Դրամատէրը, ընդհակառակը, կարող է ընդհատել արտադրութիւնը, երբ վերջինս չահի տեղ միայն մեծ տեսակ անախորժութիւններ կարող է առաջ բերել. — նա այն ժամանակ աւելի հաշիւ ունի պահել իր մօտ դրամագլուխը և ծախսել նրան իր սեփական հաճոյքների համար, քան կորցնել նրան, այն էլ անախորժութիւններով: Ահա թէ ինչու՝ որտեղ չը կայ գործողութիւնների ազատութիւն, այնտեղ չի կարող դոյութիւն ունենալ լայն զարգացած դրամատիրական արդիւնաբերութիւն:

Սակայն դրամատիրական արդիւնաբերութեան կանոնաւոր ընթացքի համար դրամատիրոջ ոչ միայն հարկաւոր է իր սեփական գործողութիւնների մէջ ազատ լինել, այլ և անհրաժեշտ է, որ գործողութիւնների ազատութիւն դրւած լինի և այն «աշխատաւոր ձեռներին», առանց որոնց նա չի կարող գործ տեսնել: Նրան հարկաւոր է, որ «աշխատաւոր ձեռները» — որտեղից էլ լինի, միևնոյն է—անարգել նրա ձեռքի տակ լինեն — այնտեղ, որտեղ նրան պէտք է, այնքան, որքան նրան պէտք է: Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն այն, որ գոյութիւն ունենան արդիւնաբերութեան միջոցներից զուրկ արդիւնաբերողներ, այլ և այն որ ոչինչ չը խանգարէ նրանց չունկայ բերել իրանց ապրանքը — աշխատաւոր ոյժը:

Գործողութիւնների ազատութիւնը, որ դրամատիրական արդիւնաբերութեան զարգացման անհրաժեշտ պայմաններից մէկն է, չը պէտք է չփոթել բաղաքական ազատութեան հետ:

Քաղաքական ազատութիւնը հասարակական իրաքանչիւր անդամին ապահովում է ոչ միայն ամեն տեսակ գործողութիւններ կատարելու իրաւունքը — բացի իհարկէ այն գործողութիւններից, որոնք որևէ վնաս են հասցնում ինչպէս իրան՝ հասարակութեան, այնպէս էլ նրա ամեն մի անդամին, այլև նա տալիս է նրան իրաւունք մանակցելու հասարակական գործերը կառավարելու մէջ օրէնսդրական ժողովների ընտրութիւնների միջոցով (պարլամենտների, պետական դումաների), որոնց ենթակայ է երկրի կառավարութիւնը: Դրամատէրներին այդ ազատութիւնն չէ հարկաւոր: Ամենաանհամեմատ ինքնակալութեան ժամանակ նրանք վառաւորապէս առաջ են տանում իրանց գործերը և դգում են իրանց չափազանց լաւ, քանի դեռ ինքնակալութեան չաները համապատասխանում են նրանց սեփական չաներին:



փոխվել և կծել նրանք սկսում են միայն այն ժամանակ, երբ ինքնակալութիւնը, իր սեփական գործը առաջ տանելով, սոսկալած է լինում խանգարելու նրանց՝ անարգել կատարել իրանց կոչումը — ուրիշի աշխատանքից չան քամել: Այսպէս վերջ ի վերջոյ գործը հանում է բացարձակ կուի և, ինչպէս մեզ ցոյց է տալիս եւրոպական երկիրների պատմութիւնը, դրամատէրերը (բուրժուազիա) միշտ յաղթում են ինքնակալութեանը: Իրանց ձեռքը գցելով պետական իշխանութիւնը, դրամատէրերը մի կերպ տանում են քաղաքական ազատութիւնը, որպէս անխուսափելի չարիք, որովհետև նրանց բնաւ հարկաւոր չէ, որ աշխատաւորները, օգտուելով ազատութիւնից, կարողանան կազմակերպել և լայն չափերով զարգացնել իրանց դասակարգային ինքնագիտակցութիւնը:

Եւ իրօք, ամեն անգամ, երբ իշխող դրամատէր դասակարգին հնարաւորութիւն է ընծում սահմանափակել քաղաքական ազատութիւնը ի վնաս աշխատաւոր դասի, նա այդ անում է առանց խղճի խայթ զգալու:

Այսպիսով, գործողութիւնների ազատութիւնը, որ հարկաւոր է դրամատէրերին՝ և՛ իրանց, և՛ «աշխատաւոր ձեռների» համար, քաղաքական ազատութիւնը չէ, այլ այսպէս կոչած՝ բաղաքացիական ազատութիւնը, այսինքն՝ իրաքանչիւր մարդու իրաւունքը իր բարեհայեցողութեամբ տնօրինել իր սեփական աշխատանքը և ունեցածը: Դրամատիրական արդիւնաբերութիւնը չի կարող զարգանալ ճորտական կարգերում, որովհետև այն ժամանակ ինքը արտադրողը պատկանում է կալւածատիրոջ սեփականութեան նոյնպիսի իրաւունքով, ինչպէս արտադրութեան միջոցները, — նա «ճորտային հոգի» է: Իսկ դրամատէրին հարկաւոր է ոչ ճորտային հոգի, այլ «աշխատաւոր ձեռներ»: Այդ բնաւ միևնոյնը չէ: Ճորտային հոգու սեփականատէրը յանուն իր օգտի պէտք է նրա

մասին նոյնքան հոգ տանի, որքան և իր անասուններուն և ամեն տեսակ կայքերուն մասին, իսկ այդ յաճախ ձեռնտու չէ։ Անկասկած, կալւածատէրը դուրս էր հանում իր ճորտերից յաւելեալ արժէքը կոռու միջոցով։ Բայց դրա փոխարէն անվերրիւթեան ժամանակ նա պէտք է կերակրէր նրանց իր պահեստներից կամ թէ չէ՝ գնէր նրանց համար հայ իր սեփական փողով, այսինքն ծախսէր հաւաքած դրամագլխի մի մասը, առանց որևէ օգտի իր արդիւնաբերութեան զարգացման համար։ Այդ հանգամանքը ի միջի այլոց այն պատճառներից մէկն էր, որոնց չնորհիւ ճորտային տնտեսութիւնը չէր զարգանում, այլ համարեա դարեր չարունակ կանգնած էր միևնոյն տեղում։ Եւ ընդհակառակը, դրամատիրական արդիւնաբերութիւնը կարող է գոյութիւն ունենալ միայն այն ժամանակ, երբ նա զարգանում է։ Իսկ դրա համար հարկաւոր է, որ գոյութիւն ունենայ խիստ սահմանափակում արտադրողի և արտադրութեան՝ դրամագլուխ դառած գործիքների միջև. անհրաժեշտ է, որ դրամագլուխը ամէն անընդհատ և ոչ թէ ծախսի դրամատիրոջ տեսակէտից ցուրտ տեղը, այսինքն առտադրութիւնից դուրս, արտադրողների գոյութիւնը պահպանելու համար։ Իսկ այդ էլ հէնց տեղի է ունենում, երբ արտադրողը դառել է «աշխատաւոր ձեռներ», որոնք գնւում են շուկայում, ինչպէս և ամեն մի ուրիշ ապրանք։ Ճորտային կարգերում արտադրողը դեռ «տոպի» էր հաշւում — թէև ճորտային — և նրա չահերը պէտք է ինչպէս առնէին, թէկուզ ի վնաս արդիւնաբերութեան զարգացման։ Իսկ դրամատիրական կարգերում արտադրողը դառել է «իր» (աշխատաւոր ձեռներ), որ ծառայում է արտադրութեան։ Իրը մաշւեց, նրան դուրս են գցում։ Դրամատէրի աչքում մարդս գոյութիւն ունի արտադրութեան համար, և ոչ թէ ընդհակառակը։



Ինչ չափով ճորտատիրական կարգերը խանգարում են արտադրողին աշխատաւոր ձեռներ, արտադրութեան համար անհրաժեշտ «իր» դառնալու, նոյն չափով նրանք խանգարում են դրամատիրական արդիւնաբերութեան ներմուծման։ Ճիշտ նոյնպէս դրամատիրական արդիւնաբերութեան զարգացման, եթէ ոչ ներմուծման, խանգարում է այն ամենը, ինչ բանի կապում է մարդուս արտադրութեան միջոցների (համայնական կարգեր, պարտադիր վճարներ հողաբաժինների համար) կամ որոշ տեղի հետ (անցագրի—պասպորտի—սիստեմ)։

Մեր ասածներից արդէն պարզ է թէ ինչ պէտք է հասկանալ գործողութիւնների ազատութիւն ասելով, որ անհրաժեշտ է դրամատիրական արդիւնաբերութեան զարգացման համար։

Այսպիսով դրամատիրական հասարակութեան անարգել զարգացման համար հարկաւոր է, որ միաժամանակ գոյութիւն ունենան հետեւեալ չորս հիմնական պայմանները. 1. աշխատանքի արդիւնաւէտութեան այնպիսի աստիճան, որի ժամանակ աշխատաւորը արտադրում է աւելի, քան հարկաւոր է նրա անմիջական կարիքները հոգալու համար, 2. աշխատանքի լայն բաժանում, որ հիմնւած լինի ապրանքների լայն փոխանակութեան և ապրանքների փոխանակութեան ծառայող արտադրութեան վրայ, 3. հասարակութեան դիրութեան բարձր աստիճանը, որ հնարաւորութիւն տայ անընդհատ կատարելագործելու արտադրութեան ձեւերն ու միջոցները, և վերջապէս՝ 4. գործողութիւնների ազատութիւնը կամ քաղաքացիական ազատութիւնը, որ հասարակութեան իւրաքանչիւր անդամի համար հնարաւորութիւն կը տայ ձեղքելու իր գործունէութիւնը այն կողմը, որտեղ նա կարող է ամենից լաւ իրագործել իր չահերը։

Մարդկանց կազմակերպած հասարակութիւնները գոյութիւն ունեն հազարաւոր տարիներ: Բայց առաջին անգամ մարդկային պատմութեան մէջ երեւան եկան միաժամանակ այդ չորս պայմանները Սբեւմտեան Եւրոպայում անցեալ դարի սկզբին, երբ 1789 թ-ի ֆրանսիական մեծ Յեղափոխութեան բարձրացրած ալիքները տեղի տուին: Դրամատիրական արդիւնաբերութիւնը, որ առաջ կարող էր գոյութիւն ունենալ միայն սաղմային դրութեան մէջ, առաջին անգամ արագ չարժեց իր զարգացման ճանապարհով:

Դիմենք այժմ զարգացման այդ ընթացքի և նրանից բղխող՝ դրամատիրական հասարակութեան զարգացման ներքին օրէնքի մեկնութեան:

## 3. ԴՐԱՄԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

**Դրամագլխի կենտրոնացում.**—Ինչպէս վերեւում տեսանք, զարգացումը կայանում է երեւոյթների յաջորդական փոփոխման մէջ, երեւոյթների, որոնք, կապած լինելով իրար հետ, հետեւում են իրար հետզհետէ բարդանալով: Օրինակ, հացագործի զարգացման օրէնքը ուսումնասիրել նշանակում է ուսումնասիրել յաջորդական փոփոխումը երեւոյթների, որոնք տեղի ունեն նրա մէջ, ուսումնասիրել նրա կերպարանափոխութիւնները և պարզել նրանց պատճառական փոխադարձ կապակցութիւնը: Սրդ, որոնք են այն կերպարանափոխութիւնները, որոնց ենթակայ է դրամատիրական հասարակութիւնը, և որոնց ամբողջութիւնը կազմում է նրա զարգացումը:

Մենք ենթադրում ենք, որ դրամատիրական արդիւնաբերութիւնը ակսել է, և որ հասարակութեան մէջ



գոյութիւն ունեն այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են նրա լիակատար զարգացման համար:

Մենք ենթադրում ենք, որ «խելքը գլխին փակագործին», որի մասին խօսեցինք այս գրքի առաջին մասում, յաջողուել էր ճանկը գցել փակագործների մի տասնեակ, որոնք զրկուել են գործիքներից այս կամ այն պատճառով, և սակսել նրանց աշխատել որոշ վճարով իր արհեստանոցում: Ինչ հետեւանքներ կ'ունենայ այդ:

Այդ տասը փակագործները աշխատում են մի արհեստանոցում, աշխատում են ոչ ամեն մէկը իր համար ուզածի պէս, այլ միայն տիրոջ ցուցմունքների համաձայն: Գործատիրոջ կամքը համաձայնեցնում է նրանց գործողութիւնները, նրանք աշխատում են միասին, նրանք աշխատակցում են գործատիրոջ համար: Իսկ վերջինս ուշի ուշով հետեւում է իր օգտին և չուտ նկատում է, թէ որտեղ և ինչպէս կարելի է նրան աւելացնել: Իսկոյն նրա աչքին է ընկնում, որ նրա բանուորները չատ ժամանակ են կորցնում՝ չնորհիւ այն հանգամանքին, որ նրանցից իւրաքանչիւրը մի ամբողջ կողպէք է չինում: Նրանցից իւրաքանչիւրը ստիպուած է և՛ դարբնոց գնալ կողպէքի մասերը կտելու համար, և՛ չինել նրանց կոչտ-կոպիտ կերպով հասարակ խարտոցով և՛ զօդել որտեղ այդ հարկաւոր է, — և՛ վերջնականապէս պատրաստել մասերը միասին հաւաքելու համար: Եթէ մարդ մի գործիքով աշխատի, սկզբում «եղանակը» կը գտնէ և կարելի է արդէն ամբողջ օրը լաւ աշխատել: Իսկ եթէ մարդ չատ փոխէ գործիքները, ամեն անգամ նա ստիպուած պիտի լինի նորէն ու նորէն «եղանակը» որոնել, իսկ դրա համար բաւական ժամանակ կը կորչի: Մեր «խելքը գլխին» փակագործը կչտագտում է այդ բոլորը և ստիպում է իր բանուորներին այսպիսի հրաման. «Հիմիկ է, որքան իզուր տեղը գնայիք-եկաք դարբնո-

ցից արհեստանոց. Թող երկար ձեզանից պատրաստեն դարբնոցի մասերը դարբնոցում, հինգը՝ Թող չինեն, վերջացնեն նրանց, իսկ երկուսը հատուկ կողպէքներ»: Ա.յսպիսով, նա մտնում է իր արդիւնաբերութեան մէջ աշխատանքի այնպիսի բաժանում, որի ժամանակ իւրաքանչիւր բանւոր արտադրում է ոչ ամբողջ ապրանք, այլ միայն ապրանքի մի մասը:

Աշխատանքի հնարաւորական բաժանումից դանազանելու համար (այդ բաժանման ժամանակ իւրաքանչիւր արտադրող արտադրում է ամբողջ ապրանքը կամ մի քանի ապրանքներ) մենք «մանրը գլխին» փակագծում մտցրած աշխատանքի բաժանումը կոչում ենք մասնաւոր (մասնաւորական), որը — ինչպէս մենք տեսանք — անտեսում է բանւորների ժամանակը և այդ պատճառով նրանց աշխատանքը աւելի արդիւնաւէտ է դարձնում:

Եթէ իւրաքանչիւր վարպետ, աշխատելով մեր մանակ, կարող է օրական 5 կողպէք չինել, — աշխատանքի բաժանման ժամանակ մի արհեստանոցում աշխատող 10 վարպետները կը չինեն օրական ոչ թէ 50, այլ 70 կամ աւելի կողպէքներ:

Մտնելով իր արհեստանոցում աշխատանքի մանուածքային բաժանումը, տասը վարպետ վարպետների ճարպիկ գործատէրը անտեսում է իր օգտին ոչ միայն բանւորական ժամանակը, այլև իր բանւորների աշխատանքը: Աւանձին աշխատող արհեստաւորների հետ համեմատած — ինչպէս մենք այդ տեսանք արդէն գլխի առաջին մասից — նա անտեսում է իմաչիւ արհեստանոցի, գործիքների և հատ նիւթը գնելու մէջ: Ուրիշ խօսքով, իր տասը բանւորներին աշխատեցնելու համար նա պէտք է արտադրութեան աւելի քիչ գործիքներ բանեցնի, քան այն տասը վարպետները, որոնք աւանձին են աշխատում: Բայց արտադրութեան մէջ ոյնները — արհեստանոցը, գործիքները, երկաթը — նոյնպէս աշխատանքի արդիւնք են, միայն աշխատանքի, որը կատարած է կողպէքների արտադրութիւնից առաջ: Ուստի արհեստանոցի տէրը իր մօտ արտադրած իւրաքանչիւր կողպէքի համար կը ծախսէ արտադրութեան աւելի քիչ մէջոցներ, այլոնքն աւելի քիչ նախնական աշխատանք քան աւանձին աշխատող վարպետը:

Ա.յսպիսով, դրամատիրական արտադրութեան ներմուծման ամենաառաջին հետեւանքն է աշխատանքի արդիւնաւէտութեան կրկնակի բարձրացումը: Արտադրութեան մէջոցների աւելի լաւ չահագործութեան շնորհիւ, արտադրած ապրանքի ամէն մէկի վրայ ծախսւում է աւելի քիչ նախնական աշխատանք: Այդ կարելի է անուանել աշխատանքի արդիւնաւէտութեան աճուղդակի մեծացում: Իսկ աշխատանքի մանուածքային բաժանումից առաջանում է անտեսում բանւորական օրւայ, այսինքն աշխատանքի — անմիջապէս ապրանքի արտադրութեան մէջ: Այդ արդէն կը լինի աշխատանքի արդիւնաւէտութեան ուղղակի բարձրացում:

Սրանից առաջ են գալիս մի շարք հետեւանքներ: Աշխատանքի մանուածքային բաժանման ձեռնաւորութիւնը նկատելով, գործատէրը, լինէն լաւ լինէնան պարզ է, որ կ'աշխատի հնարաւորին չափ նրան առաջ առնել: Որքան աւելի քիչ է ամիսւած մարդս մտածելու իր աշխատանքի վրայ, որքան աւելի միատեսակ է նրա աշխատանքը, այնքան աւելի քիչ ժամանակ է նա գործ դնում նրա վրայ: Իսկ աշխատանքը միատեսակ ու պարզ դարձնել՝ կարելի է միայն աշխատանքի բաժանումը լայնացնելով:

Աշխատանքի բաժանման լայնացումը պահանջում

է բանուորների թվի ավելացում, որովհետև աշխատանքը բաժանել կարելի է միայն այն դեպքում, երբ կան մարդիկ, որոնց միջև կարելի է բաժանել: Բանուորների թվի ավելացումը իր կողմից պահանջում է արտադրության միջոցների ավելացում: 20 բանուորների համար անհրաժեշտ է ունենալ ավելի մեծ արհեստանոց, գործիքների և երկաթի ավելի մեծ քանակություն, քան 10-ի համար: Դրան համաձայն և ամբողջ արդիւնաբերութիւնը անխուսափելիորէն պիտի մեծանայ: Ուրեմն, աշխատանքի վանուփախտուրային բաժանումը անխուսափելիորեն առաջ է բերում դրամատիրական արդիւնաբերութեան դաշնացում:

Մանուֆակտուրային արդիւնաբերութիւնը կարող է ծագել միայն մանր արհեստից: «Խելքը գլխին» փականագործը քաշում էր դեպի իր արհեստանոցը իր գրկած եղբայրակցին ոչ թէ այն պատճառով, որ վերջինս մի զոյգ ձեռներ ունէր, այլ այն պատճառով, որ նա այդ ձեռներով գիտէր կողպէքներ չինել: Որքան էլ «խելքը գլխին» փականագործը ավելորդ գործիքներ և ավելորդ պատրէներ ունենար, նա կարող կը լինէր գրանից օրէ օր օգուտ սառնալ, միայն գործի դնելով փականագործներին, այսինքն բանուորներին, որոնք կարդին սովորել են փականագործացին արհեստը: Բայց երբ նա մայրից իր արհեստանոցում աշխատանքի մանուֆակտուրային բաժանում, գործը այլ կերպարանք սառացաւ: Իսկական փականագործը չինում է ամբողջ կողպէքը, այսինքն նա կարող է գնդանի վրայ կսել կողպէքի մասերը և նրանց իրար հաւաքել: Այդ աշխատանքներից մի քանիսը պահանջում են ավելի վարժութիւն ու հնարագիտութիւն, միւսները՝ ավելի քիչ: Կողպէքի թիթեղը կամ աղեղնաձեւ կոթը կսելը այնքան էլ դժուար բան չէ: Բայց



նրանց ուղղելը արդէն ավելի դժուար է, իսկ ամրացնել զսպանակը ու հաւաքել կողպէքը այնպէս, որ նա հեշտութեամբ փակվի և բացվի — դա մի գործ է, որ պահանջում է ավելի եւս մեծ հնարագիտութիւն: Նկատի ունենալով իր օգուտը, արհեստանոցի տէրը հրամայից երեք փականագործներին չխասնել միայն դարբնոցում. հինգին՝ դրսեն մասերը, իսկ երկուսին՝ հաւաքել կողպէքները:

Երբ գործը բաւականաչափ կարգի ընկաւ, գործատէրը տեսնում է, որ ոչ մի անհրաժեշտութիւն չը կայ, որպէսզի դարբնոցում աշխատող երեք բանուորները գիտենան ամբողջ փականագործացին արհեստը: Բոլոր ժամանակ թիթեղներ և աղեղներ կսելու համար կարիք չը կայ գիտենալ կողպէքի մասերը հաւաքելու եղանակը: Ճիշտ նոյնպէս կողպէքի մասերը սարքողներին կարիք չը կայ գիտենալ այդ մասերը հաւաքելու եղանակը: Դարբնոցի փականագործներին կարող են փոխարինել հատարակ դարբիններ կամ փականագործի այն աշակերտները, որոնք բացի կսելուց ոչինչ չը գիտեն: Գործատէրը այդ սիրով կ'անէ, որովհետև հատարակ դարբիններին կամ փականագործի աշկերտներին նա կը վճարէ ավելի քիչ, քան իսկական փականագործներին:

Այսպիսով, իր չարն ի նկատի ունենալով, գործատէրը հետզհետէ ձգտում է արտադրութեան համար անհրաժեշտ աշխատանքը ավելի պարզ դարձնել, որովհետև որքան ավելի պարզ է աշխատանքը, այնքան ավելի քիչ նա արժէ: Աշխատանքի լիակատար պարզացումը տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ արտադրութիւնից չի պահանջվում ոչ ճարպիկութիւն, ոչ հնարագիտութիւն և առհասարակ ոչ մի նախընթաց պատրաստութիւն, երբ նա դառնում է դրամատէրի համար հատարակ աշխատաւոր ոյժ, որից պահանջվում է միայն մի բան — հսկանալ և կատարել գործատէրոջ հրամանները:

Աշխատանքի այդպիսի պարզացումը ձեռք է բեր-
ւում մեքենայի միջոցով։

Մեքենան փոխարինում է արհեստաւորի աշխա-
տանքը, նա իր մեքենական գործիքների միջոցով արագ
ու անդադար անում է այն, ինչ մարդկային ձեռները
սովորում են անել միայն երկար նախընթաց վարժու-
թիւնից յետոյ։ Բաւական է, որ դրամատիրոջ յաջողւեց
փոխարինել արհեստաւորի աշխատանքը մեքենայով, և
նա այդպէս մի քարով մի քանի նապաստակ է սպանում
միանգամից։ Այստեղ մենք մատնացոյց կ'անենք այն,
որ մի կողմից մեքենան բարձրացնում է մի քանի ան-
գամ յօգուտ դրամատէրի նրա բանւորների աշխատանքի
արդիւնաւէտութիւնը, իսկ միւս կողմից նա զարձնում
է նրան մանր արհեստից անկախ, և հնարաւորութիւն է
տալիս նրան գործադրել արդիւնաբերութեան մէջ հատ-
ւակ «աշխատաւոր ձեռներ», որոնց նա կարող է չուկա-
յում ճարել որքան ուզում է, մինչդեռ վարժ արհես-
տաւորների թիւը միշտ սահմանափակ է։ Այդ
անկախութիւնը մանր արհեստից՝ դրամատէրին անդրաժեշտ
է հետեւեալ պատճառով։ Եթէ արդէն աշխատանքի մա-
նուֆակտուրային բաժանումը առաջացնում է արտա-
դրութեան լայնացումը, մեքենաների ներմուծումը աւելի
ևս պիտի լայնացնի նրան։ Մեքենաները թանկ արժէք և
նրանց դիմը հանել կարելի է միայն այն ժամանակ, երբ
հնարաւորութիւն է առնդծւում արտադրելու և ծախու
հանելու ապրանքներ մեծ քանակութեամբ։

Ուրիշ խօսքով, մեքենաների ներմուծման համար
անդրաժեշտ է ոչ միայն այն, որ մանուֆակտուրային
արտադրութիւնը հասած լինի արդէն զարգացման որոշ
աստիճանի, այլ և այն, որ արտադրութիւնը կարողանայ
անարգել ծաւալւել աւելի լայն չափերով։ Իսկ դրա հա-
մար ի միջի այլոց հարկաւոր է, որ դրամատէրը «աշխա-
տաւոր ձեռների» պակասութիւն չը զգայ։



Մենք արդէն քննեցինք դրամատիրական արդիւնա-
բերութեան զարգացման կողմերից մէկը — նրա անընդ-
հատ շարնացումը։ Մենք տեսանք, որ մանր արհեստը
տեղի է տալիս մանուֆակտուրային արդիւնաբերութեան,
չնորհիւ այն հանգամանքին, որ ինքնուրոյն արտադրող
արհեստաւորների մի մասը դառնում է գործատիրոջ հա-
մար նրա արտադրութեան միջոցներով աշխատող վար-
ձու բանւոր։ Մի անգամ ամրանալով, մանուֆակտուրային
արդիւնաբերութիւնը անխուսափելիօրէն պէտք է առաջ
բերէ աշխատանքի մանուֆակտուրային բաժանում, որի
ժամանակ իւրաքանչիւր արտադրող կատարում է ամբողջ
ապրանքի արտադրութեան համար անդրաժեշտ աշխա-
տանքի միայն մի մասը։ Հետզհետէ արհեստաւորի աշ-
խատանքը պարզի ու աւելի պարզ դարձնելով, աշխա-
տանքի մանուֆակտուրային բաժանումը անդրաժեշտու-
թիւն է ստեղծում լայնացնելու արդիւնաբերութիւնը,
որովհետև մի մանուֆակտուրայում աշխատող բանւոր-
ների միայն մեծ քանակութեամբ կարելի է բաւականա-
չափ առաջ տանել աշխատանքի բաժանումը և պարզա-
ցումը։ Աշխատանքի վերջնական պարզացումը իրագոր-
ւում է այն ժամանակ, երբ մեքենան փոխարինում է
արհեստաւոր-արտադրողի ճարպիկութիւնը և հնարագի-
տութիւնը։ Արտադրող-արհեստաւորից մնում են միայն
աշխատաւոր ձեռներ, հասարակ աշխատաւոր ոյժ, որը
բնութեան ուրիշ ոյժերից (օր. ձիու կամ շոգիի ոյժից)
տարբերւում է նրանով միայն, որ կարող է հսկանալ
և կատարել դրամատէրի հրամանները։ Մեքենաների
գործադրութիւնը իր կողմից պահանջում է արդիւնա-
բերութեան անընդհատ լայնացում, որովհետև միայն մեծ
չրջանառութեան ժամանակ կարելի է մեքենաների հա-
մար մեծ ծախսեր անել։ Միայն այդ ժամանակ դրամա-
տիրական արդիւնաբերութիւնը ծաղկում է իր ամբողջ

լայնութեամբ: Մանր արհեստից առաջ է գալիս խոշոր մեքենային արդիւնաբերութիւնը:

Տեսնենք այժմ թէ ինչպէս է մանր արդիւնաբերութիւնը տեղի տալիս խոշորին:

Ինչպէս առանձին աշխատող արհեստաւորը, այնպէս էլ մանուֆակտուրայի տէրը արտադրում է արդիւնքները ոչ իր սեփական ապրուստի, այլ փոխանակութեան կամ ծախու համար. — նրանք դրաւած են ապրանքների արտադրութեամբ: Սեփական կարիքները հոգալու համար գործն ցանող հողագործի մօտ արդիւնաբերութիւնը վերջանում է ապառումով, — նա գործից աւելի է ապում, աւելորդ հաց է ուտում և ուտում է այդ հացը, բայց արհեստաւորի և մանուֆակտուրայի սիրոջ համար նրանց արտադրած ապրանքները այդ տեսակէտից ոչինչ նշանակութիւն չունեն, — ապրանքները նրանց համար միայն այն չափով են կարեւոր, որ չափով նրանց կարելի է փոխանակել կամ ծախել: Արհեստաւորի և մանուֆակտուրայի սիրոջ համար արդիւնաբերութիւնը վերջանում է ապրանքների վաճառուռնով: Մանելով արտադրութեան մէջ, դրամագլուխը նրան փոխհատուցութեան է ենթարկում, և մինչ արդէն վերնում անանք, թէ ինչով է մանուֆակտուրային արդիւնաբերութիւնը գանազանւում մանր արհեստից: Հարց է ծագում, ինչպէս է արտադրութեան մէջ եղած այդ գանազանութիւնը ազդում վաճառման վրայ, դէպի որը ձգտում են միաչափ և մանուֆակտուրան և արհեստաւորը:

Մանր արհեստի հետ համեմատած մանուֆակտուրային արդիւնաբերութիւնը հնարաւորութիւն է տալիս աւելի լաւ չհանդուրժելու արտադրութեան միջոցները, այսինքն նրանց մէջ մարմնացած անցեալ աշխատանքը անտեսել և բաժանման միջոցով աշխատանքը աւելի պարզ



դարձնել, այսինքն արդիւնաբերութեան մէջ գրաւած բանուորների ներկայ աշխատանքը ամրապնդել:

Մանուֆակտուրան ուղղակի կամ անուղղակի կերպով բարձրացնում է աշխատանքի արդիւնաւէտութիւնը: Իսկ որովհետև ապրանքի արժէքը որոշւում է նրա արտադրութեան համար անհրաժեշտ աշխատանքի քանակով, ուստի մանուֆակտուրային եղանակով արտադրուած ապրանքների արժէքը կը լինի աւելի ցածր, քան արհեստաւորական եղանակով արտադրուած ապրանքների արժէքը:

Սրանից պէտք է հետևցնել այն, որ վաճառման ժամանակ մանուֆակտուրիստը իր ապրանքը աւելի էժան կարող է ծախել, քան արհեստաւորը: Աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումը առաջացնում է արտադրուած ապրանքների քանակութեան աւելացումը և առաջարկի մեծացումը: Ուստի չուկայում պէտք է տեղի ունենայ մրցում վաճառողների մէջև և որպէսզի ապրանքը ծախւի, արհեստաւորը ստիպուած կը լինի վաճառել նրան մանուֆակտուրիստի ծախած գնով, այսինքն ի վնաս իրան:

Մի անգամ սկսելով գործը, մանուֆակտուրիստը բնականաբար ձգտում է լայնացնել նրան, գործադրելով ստացած չահի մի մասը արտադրութեան նոր միջոցներ ձեռք բերելու և բանուորների աւելի մեծ քանակ վարձելու համար: Արդիւնաբերութեան լայնացման չնորհիւ կրկին բարձրանում է աշխատանքի արդիւնաւէտութիւնը, չուկայ է հանւում ապրանքների աւելի մեծ քանակութիւն, ապրանքների, որոնց արժէքը կրկին ընկնում է: Եւ կրկին արհեստաւորը ստիպուած է մանուֆակտուրիստի յետևից վազելու: Որքան աւելի հետու, այնքան աւելի վատ: Մանուֆակտուրիստը առաջ է գնում հակայական քայլերով արդիւնաբերութեան լայ-

նացման և աշխատանքի արդիւնաւետութեան բարձրացման ճանապարհով և լինում է չուկան ապրանքների ամբողջ դէզերով, իսկ թշուառ արհեստաւորը ոսկ հազիւ-հազ քարչ է տալիս նրա յետևից: Մանուֆակտուրիսթը էժան ծախում է ապրանքներ, որոնք իրան էժան են նստել, իսկ արհեստաւորը նոյն էժան գնով ծախում է ապրանքներ, որոնք նրան թանկ են նստել: Գործը վերջանում է նրանով, որ արհեստաւորը հետզհետէ պարտքերի մէջ է թաղւում, զրկւում է արտադրութեան իր միջոցներից և որպէս բանւոր վարձւում է դրամատէրի մօտ: Իսկ նրա արտադրութեան միջոցները դառնում են դրամագլուխ և ընկնում որ և է դրամատէրի ձեռքը:

Բայց չը պէտք է կարծել, որ անդորրի պայքարը տեղի ունի միայն մանուֆակտուրայի և մանրարհեստի միջև: Սարդը ծծում է ճանճին, բայց սարդը սարդին էլ է ուտում: Եթէ ամանի մէջ չատ սարդեր դնես, նրանցից աւելի ուժեղները կ'ուտեն աւելի թոյլերին, մինչև որ կը մնայ մնացակ ամենաուժեղը: Ճիշտ նոյնը տեղի ունի և դրամատիրական աշխարհում: Ոչ բոլոր մանուֆակտուրիսթները աշխատում են միևնոյն նպատակաւոր պայմաններում, ոչ բոլորը ունեն միևնոյն ճարպիկութիւն և միևնոյն ձեռնարկող ոգի: Նա, որին աւելի չատ յաջողւեց լայնացնել իր ձեռնարկութիւնը և աշխատանքի արդիւնաւէտութիւնը աւելի բարձրացնել, յաղթում է չուկայում աւելի քիչ յաջողակ եղբայրակիցներին՝ չնորհիւ այն հանգամանքին, որ նա կարող է ծախել իր ապրանքները նրանցից էժան: Երբ մանուֆակտուրաները գործարաններ են դառնում, այսինքն երբ մեքենաները փոխարինում են բանւորների արհեստաւորական ճարպիկութիւնը, գործարաններից աւելի խոշորները և աւելի կատարելագործուածներ առաւելութիւն ունեն պակաս խոշորների և պակաս կա-



տարելագործուածների վերաբերմամբ և դուրս քչում նրանց չուկայից: Ցաղթուած դրամատէրերը զրկւում են իրանց դրամագլուխներից, որոնք մեծ գետերի մէջ թափուող փոքրիկ գետակների նման լցնկնում են խոշոր դրամատէրերի ձեռքը և տալիս են նրանց հնարաւորութիւն ամբողջ թափով մնծացնելու իրանց ձեռնարկութիւնները: Հետզհետէ արդիւնաբերութիւնը պէտք է կենտրոնանայ փոքրաթիւ դրամատէրների ձեռքում, որոնք իրանց գործերը առաջ են տանում իրանց արբանեակների միջոցով:

Այսպիսով, վերևում ասածից կարելի է հետևցնել այն, որ, երբ դրամատիրական արդիւնաբերութիւնը առաջ է գալիս իր զարգացման համար նպաստաւոր պայմաններում, նա ձգտում է իր սեփական կարիքների զօրութեամբ հնարաւորին չափ ծաւալել: Ծաւալման այդ ձգտումը իրագործւում է այնպէս, որ չնորհիւ աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացման, աւելի խոշոր ձեռնարկութիւնները դուրս են քչում չուկայից և կլանում են աւելի պակաս խոշորները: Իսկ որովհետև դրամատիրական ձեռնարկութիւնները պատկանում են դրամատէրներին, ուստի արդիւնաբերութեան ատիճանական յայնացումն է միաժամանակ եւ դրամագլխի կեդրոնացում աւելի ու աւելի փսխրաթիւ դրամատէրների ձեռքում:

Ամբողջով արդիւնագործութեան որև է ճիւղում, դրամագլուխը հետզհետէ գրաւում է միւս ճողերի մեծ մասը: Ամենից առաջ դրամագլխի իշխանութեան ենթարկւում են արդիւնաբերութեան սահմանակից ճիւղերը, իսկ յետոյ արդէն և աւելի հեռաւորները: Եթէ, օրինակ, երկաթգիծը արտադրւում է մեքենային եղանակով խոշոր գործարաններում, այդ դէպքում երկաթի հանքարդիւնաբերութիւնը եւս կարող չէ արդէն տե-

ղի ունենալ անդրդվելիության ձևով: Զգալով բարձրացնել աշխատանքի արդիւնաւէտութիւնը և իջեցնել իր ապրանքների արժէքը, երկաթեղէնի գործարաւէրը հոգ է տանում ոչ միայն իր բանւորների աշխատանքի ամենատևման մասին, այլ նաև իր համար հում նիւթ այնինքն երկաթ պատրաստող բանւորների աշխատանքի ամենատևման մասին: Իսկ աշխատանքի այդ ամենատևումը կարող է ձեռք բերել միայն խոշոր մեքենային արտադրութեան ներմուծման միջոցով երկաթի հանքարդիւնաբերութեան մէջ, հանքից երկաթ ստանալու համար, ինչպէս և բոլոր արդիւնաբերութիւնների մէջ, որտեղ գործում են մեքենաներ, — անհրաժեշտ է քարածուխ: Այդ պատճառով դրամագլուխը գրաւում է և սարքում իր ուզածի պէս քարածուխի հանքարդիւնաբերութիւնը...

Զարգանալով հասարակական ամենատևութեան մի քանի ճիւղերում դրամատիրական արդիւնաբերութիւնը պաղում է նոյնիսկ այն ճիւղերի վրայ, որոնց հետ նա ուղղակի կապ չ'ունի:

Խոշոր դրամատիրական արդիւնաբերութեան զարգացումը գիւղատնտեսութեան մէջ առաջ է գնում չափազանց դանդաղ—մի չարք պատճառներով, որոնց մասին խօսք կը լինի ներքևում: Նոյնիսկ դրամատիրութեան առաջատար երկիրներում մանր տնտեսութիւնը ցոյց է տալիս կենսունակութիւն խոշոր քաղաքային արդիւնագործութեան կողքին, որի մէջ արտադրութեան և դրամագլխի կենտրոնացումը հասել է զարգացման ամենաբարձր աստիճանի: Իսկ մեզ մօտ Ռուսաստանում հասկաւոր մարդիկ դեռ ցինում են այն ժամանակը, երբ բնական գիւղատնտեսութիւնը, որի ժամանակ գիւղական բնակիչը արտադրում էր ինքը իր կարիքը հոգալու համար անհրաժեշտ բոլոր առարկաները, գոյութիւն ունէր Մոսկ-



վայի չրջանի զարգացած արդիւնաբերութեան հետ միաժամանակ: Այնուամենայնիւ մեզանում էլ դրամատիրական արդիւնաբերութիւնը քաղաքային ճարտարարուեստի մէջ դանդաղ, բայց անդադրդդ կերպով սկսեց փոխարինել գիւղական կեանքի կարգերը: Բնական անտեսութիւնը գոյութիւն ունէր, բայց գոյութիւն չ'ուներ այլևս: Եւ իսկապէս ինչ հարիւր կայ կատարած տանել և երկար ու բարակ աշխատել նրա վրայ նրանից քիմն ստանալու համար, քանի որ կարելի է անենալ ինչքան ուզում ես Մոսկվայի չիւղից արշինը 5 կոպեկով:

Սակայն ձեռնտու ծախել կատարը և գնել չիթ կամ ալեւրի լաւ է կատարի տեղ ալեւրի չհանաւէտ բոյս տանել — սակ անկել՝ չափարի գործարանի համար կամ բանջարեղէն՝ քաղաքում ծախելու համար: Մի խօսքով, աշխատանքի լուժանումը սեզի նման խրւում է գիւղական բնական անտեսութեան մէջ և ճեղքած է առաջացնում նրա մէջ: Բնական անտեսութեան ժամանակ, հողագործը իր արդիւնքների ամեն մեկից էլ քիչ քիչ ծախում էր, միայն թէ կարողանար այդպիսով հարկերը վճարել: Եթէ հարկերը չը լինէին, նա մեծ ուրախութեամբ տանը կը նստէր և չէր տանի ծախելու այն, ինչ յաճախ իրան հարկաւոր է: Իսկ այժմ նա արտադրում է ոչ այն, ինչ իրան հարկաւոր է սեփական սպառման համար, այլ այն, ինչ նրան ալեւրի ձեռնտու է վաճառելու տեսակէտից: Նա արդէն արտադրում է ծախու համար, նա արտադրում է ապրանք: Իսկ բաւական է, որ արտադրող-հողագործը ապրանքային արտադրութեան ճանապարհն ընկնի, — նրան վիճակւում է նոյնը, ինչ և արտադրող-արհեստաւորին: Ճիշտ այնպէս, ինչպէս մանուֆակտուրան ոչնչացնում է մանրարհեստը, գիւղատնտեսութեան մէջ էլ դրամատիրական արդիւնաբերու-

թիւնը պէտք է կլանէ մանր գիւղացիական անտեսութիւնները և դարձնէ ինքնուրոյն արտադրող-հողագործներին դրամատիրական հողագործական անտեսութիւններ։ Միևնոյն ժամանակ ամէն խոշոր անտեսութիւնները պէտք է առաւելութիւն ունենան ամէն պահս խոչընդոտների վերաբերմամբ և վերջ ի վերջոյ կուլ տան նրանց։ Գիւղատնտեսութեան մէջ այդ պատճառով պէտք է տեղի ունենայ արտադրութեան և դրամագլխի կենտրոնացում փոքրաթիւ կըջանիկների ձեռքում ճիշտ այնպէս, ինչպէս քաղաքային արդիւնագործութեան մէջ։

Այդպէս կարող էր լինել հողագործութեան բաղդը, եթէ նա ամէն տեսակէտից նման լինէր մանրածախին, այսինքն եթէ գիւղատնտեսութեան մէջ դրամատիրական արդիւնաբերութիւնը գտնէր նոյն նպաստաւոր պայմանները իր զարգացման համար, ինչ և քաղաքային արդիւնագործութեան մէջ։ Բայց այդպէս չէ։ Ներքևում մենք կը տեսնենք թէ ինչով է հողագործութիւնը տարբերւում քաղաքային ճարտարարեսեից արտադրական տեսակէտով, և ինչ հետևանքներ են առաջանում դրանից։

**Ցուկաներ եւ գերարտադրութիւն.** — Ամէն դրամատիրական արդիւնաբերութիւնը անընդհատ ձգտում է բարձրացնել վարձու բանւորների աշխատանքի արդիւնաւէտութիւնը՝ նրա առաճանալով զարգացող բաժանման և պարզացման միջոցով։

Իւրաքանչիւր դրամատիրական ձեռնարկութեան մէջ աշխատանքի բաժանումը և պարզացումը հանդիպում է զարգացման այնպիսի աստիճանի, որի վրայ եղած արդիւնաբերողական ոյժերի խելացի չհնգոտուելը դառնում է հնարաւոր միայն իրան ձեռնարկութեան անընդհատ լայնացման պայմանով։ Իր



հերթին ձեռնարկութեան ընդարձակումը հնարաւորութիւն է տալիս աւելի ևս առաջ տանելու աշխատանքի բաժանումը և պարզացումը։ Այսպիսով առաջանում է մի չըզթայ, որի մէջ աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումը ներկայանում է որպէս պատճառ արդիւնաբերութեան ընդարձակման, իսկ արդիւնաբերութեան ընդարձակումը իր կողմից ներկայանում է որպէս պատճառ աշխատանքի արդիւնաւէտութեան յետագայ բարձրացման։ Դրամատիրական արդիւնագործութեան չղթայի մէջ աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումը և արդիւնաբերութեան ընդարձակումը ներկայանում են փոխադարձաբար մերթ որպէս պատճառ, մերթ որպէս հետեւանք։

Այսպէս է երեւում գործը, երբ նրան նայես արտադրութեան կողմից։ Բայց դրամատէրերը զբաղւում են ապրանքների արտադրութեամբ միայն նրանց վաճառելու համար։ Նպատակը, որ նրանք դնում են իրանց առաջ —չան առանալը— իրագործւում է միայն ապրանքները ծախելուց և փողը դրպանը գնելուց յետոյ։ Այդ ի նկատի ունենալով, նայենք թէ ինչպէս է ներկայանում աշխատանքի արդիւնաւէտութեան և արդիւնաբերութեան ընդարձակման յարաբերութիւնը, եթէ գործին նայելու լինենք վաճառման տեսակէտից։

Աշխատանքի արդիւնաւէտութեան աւելացումը առաջ է բերում ոչ միայն ապրանքների արժէքի փոքրացում, այլ և նրանց քանակի մեծացում։ Տասը փականագործ բանեցնող մանուֆակտուրիստը ոչ միայն կարող է ծախել իր ապրանքները աւելի էժան, քան առանձին աշխատող փականագործները, այլև նրա ապրանքների քանակը աւելի մեծ կը լինի, քան վերջինները։

Երբ գործը բաւականաչափ կը զարգանայ, մանուֆակտուրիստի համար գալիս է ժամանակը, երբ աշխատանքի իր հասցրած բարձր արդիւնաւէտութիւնը նա

կարող է լիակատարօրէն չհատուցել միայն այն պայմանով, որ ընդարձակէ ապրանքների վաճառումը, ընդարձակէ չուկան: Գլխաւոր բանը, որ տալիս է ներան հնարաւորութիւն նւաճելու չուկան, այն է, որ նա կարող է իր ապրանքները ծախել աւելի էժան, քան առանձին արհեստաւորները: Բայց դրամատիրական արդիւնաբերութիւնը կանգնած չէ մի տեղում, նա չարունակ զարգանում է: Մանուֆակտուրիան սակայն պայքարել ոչ միայն արհեստաւորների հետ, որոնց նա հետզհետէ ջարդում, այլ և իր հզօրագոյն-մանուֆակտուրիայի հետ: Նւաճած չուկան իր ձեռքում պահելու համար նա պէտք է ձգտէ աւելի ու աւելի բարձրացնել աշխատանքի արդիւնաւէտութիւնը և իջեցնել ապրանքների արժէքը, որովհետև չուկան նրանն է, ով կարողացաւ իր ապրանքները աւելի էժան գնով ծախել:

Այսպիսով, ապրանքների արժէքը իջնելու և չուկայի ընդարձակման միջև գոյութիւն ունի նոյն յարաբերութիւնը, որ մենք նկատում ենք աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացման և արդիւնաբերութեան լայնացման միջև: Ապրանքների արժէքի ընկնելը պահանջում է չուկայի ընդարձակում, իսկ ընդարձակած չուկան պահանջում է դրամատէրից, որ ապրանքների արժէքը աւելի ու աւելի ընկնի: Դրամատէրը իրան զգում է մի դրութեան մէջ, որ չափազանց յիշեցնում է արաւիլի դրութիւնը յայտնի հեքեաթի մէջ — քիթը դուրս քաշեց, պոչը խրեց. պոչը դուրս քաշեց, քիթը խրեց: Հեքեաթը չի ասում թէ ինչով վերջացաւ արաւիլի համար այս անախորժ դրութիւնը: Բայց դրամատէրերից չատերի համար այս ճօճումը ապրանքների արժէքի փոքրացման և չուկայի ընդարձակման միջև վերջանում է, ինչպէս մենք չուտով կը տեսնենք, բաւականաչափ տխուր կերպով:



Երբ արհեստաւորը կամ մանր մանուֆակտուրիստը (ձեռարուեստագործը) արտադրում է իր ապրանքները, նա առաջուց գիտէ թէ ո՞րտեղ և ի՞նչպէս նա պիտի ծախէ այդ ապրանքները: Շուկան նրա առաջն է, իր գնորդներին քիչ թէ չատ նա գիտէ և, ապրանքները արտադրելով, նա որոշ չափով առաջուց կարող է հաչւի առնել նրանց պահանջները: Ի հարկէ, ոչ իւրաքանչիւր արտադրող հնարաւորութիւն ունի համաձայնեցնել իր արտադրութիւնը գնորդների պահանջների, խնդրանքի հետ: Այստեղ մեծ մասամբ մարդ ստիպւած է գործել, պատահմունքի վրայ յոյս դնելով, և աւելի աչալուրջ արտադրողները լինում են աւելի ձեռնտու դրութեան մէջ, քան աւելի պակաս աչալուրջները: Արտադրողների այդ անհատատարութիւնը, խնդրի այլոց, պատճառներից մէկն է արդիւնաբերութեան և դրամագլուխի կենտրոնացման: Սակայն, այնուամենայնիւ, միջին մանր արտադրողը ճանաչում է իր չուկան և այսպէս թէ այնպէս գիտէ յարմարւել նրան:

Սակայն որքան աւելի աշխատանքի արդիւնաւէտութիւնը բարձրանում է և արդիւնաբերութիւնը ծաւալւում, այնքան տեղական չուկան աւելի անբաւարար է դառնում բոլոր արտադրւած ապրանքները սպառելու: Մանուֆակտուրիստը ստիպւում է տեղական չուկայի սահմաններից դէնը որոնել վաճառման վայրեր: Նա սկսում է աշխատել ամբողջ չրջանի համար և պէտք է հաչւի առնի պահանջները մի չուկայի, որ նրան կարող է ծանօթ լինել միայն ընդհանուր գծերով: Այստեղ նա ստիպւած է աւելի զուչակել, քան այդ անում էր նա միայն տեղական չուկայի համար արտադրելու ժամանակ: Իսկ ո՛վ չատ է զուչակում, նա աւելի չատ է սխալւում: Պատահում է, որ սպասւած չափի փոխարէն մանուֆակտուրիստը ստանում է միայն մէնաներ: Բայց այնու

ամենամեծ այստեղ դեռ կարելի է հաշիւ ու դատողութիւն անել, և ձեռք բերած փորձը չի կորչում մանուածագործական համար իզուր տեղը:

Անհամեմատ աւելի ծանր է թւում դրամատիրոջ դրութիւնը, երբ նա իր արտադրութեան պահանջների չնչին փոխարինում է արհեստաւորական աշխատանքը մեքենայով և մանում է խոշոր արդիւնաբերութեան չրջանը: Այստեղ նրա համար սկսում է մութ խաղը: Նրա գործարանները արտադրում են ապրանքների ամբողջ լեռներ, որոնց վաճառման համար նրան հարկաւոր է ոչ տեղային, ոչ չրջանային և ոչ էլ հայրենի, այլ հազարաշխարհային չուկայ: Եւ իրօք մենք տեսնում ենք, որ անգլիական, ֆրանսիական, գերմանական և ամերիկական դրամատէրերը աշխատում են արտահանութեան համար, այսինքն ամբողջ աշխարհի համար: Քիչ չատ ճանաչել համաշխարհային չուկան, ինչպէս կարելի է ճանաչել տեղական կամ նոյնիսկ հայրենի չուկան և համաձայնեցնել սեփական արտադրութիւնը նրա պահանջներին, — մարդուս համար անհնար է բոլորովին, դրամատիրական արդիւնաբերութեան ընթացքը ինքը սպիտակ է դրամատիրոջ չարունակ ընդարձակել իր գործը, և կանգ առնել այդ ճանապարհի վրայ՝ նա նոյնպէս չի կարող, որպէս չի կարող կանգ առնել իր չարժման մէջ բարձր լեռան գագաթից գլորուող ձիւնակոյտը: Իր մրցակիցներին յաղթելու համար նա պէտք է ծախէ իր ապրանքները աւելի էժան, քան նրանք: Իսկ դրա համար նրան անհրաժեշտ է բարձրացնել աշխատանքի արդիւնաւէտութիւնը նոր մեքենաների ներմուծման միջոցով: Իսկ այդ աւելացնում է արտադրուղ ապրանքների քանակը: Այդ բոլորը խոշոր գործարանատէրը անում է այն յոյսով, որ նրա գործարանում արտադրած ապրանքները կը ծախուեն համաշխարհային չուկայում, և որ



նրան կը յաջողուի ջախջախել իր մրցակիցներին: Բայց դրանում վստահ լինել նա ուղղակի անկարող է: Որովհետև, երբ գործը չան առանալուն է դալիս, բոլոր խոշոր դրամատէրերը տոգորուած են լինում նոյնօրինակ զգացումներով, նրանք բոլորն էլ մէկը միւսից աւելի աշխատում են արտադրել որքան կարելի է չատ ապրանքներ և որքան կարելի է էժան: Բանի դեռ առաջարկը խնդրանքից վեր չէ, խոշոր դրամատէրերի գործերը հրաչալի են դնում: Ապրանքի իւրացումը բերում է նրանց չան: Իսկ որովհետև նրանք անդադրն քանակութեամբ ապրանքներ ունեն, ուստի նրանք ամրոզջովին լցնում են իրանց պարկերը փողով: Բայց նրանց երջանկութիւնը երկարատև չի կարող լինել: Որքան էլ մեծ լինի համաչխարհային չուկան, այնուամենայնիւ նա անչատակ անդունդ չէ, որ կարողանայ անվերջ կլանել արտադրուած ապրանքները: Գնորդները ձեռք են բերում ապրանքները ոչատման համար: Իսկ ոչատումը, եթէ միայն գործը չի վերաբերում ուտելեղէններին, պահանջում է քիչ-չատ երկար ժամանակ: Զիմը, քիմանը, մահուդը չեն մաչում մի օրում մէջ, և երկաթեղէնը, օրինակ, կարելի է տարիներով բանեցնել: Իսկ գործարանատէրերը արտադրում են տենդոտ արագութեամբ, որովհետև չանի անչատ ծարաւը չար հոգու նման չարունակ չչնչում է նրանց ականջին. — Չատ՛ չ, չատ՛ չ: Եւ նրանք հնազանդւում են ու անընդհատ ընդարձակում և արագացնում են արտադրութիւնը: Սրանից առեղծւում է մի դրութիւն, որի ժամանակ արտադրութիւնը զարգանում է ոչատուկից արագ, ապրանքները արտադրւում են աւելի մեծ քանակութեամբ, քան կարելի է ծախել, աւազ է դալիս գերարտադրութիւն, ապրանքները դարսուում են պահեստաանբերում և ոչինչ հնարաւորութիւն չի լինում նրանց նոյնիսկ էժանացրած

գնով ծախել։ Այն ժամանակ, արտադրությունը պետք է կանգ առնի ոչ միայն այն պատճառով, որ միտք չունի արտադրել ապրանքներ, երբ նրանց համար խնդրանք չը կայ, այլ և այն պատճառով, որ ապրանքների արտադրության վրայ դրամատէրների ծախսած դրամագլուխները յետ չեն վերադարձել չոհով, ոչ էլ վնասով, և գործարանատէրերը միջոց չ'ունեն գործը շարունակել։ Գործերը կանգ են առնում, գալիս է ճգնաժամը։ Այդ ճգնաժամը տեւում է մի քանի տարի, մինչև որ ապրանքների նոր խնդրանք լինի։ Այն ժամանակ դրամատէրերի մրցարշաւը սկսում է նորից։

Երբ ճգնաժամը բռնկւում է խոշոր արդիւնաբերութեան ուրէ ճիւղում, նա չի սահմանափակւում այդ ճիւղով, այլ տարածւում է և չատ ուրիշների վրայ, և այդպիսով նա սովորաբար դառնում է մի ընդհանուր երեւոյթ։ Եթէ ճգնաժամը առաջ է եկել, օրինակ, չթի արդիւնաբերութեան մէջ, այդ դէպքում նա անխուսափելիօրէն պետք է անդրադառնայ և բամբակի արդիւնաբերութեան վրայ, և ջուլհակի (ոստայնանկ) մանքենաների արդիւնաբերութեան և նեբկերի արդիւնաբերութեան և այլն, և այլն։ Գործերի կանգնելը ճնշում է անխտիր բոլոր դրամատէրերին։ Դրամատիրոջ կոչումը ուրիշի աշխատանքի միջոցով չատ առնալն է։ Իսկ քանի որ հնարաւորութիւն չը կայ չատ առնալու, դրամատէրը պետք է դադարի գոյութիւն ունենալուց, որպէս դրամատէր, կամ թէ չէ ապրի ապազայ բարիքների յոյսերով։ Բայց դրամատիրական ուսերը, որոնց վրայ ընկնում է ճգնաժամի ծանրութիւնը, բոլորն էլ միատեսակ ամրութիւն չ'ունեն — մի քանիսը ընկճւում են, միւսները մի կերպ ճիպով դիմանում են ազէտին։ Ինչպէս և իրան արդիւնաբերութեան մէջ, այստեղ էլ օգտւում են ամենախոշոր դրամատէրերը։ Միայն նրանք,



որոնք ունեն պահեստի դրամագլուխ կամ որոնք գոնէ անփոխարինելի միջոցներով էլեն առնում իրանց ձեռնարկութիւնը, դուրս են գալիս անվնաս այդ փորձանքից։ Նրանք կարող են ապասել, ծախսում են առանց մեծ կրճատի իրանց մօտ հատաքսած ապրանքները և հէնց որ ճգնաժամը վերջացաւ, նրանք առաջինները են, որ նոր ելից սկսում են արդիւնաբերողական մրցարշաւը։

Իսկ մնացած բոլոր դրամատէրերը — մանրերը, միջինները և խոշորները, որոնք վարում են իրանց գործերը աւելի կամ պակաս չափով ուրիշի դրամագլխով, չեն կարողանում վճարել իրանց պարտքերը, սնանկանում են, և նրանց գործարանները ծախսւում են աճուրդի ժամանակ և ընկնում ուրիշի ձեռքը։ Աւելի յաճախ, երբ ճգնաժամը վերջանում է, այդ գործարանները ընկնում են այն խոշոր դրամատէրերի ձեռքը, որոնք կարողացել են ազատել փոթորկից։ Նրանց համար այն ժամանակ պալիս է նոր բարգաւաճման չրջանը, որովհետև արդիւնաբերութեան ընդարձակումը հնարաւորութիւն է տալիս նրանց աւելի ևս բարձրացնելու աշխատանքի արդիւնաւէտութիւնը նոր մեքենաների ներմուծմամբ և այսպէս չարունակ մինչև նոր արդիւնագործական ճգնաժամը։

Այսպիսով, արդիւնաբերութեան և դրամագլխի կենտրոնացումը աւելի ու աւելի փոքրաթիւ ձեռքերում մացնում է անխուսափելիօրէն չփոթութիւն և անկարգութիւն արդիւնաբերութեան մէջ, որովհետև նա ոչընչացնում է ամենայն հնարաւորութիւն համաչափելու արտադրութիւնը չուկայի պահանջների հետ, համաձայնեցնելու առաջարկը խնդրանքի հետ։ Դրա հետեւանքը լինում է գերարտադրութիւնը, չուկայի ողղելը ապրանքներով և արդիւնագործական ճգնաժամը, որը նպատում է դրամագլխի յետագայ կենտրոնացման,

բայց որովհետև միաժամանակ պատճառները ունենում են և միաժամանակ հետեւանքներ, ուստի ճգնաժամը և արդիւնաբերութեան ծաղկման տարիները պէտք է անխուսափելիօրէն հերթով հետեւեն միմեանց և խոշոր արդիւնաբերութեան աճման հետ նրանց զարգացումը առաջ պիտի գնայ և՛ խորութեամբ, և՛ լայնութեամբ: Եւ այդ կը չարունակուի մինչև այն ժամանակ, քանի դեռ դոյութիւն ունի դրամատիրական արդիւնաբերութիւնը, այսինքն մինչև դրամատիրական կարգերի խորտակումը:

**Աշխատանքի հասարակականացումը.** — Ծաղկելով իր զարգացման համար *պատասխանատու պայմաններում* դրամատիրական արդիւնաբերութիւնը առաջ է բերում աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացում նրա բաժանման և զարգացման միջոցով, արտադրութեան և դրամագլխի անընդհատ կենտրոնացում, այսինքն փոխադրիչում է մանր արդիւնաբերութիւնը՝ խոշորով, և առաջ է բերում վերջապէս չարունակ կրկնուող արդիւնաբերական ճգնաժամեր: Այս բոլոր անտեսական երեւոյթները չօչափում են հասարակութեան կենսական չափերը և այդ պատճառով նրանք *պէտք* է ունենան անպայման նշանակութիւն նրա զարգացման համար: Արդ, ո՞րն է այդ նշանակութիւնը: Երբ դրամատէրը ապրում է որևէ ձեռնարկութիւն, նա ի նկատի ունի միայն մի սուկ անձնական նպատակ — չահ առանալը: Բայց նրա ամբողջ գործունէութիւնը զարգանում է հասարակութեան մէջ, որովհետև և նա ինքը հասարակական էլ երեւոյթ է: Միայն որոշ հասարակական կարգերը հնարաւորութիւն են տալիս նրան սեփականացնելու արտադրութեան միջոցները և ստիպելու ուրիշներին աշխատել իր համար: Միայն *չնորհիւ* ապրանքի հասարակական էութեան՝ դրամատէրը կարող է դարձնել նրան իր չահի կրողը: Իր սեփական



սպառման համար առարկաներ արդիւնաբերողը կարող է գոյութիւն ունենալ հասարակութիւնից դուրս, բայց դրամատէրը անկարելի է հասարակութիւնից դուրս: Ուստի և դրամատիրոջ գործունէութիւնը, որ կոչուած է իրագործելու նրա անձնական նպատակները, բայց հասարակական տոլի վրայ, անխուսափելիօրէն պէտք է ունենայ հասարական հետեւանքներ:

Իր գործունէութեան տէնց առաջին քայլերից դրամատէրը ձգտում է բարձրացնել իր բանուորների աշխատանքի արդիւնաւէտութիւնը: Նա վճարում է նրանց աշխատավարձ, և նրա չահը պահանջում է, որ պայմանաւորած բանուորական ժամանակամիջոցում օրեկան 12 կամ 14 ժամւայ ընթացքում — նրանք արտադրեն նրա համար որքան կարելի է չատ ապրանքներ: Աշխատանքի արդիւնաւէտութիւնը նա բարձրացնում է մի կողմից նրա բաժանման և զարգացման միջոցով, միւս կողմից, արտադրութեան գործիքների աւելի լաւ չահեցողութեամբ:

Նա մտցնում է մեքենաներ, վարձում է գիտուն ճարտարագէտներ և արհեստագէտներ, որոնք զեկավարում են բանուորների աշխատանքը և չարունակ նորանոր միջոցներ են հնարում, որպէսզի արտադրած ապրանքը որքան կարելի է էժան նստի գործատիրոջ վրայ: Այդ բոլորի մէջ դրամատէրը բացառապէս իր չահը նկատի ունի, և եթէ չը լինէր նրա չահը, նա այնքան քիչ կը մտածէր աշխատանքի արդիւնաւէտութեան զարգացման մասին, որքան և չինաց թագաւորի առողջութեան մասին: Չէնց որ նա ձերբազատուի կամ բաւականաչափ հարստանալու պատճառով ծախից իր գործարանը ուրիշ դրամատիրոջ, աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացնելու խնդիրը դադարում է իսպառ նրան զբաղեցնելուց, որովհետև նրա —դրամատիրոջ— կոչումը բնաւ

չի պարտադրում նրան հետաքրքրելու դրամատիրական արդիւնաբերութեան հասարակական հետեւանքներով։ Բայց անկախ նրա ցանկութիւններից և դիտաւորութիւններից, այդ հետեւանքները գոյութիւն ունեն, որովհետեւ դրամատէրերը փոխանակում են, իսկ արդիւնաբերութիւնը միաւոր է։

Աշխատանքի բաժանումը, նոր գրւած մեքենաները, հում նիւթի մշակման կատարելագործւած ձեւերը և առհասարակ արդիւնագործութեան փորձի միջոցով ձեռք բերւած բոլոր արհեստագիտական ծանօթութիւնները չեն կորչում և չքանում «պատահական» դործարանատիրոջ հետ միասին, երբ նա հեռանում է գործերից։ Նոր գործարանատէրը գործը սկսում է ոչ սկզբից, այլ այնտեղից, որտեղ թողել էր նրան նախորդը, և իր չանը ի նկատի ունենալով, նա աւելի մեծ ոյժերով ձգտում է առաջ գնալ աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացման և արդիւնաբերութեան ընդլայնման ճանապարհով։

Այդպիսով, եթէ նայելու լինենք արդիւնաբերութեան, որպէս հասարակութեան օրգանական գործունէութեան, և արդիւնագործութեան զարգացման, որպէս նոյն հասարակութեան զարգացման մասերից մէկի վրայ, այդ դէպքում կը սահմանք հետեւեալը.

*Աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումը որը դրամատէրի համար գոյութիւն ունի միայն որպէս նրա շահի աւելացման միջոց հասարակութեան համար ներկայանում է որպէս զարգացում նրա սեփական արդիւնաբերողական ոյժերի։* Ուրիշ խօսքով, դրամատիրական արդիւնագործութեան ծագման ամենահասուն հասարակական հետեւանքն է հասարակութեան արդիւնաբերողական ոյժերի զարգացումը։

Այստեղ աւելորդ չի լինի մի քանի խօսք ասել այն բանի մասին, թէ ինչ պէտք է հասկանալ հասարակու-



թեան «արդիւնաբերողական ոյժեր» խօսքով։ Տնտեսական տեսակէտից, արտադրել նշանակում է գործադրել իր ոյժերը բնութեան առարկաների վրայ նրանց օգտագործութիւնները ստանալու նպատակով։ Արտադրութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ կան արտադրող և արտադրութեան միջոցներ։ Այդ երկու հանգամանքները «արտադրող» և «արտադրութեան միջոցները» մի ընդհանուր հասկացողութիւն են կազմում — «արդիւնաբերողական ոյժեր»։

Երբ ասում են, օրինակ, որ Ֆրանսիայի արդիւնաբերողական ոյժերը կանգնած են զարգացման աւելի բարձր մակերեւոյթի վրայ, քան մի որեւէ Թիւրքիայի արդիւնաբերողական ոյժերը, — դրանով ուզում են ասել, որ Ֆրանսիայում հողը աւելի արգաւանդ է մշակւած, աւելի լաւ է հերկած և աւելի լաւ է յանձնած, որ երկրի խորքերում թագնւած հարստութիւնները աւելի լաւ և աւելի լայն կերպով են մշակւում, որ այդ երկրում կան աւելի շատ գործարաններ, աւելի շատ մեքենաներ, որ աշխատաւոր ազգաբնակութիւնը աշխատում է աւելի հմուտ և խելացի կերպով, որ այնտեղ աւելի պիտուն արհեստագէտներ, ճարտարապետներ կան, որոնք զեկավարում են արդիւնագործութիւնը և այլն։ Կարելի է տարօրինակ թւալ, որ ինքը մարդը դասւում է այստեղ արդիւնաբերողական ոյժերի չարքը։ Աւետարանում ասւած է «ո՛չ թէ մարդս չարաթի օրւայ համար է, այլ չարաթի օրը մարդուս համար», Մարդս ինքն ըստ ինքեան նպատակ է, արդիւնագործութիւնը գոյութիւն ունի նրա համար, և ոչ թէ հակառակը. ուստի և մարդս կարծես թէ չը պէտք է բնութեան առարկաների հետ ընկնէր արդիւնաբերողական ոյժերի չարքը։ Բայց բանը նրանումն է, որ չարաթի օրւայ և արդիւնագործութեան միջև կայ հիմնական տարբերութիւն։ Չարաթի օրը

ածնելու համար մարդս պէտք է միայն իրան չեզ պահի աշխատանքից. մինչդեռ արդիւնագործութեան մէջ նա պէտք է աշխատի, — նա տալիս է արդիւնագործութեանը իր անձնաւորութեան մի մասը, որպէսզի նրա միւս մասը կարողանայ ապրել իր կեանքով՝ մտածել, սիրել, ատել, տանջուել, զբաղճանալ: Ինչ չափով մարդս անձնաւորութիւն է լինում արդիւնագործութեանը, նոյն չափով նա կազմում է հասարակութեան արդիւնաւէտ ոյժերի մի մասը:

Արտադրութեան դրամատիրական ձեւի ժամանակ հասարակութեան արդիւնաւէտ ոյժերի զարգացումը արտայայտւում է նրանում, որ աշխատանքը դառնում է արհեստաւորականից գործարանին, անհատականից՝ հասարակական. աշխատանքի հասարակականում է: Աշխատանքի հասարակական բաժանման ժամանակ իւրաքանչիւր արդիւնաւէտ արտադրում է ամբողջ ապրանքը, — հում նիւթը ապրանք դարձնելու համար անհրաժեշտ աշխատանքը նրա անհատական աշխատանքն է: Բայց երբ դրամատէրը մտցնում է աշխատանքի ճարտարաբուհատային բաժանում, իւրաքանչիւր արդիւնաւէտ կատարում է ամբողջ ապրանքը արտադրելու համար անհրաժեշտ աշխատանքի միայն մի մասը: Այդ պատճառով, ապրանքը ներկայանում է, որպէս արդիւնք մի քանի արդիւնաւէտների աշխատակցութեան, որոնք ամանց մէկը միւսի ոչինչ չեն կարող անել, — նրա արտադրութեան համար անհրաժեշտ աշխատանքը արդէն անհատական չէ, այլ հասարակական: Աշխատանքի մանուֆակտուրային բաժանման ծաւալելու հետ զարգանում է և աշխատանքի հասարակականացումը արդիւնագործութեան մէջ: Ուրիշ խօսքով, արտադրութիւնը հնարաւոր է դառնում միայն այն պայմանով, որ միեւնոյն գործում աշխատակցեն իրար բազմաթիւ արդիւնաւէտներ:



նեը: Արդիւնաւէտութեան կենտրօնացումը, մանր արդիւնաւէտութեան փոխարինումը մէքենով և խոշորով նշանակում է ոչ միայն այն, որ զարգանում են հասարակութեան արդիւնաւէտական ոյժերը, այլ և այն, որ աշխատանքը հետզհետէ հասարակականում է: Սակայն, որ այսպէս է դործը ներկայանում արդիւնագործութեան միայն այն ճիւղերում, ուր մէջ դրամատիրական արդիւնագործութիւնը գտնում է իր լիակատար զարգացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Գիւղատնտեսութեան մէջ, որտեղ աշխատանքը չատ քիչ է ենթարկւում բաժանման և զարգացման, արդիւնաւէտական ոյժերի զարգացումը չի նշանակում աշխատանքի հասարակականացում, այլ առաջ է գնում ուրիշ ճանապարհով: Այդ հարցը մանրամասնօրէն քննութեան կ'առնենք «հողային խնդիրը» գլխում:

**Հասարակութեան շերտաւորումը.** — Աշխատաւորական հասարակութիւնը, որի մէջ արտադրութեան միջոցները գտնւում են անմիջական արդիւնաւէտների արտադրութեան տակ, իր կազմով միատարր է: Ամէն մէկի համար հասկանալի է, որ բնական անտեսութեան ժամանակ, երբ հասարակութեան իւրաքանչիւր անդամ ինքն է արտադրում իր գոյութեան համար անհրաժեշտ բոլոր առարկաները, բոլոր արդիւնաւէտները հաւասար են իրար իրանց տնտեսական դրութեամբ: Բայց աշխատանքի հասարակական բաժանման ժամանակ էլ արտադրողների մէջ եղած հաւասարութիւնը կարող է դեռ պահպանել: Հողագործը, որ իր հողի վրայ և իր միջոցներով ցորեն է ցանում փոխանակութեան համար, և փականագործը, որ իր արհեստանոցում և իր գործիքներով արտադրում է ամեն տեսակ փականագործական իրեղէններ փոխանակութեան համար, — անտեսական տե-

սակէսից ոչնչով իրարից չեն տարբերւում: Նրանք երկուսն էլ ինքնուրոյն արդիւնաբերողներ են, փոխանակութեան մէջ մանում են նրանք հաւասար պայմաններում, և նրանցից իւրաքանչիւրը իր արտադրութեան մէջ կախում չ'ունի ոչ մէկը միւսից, ոչ էլ որ և է մէկից: Աշխատաւոր հասարակութեան մի տարրութիւնը պայմանաւորւում է նրանով, որ նա կազմւած է ինքնուրոյն, իրար հաւասար արդիւնաբերողներից:

Բայց այդ միատարրութեան վերջ է դրւում, հէնց որ հանդէս է գալիս մանուֆակտուրան (ձեռաբուհասը), աշխատանքի մանուֆակտուրային (ձեռաբուհասային) բաժանումը:

Մանուֆակտուրայի մէջ դէմ առ դէմ կանգնած են գործաւէրը, որին պահանջւում են արտադրութեան միջոցները, և արհեստաւորները որոնք զրկւած են արտադրութեան միջոցներից և ստիպւած են որոշ վարձատրութեամբ աշխատել գործատիրոջ համար:

Սկզբում իրար հաւասար ինքնուրոյն արտադրող-արհեստաւորները բաղդի բերմամբ դառան մի կողմից՝ արտադրութեան միջոցների տէր դրամատէրեր, միւս կողմից՝ վարձու բանուորներ: Իսկ որ վարձու բանուորը գործատիրոջ հետ հաւասար ոյժ չէ, — կարծենք դրա մասին կարիք չը կայ խօսել:

Բաւական է, որ դրամատիրական արդիւնագործութիւնը ծագի իր զարգացման համար նպաստաւոր պայմաններում, և նա մի տեղում կանգնած չի՛ մնայ, այլ չարունակ առաջ կը գնայ: Մենք արդէն դիտենք, որ ձեռաբուհասը բարձրացնելով աշխատանքի արդիւնաւէտութիւնը, անդիմադրելի կերպով ձգտում է դէպի սեփական լայնացումը: Տեղի է ունենում արտադրութեան և դրամագլխի կենտրոնացում: Ձեռաբուհասային և արհեստաւորական արդիւնաբերութիւնների միջև եղած պայ-



քարում, ինչպէս ինչպէս մենք դիտենք արդէն, մանուֆակտուրան միշտ յաղթող է հանդիսանում: Արհեստաւորները կամայ-կամայ զրկւում են իրանց արտադրութեան միջոցներից և ինքնուրոյն արդիւնաբերողներից դառնում են սկզբում կիսա-ինքնուրոյն, դրամագլխից դերւած արդիւնաբերողներ, և վերջ ի վերջոյ իրանց աշխատաւոր ձեռները չուկայ հանող կատաբեալ պրօլետարներ (ինչազուրկ): Այդպէս ինքնուրոյն արտադրողներին կիսա-ինքնուրոյն և պրօլետարներ դարձնելով չի սահմանափակւում դրամատիրական արդիւնագործութեան առաջ բերած հասարակական չերտաւորումը. տընտեսական կեանքը տեղի ունի ոչ միայն դրամատիրական արդիւնագործութեան և մանրարհեստի մէջև, այլ և խոշոր և համեմատապէս պակաս խոշոր դրամատիրական ձեռնարկութիւնների մէջև: Ունենալով իրանց կողմը բոլոր առաւելութիւնները, աւելի խոշոր դրամատէրերը դուրս են գալիս չուկայից և յաղթում համեմատապէս պակաս խոշորներին, որոնք զրկւում են իրանց դրամագլուխներից և ծառայութեան մանում իրանց աւելի բաղդաւոր մրցակիցների մօտ կամ թէ չէ նորից են սկսում գործը: Իսկ խոշոր դրամատէրերը դառնում են աւելի խոշոր: Այսպիսով դրամատիրական կարգերում տեղի է ունենում հասարակութեան, այսպէս ասած, անընդհատ մաղում աւելի ու աւելի նօսր մաղերի միջից: Աշխատաւոր հասարակութիւնը մաղի միջից կ'անցնէր առանց մնացորդի, որովհետև նրա բոլոր «անհատական միաւորները» հասարաշոր են, նա ամբողջովին կազմւած է ինքնուրոյն արդիւնաբերողներից, որոնք աշխատում են արտադրութեան սեփական միջոցներով: Երբ առաջ է գալիս մանուֆակտուրային արդիւնագործութիւնը, մաղի վրայ մնում են ամեն տեսակ «խելքերը գլուխներին» վարկանագործներ և «անհատական դիւզայներ», որոնք ոչ

միայն պատրաստ են ճնշելու իրանց մերձաւորին դժբաղդութեան մէջ, այլ և գիտեն այդ դժբաղդութիւնը մշտական ալրիւր դարձնել իրանց եկամուտի համար:

Որքան աւելի առաջ է դնում աշխատանքի արդիւնաւէտութեան զարգացումը և արտադրութեան ու դրամագլխի կենտրոնացումը, այնքան աւելի նօսրանում են մազերը և այնքան աւելի խոշոր ու փոքրաթիւ են դառնում դրամատէրերը, որոնք մնում են այդ մազերի վրայ:

Եթէ ենթադրելու լինենք, որ կենտրոնացումը ամում է անդադար, ինչպէս եղել է մինչև օրս, այդ դէպքում վերջ ի վերջոյ արտադրութեան բոլոր միջոցները, բոլոր դրամագլուխները պէտք է կենտրոնանան փոքրաթիւ «արդիւնագործական իշխանների» ձեռքում, իսկ հասարակութեան մնացած բոլոր անդամները պէտք է դառնան վարձու բանուորներ կամ սակաւաթիւ կրևսոններ ծաւալողներ:

Դրամատիրական արդիւնագործութիւնը, որը անխուսափելիօրէն առաջացնում է աշխատանքի ձեռարուեստային բաժանում և դրանագիտի կենտրոնացում, ոչնչացնում է հասարակութեան միատարրութիւնը, սակայն հասարակութեան դասային կազմածքը հետեւանք է, ինչպէս մենք տեսանք, ոչ թէ դրամատիրական արդիւնագործութեան, այլ դրամատիրական քաշխանան:

Երբ դրամատէրը ընդարձակում է իր արդիւնաբերութիւնը և ձեռքով ու ոտքով հաւաքում է իր դրամագլուխը, նա այդ դէպքում հարստանում է և ամենայն անում ոչ միայն հասարակութեան աշխատաւոր մասը, այլ նաև մանր և միջին դրամատէրերին:

Բոլոր նրանք, որ վնասւում են դրամագլխից, առում են նրան, բայց իւրաքանչիւրը առում է նրան ինքնայատուկ կերպով: Աշխատաւորների առկութիւնը



արտայայտւում է դրամատիրական կարգերը ոչնչացնելու և արտադրութեան միջոցների հասարակական չհնեցողութեամբ — նրան փոխարինելու ձգտման մէջ, — իսկ վիրաւորած դրամատէրերը առում են խոշոր դրամագլուխը, քանի դեռ վերջինս նրանց ձեռքում չէ, և նրանից իրանց պատապարելու մի միջոց միայն գիտեն նրանք — նրան իրանց ձեռքը գցել: Հոգով նրանք դրամատէրեր են, և նրանց չահերը բնաւ չեն համապատասխանում աշխատաւորների չահերին: Կենտրոնացման մազից անցնում են պրօլետարների և արտադրութեան միջոցներից դեռ ոչ իսպառ զրկած արդիւնաբերողների հետ ամեն տեսակ մանր և միջին դրամատէրեր: Բայց նրանց բոլորի միաժամանակ մազից անցնելը դեռ բաւական չէ, որպէսզի նրանք կազմեն մի ընդհանուր դասակարգ, որ հակադիր լինի խոշոր դրամատէրերի դասին:

Սակայն եթէ արտադրութեան և դրամագլխի կենտրոնացումը չի ներկայանում, որպէս պատճառ հասարակութեան դասային կազմածքի, նա այնուամենայնիւ հող է պատրաստում նրա համար: Կենտրոնացնելով մի գործում հազարաւոր և տասնեակ հազարաւոր վարձու բանուորներ, խոշոր դրամատէրը սովորեցնում է նրանց իր արդիւնագործութեան մէջ հանձնաձայնեցրած գործողութիւններին: Ապրելով և աշխատելով չարունակ միասին և կատարելապէս միատեսակ պայմաններում, բանուորները ոչ միայն ընտելանում են հասարակական աշխատանքի, այլև մերձենում են իրար և սկսում են զգալ, որ նրանց բոլորին միացնում է մի ընդհանուր կապ: Իսկ երբ վերջապէս բաշխման պայմանները բերում են նրանց իրանց դասային չահերի գիտակցութեան, — այն ժամանակ այդ գիտակցութիւնը նպաստաւոր հող է գտնում նրանց համաձայն գործելու սովորութեան մէջ, — այդ հողի վրայ է, որ զարգանում է հասասաան դասային

պայքարը, որը բնութեան օբէնքի անխուսափելիութեամբ պիտի տանի մեզ դէպի դրամատիրական հասարակակարգի տապալումը։

**Դրամատիրական հասարակութեան անդամների դրութեան անապահովութիւնը.** — Արտադրութեան և դրամագլխի անընդհատ կենտրոնացումն է միաժամանակ անընդհատ փոփոխութիւն այն բոլոր մարդկանց դրութեան, որոնք որ եւ է ևամանակցութիւն ունեն հասարակութեան արտադրութեան մէջ։ Երբ աշխատանքի հասարակական բաժանման վրայ հիմնուած աշխատաւորական հասարակութեան մէջ տեղի է ունենում մրցում արտադրողների մէջև, այդ մրցումը ձգտում է մօտեցնել ապրանքների վաճառանոցային վէրը նրանց իսկական արժէքին, բայց նա դրանով էապէս չի փոխում արտադրողի դրութիւնը։ Արհեստաւորը, որ ծոյլ է կամ դանդաղ է աշխատում, ստիպուած է ծախել չուկայում իր ապրանքը նոյն գնով, ինչ գնով և արհեստաւորը, որի աշխատանքը բաւական լաւ է գնում և որ աշխատում է ուրիշներից ոչ վատ։ Ծոյլ կամ անշնորհ արտադրողի դրութիւնը չի լինի նախանձելի, բայց միջին արտադրողի դրութիւնը նոյնպիսի մէջին արտադրողների մրցումից չի կարող խախտուել։ Իրանց ապրանքները նրանք կը ծախեն մերթ քիչ աւելի բարձր, մերթ քիչ աւելի ցածր գնով այդ ապրանքների իսկական արժէքից, բայց այդ չի խանգարում նրանց մնալ ինքնուրոյն արտադրողներ։ Բոլորովին այլ պատկեր է ներկայացնում գործը, երբ մրցումը տեղի է ունենում դրամատիրական հասարակութեան մէջ։ Այստեղ, ինչպէս մենք տեսանք, կրկին տեղի է ունենում ոչ հաւասարազօր արտադրողների միջև, ինչպէս աշխատաւոր հասարակութեան մէջ, այլ արհեստաւորների ու մանուֆակտուրիստների, և մանր ու



խոշոր մանուֆակտուրիստների, այսինքն ոչ հաւասար ոյժերի միջև։ Յաղթում է ի հարկէ աւելի մեծ ոյժը և տեղի է ունենում դրամագլխի կենտրոնացում։ Համաձայն դրամատիրական աւետարանին, խլում է նրանցից, ովքեր աւանց այն էլ քիչ ունին, և տրւում է նրանց, որոնք չատ ունեն։ Եւ որովհետև դրամատիրական արտադրութեան զարգացումը աւելի է դնում անդադար, ուստի և մէկից խլելը և միւսին յանձնելը նոյնպէս կատարում է անդադար։

Այն ժամանակ, երբ աշխատաւորական հասարակութեան մէջ միջակ արտադրողի դրութիւնը մեծ կայունութիւն է ցոյց տալիս, մի անգամ սկսած դրամատիրական արտադրութիւնը մոտեցնում է կատարեալ անապահովութիւն այն բոլոր մարդկանց դրութեան մէջ, ովքեր որևէ ևամնչութիւն ունեն արտադրութեան հետ,— այսօրւայ մանուֆակտուրիստը վաղը չափազան ուրախ կը լինի տեղ տանալու գործարանում խոշոր դրամատիրոջ մօտ, այսօրւայ արհեստաւորը վաղը դառնում է պրօլետար։ Կարելի է կարծել թէ դրութեան այդ անապահովութիւնը չի վերաբերում պրօլետարներին, որովհետև դրամագլխի կենտրոնացումը կարող է դրամագլխից զրկել մանր և միջակ դրամատէրներին և արտադրութեան միջոցներից զրկել ինքնուրոյն արտադրողին, բայց պրօլետարից նա անդօր է որևէ բան խլելու։ Նոյն պատճառով, որով մերկը չի վախենում կողոպտուելուց, իսկ թրջւածը՝ ջրից, պրօլետարը պէտք է լինէր դրամատիրական հասարակութեան ամենաապահով անդամը,— նրա «աշխատաւոր ձեռները» միշտ նրա մօտ են, և նրանք, որ չարժում են ամբողջ դրամատիրական մեքենան։ Բայց բանից դուրս է գալիս, որ դրամագլուխը հնարք է գտնում մերկին էլ կողոպտելու, թրջւածին էլ թրջելու։ Բանի դեռ խոշոր արդիւնաբերութիւնը զար-

գանում է արագ աստիճանով, պրոլետարները մի կերպ ապրում են, որովհետև աշխատասեր ձեռների անագին խնդրանք կայ և այսպես կոչած «աշխատանքի պահեստա-զօրաբանակը» — աշխատազուրկները — ամբողջովին դործի են դրւում: Բայց լարած արտադրութեան անխուսափելիօրէն հետեւում է չուկայի ապրանքներով լցւելը և արդիւնագործական ճգնաժամը:

Տեղի է ունենում ամենամոլերի դրամատիրական կոտորածը, որի ժամանակ դրամատէրը կորցնում է իր դրամագլուխը, արհեստատէրը՝ իր արտադրութեան միջոցները, իսկ պրոլետարիան կորցնում է հնարաւորութիւնը ծախելու իր աշխատասեր ձեռները դրամատիրոջ: Տառնեակ և հարիւր հազարներով բանւորներ փողոց են շպրտւում և ուժասպառ են աշխատազուրկների շարքերը: Իսկ այդ հանդամանքը հնարաւորութիւն է տալիս դործող դրամատէրերին աւելի ևս իջեցնելու աշխատավարձը: Եւ միայն այն ժամանակ, երբ աշխատասեր ձեռների առաջարկը քիչ-շատ կը հաւասարւի նրանց խնդրանքի հետ, աշխատավարձը կը սկսի բարձրանալ մինչև իր առաջւայ մակերեւոյթը:

Այսպիսով դրամատիրական արդիւնաբերութեան զարդացումը, որ արտայայտւում է դրամագլխի անընդհատ կենտրոնացման և նրան անխուսափելիօրէն հետեւող գերարտադրութեան միջոցով, զրկում է հասարակութեան աւելի ու աւելի բազմաթիւ անդամներին ամենատեսակ վտանգութիւնից վաղւան օրւայ մասին:

**Դրամատիրական կարգերի խորտակումը.** — Երբ դրամատիրական արդիւնաբերութեան համար ստեղծւում է հնարաւորութիւն անարդել զարդանալու, նա կամաց-կամաց ստեղծում է այնպիսի հասարակական պայմաններ, որոնց մէջ նրա սեփական դոյութիւնը դառնում է



անհնար: Դրամատիրական արդիւնաբերութեան զարդացումն առաջ է բերում դրամագլխի կենտրոնացում աւելի ու աւելի փոքրաթիւ դրամատէրերի ձեռքում: Եթէ հնթադրենք, որ այսուհետև էլ նա առաջ կը գնայ այնպէս, ինչպէս մինչև այժմ, վերջ ի վերջոյ արտադրութեան բոլոր միջոցները, բոլոր հարստութիւնները պէտք է դառնան մի քանի արդիւնագործական կրեսոսների սեփականութիւն, իսկ մնացած ազգաբնակութիւնը կ'աշխատի այդ կրեսոսների համար որպէս վարձու բանւորներ և ծառայողներ: Այդ կը լինի բնական սահմանը, որից դէպը դրամատիրական արդիւնագործութիւնը չի կարող գնայ:

Կարո՞ղ է արդեօք դրամատիրական արդիւնագործութիւնը չարունակել իր դոյութիւնը իր զարդացման սահմանին հասնելուց յետոյ: Այն փոքրաթիւ բաղդատւորների համար, որոնց ձեռքում կը լինեն բոլոր դրամագլուխները, դրամատիրական արդիւնագործութեան յետագայ զարդացումը ի հարկէ ոչինչ նշանակութիւն չի ունենայ: Եթէ նրանցից կախւած լինէր, նրանք լիովին գոհ լինելով իրանց դրութիւնից, կ'ուզենային միայն յաւերժացնել այդ դրութիւնը:

Բայց բանն էլ նրանումն է, որ դրամատիրական արդիւնագործութիւնը հնարաւականաւ երեւոյթ է:

Զարդանալով, նա հետզհետէ մտցնում է հասարակակարգի մէջ այնպիսի փոփոխութիւններ, որոնք իրանց կողմից ազդում են արդիւնագործութեան վրայ և ազդում են այնպէս, որ պարոն դրամատէրերին այնքան էլ դուր չի կարող գալ: Հիմնական փոփոխութիւնը կայանում է նրանում, որ դրամագլխի կենտրոնացումը, դարձնելով ինքնուրոյն արտադրողներին պրոլետարներ, սովորեցնում է նրանց արտադրութեան մէջ համաձայնեցրած գործողութիւնների, իսկ արժէքների դրամատի-

րական բաչխումը հետզհետէ զարգացնում է նրանց զա-
սակարգային ինքնագիտակցութիւնը և ստիպում է նրանց
յաճախ կռւի բռնել դրամատիրական դասի հետ: Կար-
գային չաները, հակամարտութիւնը և դասակարգային
կռիւը աւելի եւս սուր կերպարանք են ստանում չնոր-
հիւ այն հանգամանքին, որ դրամագլխի կենտրոնացու-
մը և նրա հետ կապւած արդիւնագործական ճգնաժա-
մերը չափազանց խախուտ և անապահով են դարձնում
հասարակութեան անդամների անգլին մեծամասնութեան
դրութիւնը: Դրամատիրական հասարակութեան զար-
գացման հետ աւելի ու աւելի սակաւաթիւ է դառնում
հասարակութեան այն մասը, որին ձեռնտու են դրամա-
տիրական կարգերը, և աւելի ու աւելի մեծաքանակ է
դառնում այն մասը, որը ցասումով ու անհնազանդու-
թեամբ է կրում իրան դրամագլխին կապող չղթաները:

Ահա թէ ինչու, երբ դրամագլխի կենտրոնացումը իր
զարգացման գագաթնակէտին կը հասնի, բոլոր արտա-
դրութեան միջոցների տէր փոքրաթիւ արդիւնագործական
կրեսոսների առաջ կանգնած կը լինի ոչ թէ ընկճւած ու
լքւած սարուկների մի ամբոխ, այլ ամենաստիպ կերպով
համախմբւած աշխատաւոր դասը, որ սովոր է հասարա-
կական աշխատանքի և պիտակցական կռւի՝ իր չաների
համար:

Եթէ անմիջական հետեւանքների հիման վրայ դա-
տելու լինենք, հեչտութեամբ պիտի դանք այն եզրակա-
ցութեան, որ քանի դեռ դրամատիրական արդիւնագոր-
ծութիւնը գտնւում է զարգացման ըրութեան մէջ, նա
անընդհատ լայնացնում և կատարելագործում է հասա-
րակութեան արդիւնաբերողական ոյժերը և հէնց դրանով
օգուտ է տալիս, թէև այդ օգուտը ձեռք է բերւում
ամբողջ աշխատաւոր դասի սոսկալի տանջանքների գնով:
Բայց հասնելով իր զարգացման բնական սահմանին, կոր-



ցնելով ընդունակութիւնը նպաստելու արդիւնաբերողա-
կան ոյժերի յետագայ զարգացման և աշխատանքի հա-
սարակայնացման, դրամատիրական արդիւնագործութիւնը
կորցնում է իսպառ իր հասարակական իմաստը: Այն ժա-
մանակ գալիս է ժամը ամբողջ դրամատիրական հասա-
րակարգի: Ինչպէս զարգացած ճուտը (հաւի ձագը)
չարգում է այլ եւս նրա համար աւելորդ կեղեւը հաւ-
կիթի, որից նա դուրս է եկել, այնպէս էլ արտադրու-
թեան կենտրոնացման և աշխատանքի հասարակայնացման
աղեցութեան տակ հասունացող ընկերվարային (սօցի-
ալիստական) հասարակութիւնը դէն կը չպրտէ իր հնա-
ցած և անպէտք դրամատիրական կեղեւը: Արտադրու-
թեան միջոցները, որոնք դրամատիրական կարգերի ժա-
մանակ էլ կազմում էին հասարակութեան գոյքը, բայց
դանւում էին դրամատէրների տրամադրութեան տակ,
կ՝անցնեն այն ժամանակ ամբողջ հասարակութեան ձեռ-
քը՝ հասարակական շահեցողութեան համար:

Բայց դրամատիրական կարգերի հասարակական նչա-
նակութեան մասին մեր տասնեակից դեռ չը պէտք է
եզրակացնել այն, որ դրամատիրական անտեսութիւնից
դէպի ընկերվարային անցք կարող է կատարւել ինք-
նաբերաբար, այսինքն սոսկ արտադրութեան կենտրո-
նացման և աշխատանքի հասարակայնացման ներգործու-
թեամբ: Արտադրութեան կենտրոնացումը և աշխատան-
քի հասարակայնացումը պատրաստում են միայն պայ-
մաններ այդ անցքի համար, հնարաւոր են դարձնում ի-
րագործումը ընկերվարական կարգերի, որոնք հիմնւած
կը լինեն հասարակական արդիւնագործութեան վրայ հա-
սարակական չահեցողութեան մէջ գանւող գործիքների
միջոցով:

Բայց իրօք ընկերվարային հասարակակարգը կարող
է իրագործւել միայն այն ժամանակ, երբ նա հասունա-

ցած կը լինի աշխատաւոր դասի գլխում և արտումը : Աշխատաւորները պիտի հասկանան ընկերվարային կարգերի ամբողջ արդարութիւնը և վեհութիւնը, երբ մարդս մարդու համար եղբայր կը լինի, և ոչ գայլ, ինչպէս այժմ. իրանց սրտերում նրանք պիտի զգանեն արիութիւն, որ անհրաժեշտ է այդ կարգերի իրագործման համար հարկաւոր յամառ և ծանր պայքարի մէջ : Իսկ արիութիւն հարկաւոր է, և մեծ արիութիւն, որովհետև մարդկութիւնը զգուշած է դէմ հասարակական զարգացման այն ցածր աստիճանի վրայ, երբ երջանկութեան իրաւունքը ձեռք է բերւում միայն յամառ և ծանր կռւով :

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւ այսպէս, ինչո՞ւմն է կայանում դրամատիրական հասարակութեան զարգացման ներքին օրէնքը :

Դրամատիրական հասարակութեան հիմքը կազմում է դրամատիրական արդիւնագործութիւնը :

Ուսան և դրամատիրական հասարակութեան զարգացումը կարող է սկսւել միայն այն ժամանակ, երբ իրագործւում է դրամատիրական արդիւնագործութեան զարգացումը :

Իսկ վերջինս զարգացման համար անհրաժեշտ է, որ լինեն հետեւեալ չորս հիմնական պայմանները. — 1. աշխատանքի արդիւնաւէտութեան որոշ մակերեւոյթը, որ ժամանակ աշխատաւորը արտադրում է աւելի, քան հարկաւոր է նրա ապրուստի համար. 2. աշխատանքի լայն բաժանումը, որ հիմնւած է արդիւնքների լայն փոխանակութեան և ապրանքների արտադրութեան հնարաւորութեան վրայ. 3. դիւութեան որոշ մակերեւոյթը հասարակութեան մէջ, որ հնարաւորութիւն է տալիս անընդհատ կատարելագործելու արտադրութեան միջոցները



րը և ձեւերը, և վերջապէս 4. գործողութիւնների ազատութիւնը հասարակութեան իւրաքանչիւր անդամի համար :

Այդ պայմանների ներկայութեամբ դրամատիրական արդիւնագործութիւնը սկսում է զարգանալ և, զարգանալով փոխանակութեան ենթարկել ամբողջ հասարակարգը և իր դրամատիրական դրոշմը դնել նրա վրայ :

Դրամատիրական արդիւնագործութեան զարգացումը սկսւում է աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումից : Աշխատանքի ձեւաբանական բաժանման և պարզացման ճանապարհով տեղի է ունենում արդիւնաւէտութեան ուղղակի բարձրացում, իսկ արտադրութեան գործիքների և միջոցների աւելի կատարեալ չանեցողութեան շնորհիւ՝ տեղի է ունենում արդիւնաւէտութեան անուղղակի բարձրացում : Համեմատելով կատարելագործման որոշ աստիճանի՝ աշխատանքի ձեւաբանական բաժանումը պահանջում է արդիւնագործութեան ընդարձակում, իսկ ընդարձակած արդիւնագործութիւնը իր կողմից հնարաւորութիւն է տալիս աւելի առաջ մղելու աշխատանքի ձեւաբանական բաժանումը և պարզացումը : Կամաց-կամաց արհեստաւորական աշխատանքը փոխարինում է մեքենային արդիւնագործութեամբ և ձեւաբանական կերպարանափոխւում, դառնում է գործարան : Դրամատիրական արդիւնագործութեան աճումը նշանակում է մի կողմից, որ ինքնուրոյն արտադրողների աւելի ու աւելի մեծ բազմութիւն զրկւում է արտադրութեան միջոցներից, — միւս կողմից, որ արտադրութեան միջոցները հաւաքւում են աւելի ու աւելի փոքրաթիւ դրամատէրերի ձեռքում : Տնտեսագիտութեան մէջ այդ կոչւում է դրամագլխի կենտրոնացում :

Դրամագլխի կենտրոնացումը իրագործւում է մրցման միջոցով : Շնորհիւ աշխատանքի արդիւնաւէտութեան

անընդհատ բարձրացման, մանուֆակտուրիայի կարող է իր ապրանքները ծախել ավելի էժան, քան արհեստաւորը, իսկ խոշոր գործատուները ավելի էժան, քան մանրը և միջակը: Այդ պատճառով ինչպէս արհեստաւորական, այնպէս էլ դրամատիրական մանր արտադրողները համեմատած խոշորների հետ աչքաթող են ի վնաս իրանց և վերջ ի վերջոյ ոչնչանալ է գրկված իրանց արտադրութեան միջոցներից: Մանր արդիւնագործութիւնը չքանում է, իսկ խոշորը ավելի ևս խոշոր է դառնում:

Զարգանալով անտեսութեան մի որ և է ճիւղում, դրամատիրական արտադրակերպը սկզբում տարածւում է տուեալ ճիւղերի վրայ, և յետոյ միայն ուրիշ ճիւղերի վրայ: Նա ազդում է մանր տնտեսագործական անտեսութեան վրայ, մտցնելով նրա մէջ հետզհետէ աշխատանքի բաժանում դարձնելով քեանական անտեսութիւնը, որի ժամանակ տնտեսագործը ինքն է արտադրում իր կարիքները տնտեսութեան համար անհրաժեշտ բոլոր առարկաները, — ապրանքային, որի ժամանակ տնտեսագործը արտադրում է ծախու համար, արտադրում է ապրանքներ: Տնտեսութեան իւրաքանչիւր ճիւղ, որ ընկնում է ապրանքային արդիւնագործութեան ճանապարհի վրայ, անխուսափելիորէն ընկնում է կենտրոնացման ճանկը, որ այնքան կատաղի է մանր արդիւնագործութեան հանար և այնքան նպաստաւոր խոշոր արդիւնագործութեան համար:

Մանր արդիւնագործութիւնը աշխատում է վոքր, անզօրեն չուկայի համար, և այդ պատճառով բուռն յաջող կերպով կարող է յարմարուել նրա պահանջներին, ապրանքի իմդրանքին: Ընդհակառակը, խոշոր արդիւնագործութիւնը ստիպած է աշխատել համաչափարժէքի չուկայի համար, որի պահանջները չէն կարող աւելորդ որոշ լինել նոյնիսկ մօտաւորապէս: Որովհետև ապրանքների իմդրանքը անմանափակ է, իսկ խոշոր արդիւնագործութեան ընդարձակման ձգտումը՝ անսահման, ուստի արդիւնագործութիւնը և ապրանքների առաջարկը աճում են ավելի արագ, քան նրանց իմդրանքը: Տեղի է ունենում գերարտադրութիւն, ապրանքները մնում են իրանց տեղերում, առաջ է գալիս ճգնաժամը, կրիզիսը, որից անվնաս դուրս են գալիս միայն փոքրաթիւ դրամատէրեր: Երբ վերջանում է ճգնաժամը, նրանք նորից են սկսում գործը և ավելի ևս կենտրոնացնում են իրանց ձեռքում արդիւնագործութիւնը և դրամագլուխը:

Աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումը և արդիւնագործութեան ընդարձակումը դրամատիրոջ համար ներկայանում են որպէս միջոցներ նրա չահը ավելացնելու և նրա ձեռքում կենտրոնացնելու ավելի ու ավելի մեծ դրամագլուխներ: Իսկ եթէ հասարակական տեսակէտից նայելու լինենք, կը տեսնենք, որ նրանք ներկայացնում են հասարակութեան արդիւնաբերողական ոյժերի զարգացումը աշխատանքի և արտադրութեան միջոցների հասարակայնացման ճանապարհով:

Արդիւնագործութեան և դրամագլխի կենտրոնացումը քանդում-ոչնչացնում է հասարակութեան միատարրութիւնը, առեղծելով անհաւասարութիւն արտադրողների մէջ: Իսկ դրամատիրական բաշխման պայմանները բաժանում են հասարակութիւնը երկու մեծ, իրար հակադիր դասերի — աշխատաւորական և դրամատիրական: Դրամագլխի անընդհատ կենտրոնացումը և նրանից հետևող, իրար չայորդող գերարտադրութիւնն ու արդիւնագործական ճգնաժամը չափազանց անապահով են դարձնում այն բոլորի դրութիւնը, որոնք այս կամ այն առնչութիւնը ունեն արդիւնագործութեան հետ: Այդ հանգամանքը ավելի սուր կերպարանք է տա-

լիս աշխատաւորական և դրամատիրական դասերի համագործակցութեան և առճակատման աշխատաւորութեան դասային ինքնագիտակցութեան զարգացմանը համար նպաստաւոր պայմաններ։ Երբ գայ վախճանը արդիւնագործութեան և դրամագլխի կենտրոնացման փոքրաթիւ արդիւնագործական կրեատորների դէմ կանգնած կը լինի գիւտակցօրէն համերաշխ և կռւի վարժ աշխատաւորական դասը։ Այն ժամանակ տեղի կ'ունենայ դանդաղ կերպով հասունացած յեղաշրջումը — արտադրութեան դրամատիրական կարգերը իսպառ կը կործանուեն, և նրանց տեղը կը բռնէ սոցիալիստական հասարակակարգը։

Այս է դրամատիրական հասարակութեան զարգացման ներքին օրէնքի էութիւնը, որ առաջին անգամ Մարքսը և Էնգելսը յայտնեցին 1848 թ. հրատարակած «Կօմմունիստական կուսակցութեան Մանիֆեստում»։

Հետեւելով այս օրէնքը, Մարքսն ու Էնգելսը եկան այն եզրակացութեան, որ արդիւնագործութեան և դրամագլխի կենտրոնացումը պէտք է հասնի իր սահմանին չատ արագ, և այդ պատճառով էլ դրամատիրական երկիրներում ընկերվարական հասարակակարգը կը յաղթանակէ ամենամօտ ապագայում։ Եթէ Մարքսի և Էնգելսի դուշակութիւնները կատարուէին, այդ դէպքում ընկերվարական կարգերը պիտի իրագործուած լինէին աշխարհիս վրայ արդէն 30–40 տարի առաջ։

——

Ելակէտ ընդունելով վերոյիշեալ ներքին օրէնքը, որը Մարքսի հետեւողներից չատերի համար ստանում է իսկական անսխալական օրէնքի արժէք, Մարքսը փորձ արեց պարզելու այն նշանակութիւնը, որ դրամատիրական կարգերը ունեն մարդկային հասարակութիւնների զարգացման պատմութեան մէջ։



Եթէ մի կողմ թողնենք դրամատիրական հասարակակարգի մարդկութեան պատճառած դժբաղդութիւնները և տառապանքները և նայենք հասարակութեան զարգացման վրայ, ինչպէս, օրինակ, մենք նայում ենք բոյսի զարգացման վրայ, այն ժամանակ դուրս է գալիս, որ դրամատիրական արդիւնագործութիւնը իր բոլոր հետեւանքներով ներկայանում է մեզ, իբր հասարակութեան զարգացման աստիճաններից մէկը։ Ճիշտ այնպէս, ինչպէս հայթայթի ուռչելը և ծլելը ապահովում են նրան կատարելապէս աճելու հնարաւորութիւնը, դրամատիրական կարգերը զարգացնում են ամբողջ լայնութեամբ հասարակութեան արդիւնաբերողական ոյժերը և ապահովում նրան — թանկ գնով — յետագայ զարգացման հնարաւորութիւնը։ Հասարակութեան արդիւնաբերողական ոյժերի զարգացումը — ահա բան երեւոյթին այն բանալին, որով կարելի է բացատրել դրամատիրական կարգերի նշանակութիւնը հասարակութեան զարգացման պատմութեան մէջ։ Երբ բոյսը արդէն արմատներ և տերեւներ ունի և հնարաւորութիւն է ստացել ազատ կերպով ծանուելու, — հայթայթիկի ուռչելը և ծլելը նրա համար արդէն չունի ոչինչ նշանակութիւն, զարգացման այդ աստիճանը մնացել է անցեալում, նրան ապրել է բոյսը։

Ճիշտ այդպէս էլ, երբ հասարակութեան արդիւնաբերողական ոյժերի զարգացումը հասել է որոշ աստիճանի, որը համապատասխանում է աշխատանքի աւելի կամ պակաս իմաստուն հասարակական բաժանման, դրամատիրական կարգերը կորցնում են արդէն իրանց նշանակութիւնը և ոչնչանում։

Հետեւեալ գլխում ցոյց կը տանք թէ ինչպիսի առանձնահատկութիւններ անհրաժեշտ է մտցնել դրամատիրական հասարակակարգի պատմական նշանակութեան այդ տեսակ մեկնութեան մէջ։

# ԳԼՈՒԽ Բ.

## ԴՐԱՄԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՕՐԷՆՔԻ ՎԵՐՏՈՒԹԻՒՄԸ ՆՈՐԱԳՈՅՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

1. Ինչո՞ւմ Մարխի եւ Էնգելսի ենթադրական օրէնքը հաստատւեց. — Հասարակութեան արդիւնաբերողական ոյժերը զարգացումը աշխատաւիճի արդիւնաւէտութեան բարձրացման եւ արդիւնագործութեան կենտրոնացման միջոցով. — Դրամատէր-արդիւնաբերողների միութիւնները կամ տրիաները. — Փուլային (բանկային) եւ առեւտրական դրամագլխի կենտրոնացումը. — Գերարտադրութիւն եւ ճգնաժամ (կրիզիս). — Հասարակութեան շերտաւորում եւ աշխատաւորութեան դասային իմիւնագիտակցութեան անում:

2. Ինչո՞ւմ Մարխի եւ Էնգելսի ենթադրական օրէնքը շեղւած է իրականութիւնից. — Համապատասխանո՞ւմ է արդեօք լիովին արդիւնագործութեան կենտրոնացումը դրամագլխի կենտրոնացման. — Խոշոր եւ մանր արդիւնագործութիւնը ճարտարարւեստի մէջ. — Դրամատիրական ճնշեւութիւնը հողագործութեան մէջ. — Դրամատիրական հասարակակարգի կործանման ժամը:

3. Մարխի վարդապետութեան ընդհանուր գնահատումը. — Ուղղումներ դրամատիրական կարգերի զարգացման ենթադրական օրէնքի մէջ. — Ներկայացնո՞ւմ է արդեօք դրամատիրական արդիւնագործութիւնը, որպէս պատճառ աշխատաւիճի հասարակականացման. — Գիտութիւնը, որպէս հիմնական խթան արդիւնաբերողական ոյժերի զարգացման եւ աշխատաւիճի հասարակականացման. — Կազմո՞ւմ են արդեօք դրամատիրական կարգերը իւրաքանչիւր հասարակութեան զարգացման անհրաժեշտ ասպիճանը. — Եզրակացութիւններ:

*Դրամատիրական արդիւնագործութիւնը սկսել զարգանալ արեւմտեան Եւրոպայում անցեալ դարի սկզբից, իսկ «Կոմմունիստական կուսակցութեան մանիֆեստը», որի մէջ Մարքսը և Էնգելսը առաջին անգամ պարզեցին*



*դրամատիրական հասարակութեան զարգացման ենթադրական օրէնքը, լոյս տեսաւ 1848 թւին: Սրանից կրկւում է, որ այդ օրէնքը պարզելու համար Մարքսը և Էնգելսը կարող էին օգտւել այն դիտողութիւններով, որոնք արւած էին դրամատիրական արդիւնագործութեան մօտաւորապես 40 ամեայ զարգացման ընթացքում: Եթէ սրա վրայ աւելացնենք այն, որ վերոյիշեալ «մանիֆեստը» (յայտարարութիւն) լոյս տեսնելու պահուն միայն Անգլիան և մասամբ Ֆրանսիան հասած էին զարգացման նկատելի աստիճանի դրամատիրական տեսակէտից, այդ դէպքում հասկանալի կը լինի, որ Մարքսը և Էնգելսը կարող էին ցոյց տալ դրամատիրական արդիւնագործութեան զարգացման միայն ընդհանուր ուղղութիւնը, և ուրւագծել այդ զարգացման ենթադրական օրէնքը: Այն ժամանակից անցել է 60 տարի: Այդ ժամանակամիջոցում դրամատիրական արդիւնագործութիւնը հասել է զարգացման բարձր աստիճանի ոչ միայն Արեւմտեան Եւրոպայի գլխաւոր երկիրներում և Հիւսիսային Ամերիկայում, այլ և կարողացել է դրաւումներ անել և այնպիսի յետ մնացած երկիրներում, ինչպէս են Աւստրիան, Իտալիան, Ռուսաստանը, և նոյնիսկ Եապօնիան, որ համարեա հազարաւոր տարիներ կանգնած էր մնացել մանր արհեստի և մանուֆակտուրային արդիւնագործութեան աստիճանի վրայ: Դրամատիրական հասարակութեան զարգացումը դիտելու տարածութիւնը չափազանց լայնացել է և այժմ հնարաւորութիւն կայ ստուգելու այդ զարգացման ենթադրական օրէնքը, ինչպէս այդ անւում է գիտութեան մէջ առհասարակ բոլոր ենթադրական օրէնքների վերաբերմամբ: Այս գլխում մենք կը տեսնենք թէ ինչո՞ւմ նա արդարացաւ և ինչո՞ւմ չեղւեց իրականութիւնից, և կ'աշխատենք տալ Մարքսի վարդապետութեան ընդհանուր գնահատումը:*

## 1. ԻՆՉՊԻՍ ԱՐԴԱՐԱՑԱՒ ՄԱՐԲՈՒՆ ԵՒ ԷՆԳԵԼՍԻ ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ

**Հասարակութեան արդիւնաբերողական ոյժերի զարգացումը արդիւնագործութեան կենտրոնացման եւ ազնաստանիի արդիւնաւէտութեան բարձրացման միջոցով.** — *եթէ կէս դար առաջ մեռած մարդիկ կարողանային իրանց գերեզմաններից եղնել և նայել այժմեան կեանքին, մրքան սարսափելի կը գտնէին նրանք անցեալի և ներկայի մէջ: Որտեղ առաջ փռւած էին խաղող ու երանելի դաշտերը, այնտեղ այժմ դղրդում են գործարանային մեքենաները, մխում են գործարանային ծխնելոյզները: Երկիրը չղթայած է երկաթէ գծերի ցանցով, որոնց վրայով զիչեր-ցերեկ սլանում են ծանր բեռնաւորւած հազարաւոր գնացքներ, երկիրը ծածկւած է անթիւ-անհամար մետաղէ լարերի ոստայնով, որոնք կայծակի արագութեամբ տարածում են աշխարհիս չորս բոլորը մարդուս միտքը և խօսքը: Գետերի ու ծովերի վրայ գնում գալիս են տոննակաւոր-հազարաւոր ճեպընթաց շոգենաւեր, և այժմ ովկիանոսի վրայով Ամերիկա հասնելու համար նոյնքան ժամանակ է պէտք, որքան մի յիսուն տարի սրանից առաջ պէտք էր որ և է Սամարայից Մոսկւա ընկնելու համար: Որտեղ առաջ փոքրիկ քաղաքներ էին, այնտեղ այժմ կանգնած են վիթխարի քաղաքներ, որոնց մէջ հարիւր հազարաւոր մարդիկ վազվզում, վխտում են, ինչպէս մրջիւնները իրանց բնում: Որտեղ առաջ փոքրիկ խանութներ էին, այնտեղ այժմ կանգնած են պալատանման վաճառանոցներ, որոնք զբաղում են գնորդներին գեղեցիկ զարդւած ապրանքներով և առաջարկում նրանց փողով այն բոլորը, որ նրանց սիրտն է ցանկանում: Մարդիկ ապրում են աւելի*



*լաւ բնակարաններում, հագնում են աւելի լաւ քան առաջ: Դառել են նրանք աւելի խելացի և աւելի կրթւած, որովհետև նրանց մտաւոր կարիքները հոգալու համար տպագրական մեքենաները արտադրում են օրական տպագրական թղթի միլիոնաւոր քիլօներ... Մի խօսքով, դժւար է մի առ մի թւել այն մեծ փոփոխութիւնները, որոնց ենթարկւել է կուլտուրական հասարակութիւնների կեանքը վերջին յիսուն տարւայ ընթացքում:*

*Իւրաքանչիւր, նոյնիսկ ոչ այնքան չրջահայեաց մարդու համար պարզ է, որ այդ բոլոր փոփոխութիւնների հիմքը կազմում է մի պատճառ — արդիւնաբերողական ոյժերի անընդհատ զարգացումը: Եթէ երեւան են եկել գործարաններ այնտեղ, որտեղ նրանք առաջ չը կային, այդ ցոյց է տալիս, որ առաջ է եկել այնպիսի արդիւնագործութիւն, որ առաջ չը կար, այսինքն խոշոր մեքենային արդիւնագործութիւն: Եթէ երկիրը ծածկւած է երկաթուղիների ցանցով, այդ նշանակում է, որ ապրանքային արդիւնագործութիւնը այնպէս է ընդարձակւել, որ կարիք է զգացւել հաղորդակցութեան նոր ու արագ միջոցների, արտադրւած ապրանքների համապատասխան վաճառքը ապահովելու համար: Քաղաքային ազգաբնակութեան արագ աճումը նոյնպէս նշանակում է, որ աճել է արագ կերպով քաղաքային արդիւնագործութիւնը, և այլն, և այլն:*

*Այսպիսով՝ դուրս է գալիս, որ այն ժամանակից, երբ Մարքսը և Էնգելսը առաջին անգամ յայտարարեցին դրամատիրական հասարակութեան զարգացման ենթադրական օրէնքը, արդիւնաբերողական ոյժերի զարգացումը քաղաքակրթւած երկրներում արել է հսկայական քայլեր: Տեսնենք այժմ թէ որքան արդիւնաբերողական ոյժերի այդ նորագոյն զարգացումը համապա-*

տասնամյակ է Մարքսի և Էնգելսի սրանից կէս դար առաջ արած եզրակացութիւններին:

Նախորդ գլխում մենք ցոյց ավինք, որ արդիւնաբերական այժերի զարգացման հիմքը կազմում է աշխատանքի արդիւնաւէտութիւնը վերջին յիսուն տարուայ ընթացքում: Այդ հարցին դժուար չէ պատասխանել: Եթէ հաստատակ հայեացք գցենք մեր ժամանակի անասնական կեանքի վրայ, կը տեսնենք, որ չը կայ արդիւնագործութեան մի ճիւղ, որի մէջ մեքենան գէթ մասամբ չը փոխարինէր արտադրողի արհեստաւորական հմտութիւնը: Արդիւնագործութեան մի քանի ճիւղերը, ինչպէս օրինակ ջուլհակութիւնը (ոստայնանկութիւն), բոլորովին լցած են մեքենաներով, միւս ճիւղերի մէջ մեքենաները գոյութիւն ունեն մանրաբիզնեսի հետ միասին և հետզհետէ դուրս են քշում նրան, բայց ամենուրեք արդիւնագործութեան հասկացողութիւնը կապած է անխզելի կերպով մեքենայի հասկացողութեան հետ: Ի դուր չէ ասւում տեղի-անտեղի, որ մեր դարը մեքենայի դար է:

Բայց մեքենաները չատ վազ արժին, և մոտիւում են նրանք արդիւնագործութեան մէջ միայն այն ժամանակ, երբ նրանք իրօք ձեռնտու են, այսինքն երբ նրանք բարձրացնում են աշխատանքի արդիւնաւէտութիւնը: Այդ պատճառով, արդիւնաբերութեան մէջ գործող մեքենաների քանակը ի նկատի առնելով, կարելի է ուղղակի կարծիք կազմել աշխատանքի արդիւնաւէտութեան աստիճանի մասին: Իսկ որովհետև այժմ նոյնքան մեքենայ կայ, որքան առաջ՝ երկրում, ուստի և աշխատանքի արդիւնաւէտութեան աճումը վերջին 50 տարուայ ընթացքում չի կարող կտակած երեւակել:

Աշխատանքի արդիւնաւէտութեան անընդհատ բարձրացումը և հասարակութեան արդիւնաբերողական այժերի աճումը ցոյց են տալիս, որ այդ ժամանակամիջոցում արդիւնագործութիւնը իր տեղում կանգնած չէ մնացել, այլ ընդհակառակը, անընդհատ զարգացել է: Բայց այդ դէտ ոչինչ չի ասում այն բանի մասին՝ թէ ինչպէս է տեղի ունեցել այդ զարգացումը և հետեւել է նա արդեօք Մարքս և Էնգելսի դուրս բերած եզրակացութեան օրէնքին:

Այդ օրէնքով աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումը, որ առաջ է բերում դրամատիրական արդիւնագործութիւնը, անխուսափելիօրէն առնում է դէպի արդիւնագործութեան լայնացումը, իսկ արդիւնագործութեան լայնացումը իր կողմից հնարաւոր է դարձնում աշխատանքի արդիւնաւէտութեան յետագայ զարգացումը: Զգալով անասնական ընդարձակման, իւրաքանչիւր դրամատիրական ձեռնարկութիւն ընդհարւում է և պայքարում իր նման ուրիշ ձեռնարկութիւնների հետ: Յաղթում են այդ կռւում այն ձեռնարկութիւնները, որոնք կարող են չափազանց ակրը դառնալ. ծախսելով իրանց ապրանքները ամենաէժան գներով: Իսկ որովհետև, որքան աւելի խոշոր է արդիւնագործութիւնը, այնքան աւելի նա կարող է բարձրացնել աշխատանքի արդիւնաւէտութիւնը և իջեցնել ապրանքների արժէքը, ուստի դրամատիրական կարգերում խոշոր արդիւնագործութիւնը պէտք է անընդհատ չափազանց դուրս գայ և կուլ տայ մանր արդիւնագործութիւնը: Այդ պատճառով դրամատիրական արդիւնագործութեան՝ լայնացման ձգտումը պէտք է անխուսափելիօրէն առաջ բերի արտադրութեան և դրամագլխի կենտրոնացում աւելի ու աւելի փոքրաթիւ դրամատէրերի ձեռքում: Տեղի է ունեցել է արդեօք արտադրութեան և դրամագլխի այդպիսի կենտրոնացում վերջին յիսուն տարուայ ընթաց-

քում : Դիտազրկիչը ցոյց տուեց, որ կենտրօնացումը տեղի է ունեցել անկասկած, բայց ոչ լիովին այնպէս, ինչպէս այդ պէտք է լինէր Մարքսի և Էնգելսի ուրուագրած օրէնքի համաձայն : Նախ անունը թէ՛ տրեստ նա հաստատուեց, իսկ չեզուններով մենք կըզբաղենք առանձին :

Ամենօրեայ կեանքի այն երեւոյթները, որոնց մէջ բացայայտուում է արդիւնաբերողական ոյժերի հակադրական զարգացումը ժամանակակից հասարակութեան մէջ, միաժամանակ վկայում են խոշոր արդիւնաբերութեան հրապարական աճումը, այսինքն արդիւնագործութեան կենտրօնացումը : Նայելով գործարանային ձեռնարկներին, որոնք ծածկում են երեսին հոլի անապին ապրանքները և պարունակում իրանց մէջ բազմաթիւ բարդ մեքենաներ, ամեն մի քիչ չաս բանիմաց մարդ կը հասկանայ, որ այդ ձեռնարկների մէջ գործում է ոչ մանրաբեռնատը, ոչ էլ մանր դրամատիրական արդիւնաբերութիւնը, այլ խոշոր արդիւնաբերութիւնը, որ այդ գործարաններում հազարաւոր և տասնեակ հազարաւոր պրօլետարներ քանում են աշխատանքի բաժանման դրութեամբ՝ մի գործատիրոջ կամ նրա կառավարչի կամքով : Հաշուել են, որ դրամատիրութեան առաջաւոր երկիրներում, ինչպէս են Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան, ամբողջ արդիւնագործութեան (բացի հողագործութիւնից) համարեա երեք չորրորդը բաժին է ընկնում խոշոր դրամատիրական ձեռնարկութիւններին : Դրա հետ միասին ոչ միայն աճում է անընդհատ խոշոր գործարանների քանակը, այլ և աւելանում է չարունակ իւրաքանչիւր առանձին ձեռնարկութեան մէջ զբաղած բանւորների թիւը : Նոյնիսկ մեզանում փոքրաթիւ չեն այդպիսի գործարանները, որոնց վրայ աշխատում են միասին մի քանի հազար մարդիկ, իսկ Արեւմտեան Եւրոպայում աւելի եւս : Արդիւնագործութեան կենտրօնացման ամենատպաւոր օրինակներ կարող են ծառայել Կրուզոլի յայտնի պողպատ ձուլող գործարանները Գերմանիայում, որոնք կամաց-կամաց այնքան մեծացան, որ այժմ 80,000 բանւոր են բանեցնում :



**Գործարանատէրերի միութիւնները կամ տրեստները** (trust) :—Առանձնապէս առաջ գնաց արդիւնագործութեան կենտրօնացումը վերջին երկու տասնեակ տարիների ընթացքում, շնորհիւ արդիւնաբերող-դրամատէրերի բազմատեսակ միութիւնների (այսպէս կոչած տրեստների, սինդիկատների, կարտելների և. այլն) : Մենք տեսանք, որ արտադրութեան և դրամագլխի կենտրօնացումը իրագործւում է արդիւնաբերողների մէջև. չուկայում կատարուող մրցման միջոցով : Խոշոր արդիւնաբերողները կարող են ծախել իրանց ապրանքները աւելի էժան, քան մանրները, — մի հանգամանք, որ հնարաւորութիւն է տալիս նրանց դուրս քշելու իրանց մրցակիցներին և չուկան իրանց ձեռքը գցելու : Բայց մի անգամ ծախելով, խոշոր արդիւնագործութիւնը ձգտում է ամեն կերպ աւելի եւս խոշոր դառնալ, և այդ պատճառով կռիւը չարունակւում է խոշոր դրամատերերի մէջև : Գլխաւոր դէնքը այդ կռուում արդիւնագործութեան անընդհատ կատարելագործումն է, որից առաջ է գալիս ապրանքների արժէքի ընկնելը : Եւ իրօք, քանի դեռ հնարաւորութիւն կայ կատարելագործելու արդիւնաբերութիւնը, ամեն ինչ կարգին է գնում, և ամբողջ գծի վրայ կարելի է նկատել հետամնաց արդիւնաբերութեան մրցարշաւը խոշոր դրամատերերի, որոնցից իւրաքանչիւրը ամեն կերպ աշխատում է առաջինը չուկայ հանել ամենաէժան ապրանքներով : Բայց դարձեալ նրա մէջն է, որ մէյնչ չի կարելի կամայականօրէն կատարելագործել արդիւնա-

բերութիւնը: Գիտնականները առնասարակ իրանց պիտառը պատէրով չեն անում, իսկ արհեստագէտներին (տեխնիկներին) ոչ միշտ և ոչ միանգամից է յաջողւում չանագործելու արդիւնաբերական նպատակներով նոյնիսկ արդէն արւած գիւտերը: Այդ պատճառով արդիւնագործող-դրամատէրերի համար երբեմն գալիս են այնպիսի ժամանակներ, երբ ոչ մի հնարաւորութիւն չի լինում կապելու մրցակիցների հետ արտադրութեան կատարելագործման մրցոյթով: Բայց որովհետև չուկային տիրելու համար նրանք ստիպւած են իջեցնել ապրանքների գները, ուստի նրանց համար բաց է մնում միայն մի ճանապարհ — իջեցնել ապրանքները գները սեփական չափի հաշւին: Իսկ այդ ի հարկէ նրանց ճաշակով չի կարող լինել: Բանի դեռ կոնկուրս խոշոր և մանր դրամատէրերի միջև է, խոշորը չարունակ յաղթում է և բնականաբար գանում է որ մրցումը լաւ բան է: Բայց հէնց որ խոշոր դրամատէրը կապ է բանւում խոշորի հետ, չնորհիւ արդիւնաբերութիւնը կատարելագործելու անկարելիութեան՝ երկուսն էլ վնասւում են, որովհետև երկուսն էլ ստիպւած են գրկւելու իրանց չափի մի մասից: Բայց այդ, եթէ այդ պայմաններում մրցում են իրար հետ քիչ-չատ հաւասար ոյժ ունեցող խոշոր դրամատէրեր, — այդ դէպքում ոչ միայն երկուսն էլ վնասւում են, այլ և նրանցից ոչ մէկը չի կարող յոյս ունենալ յաղթելու միւսին: Մրցումը դրամատէրոջ համար լաւ է, քանի դեռ նա հնարաւորութիւն է տալիս յաղթելու աւելի թոյլին: Բայց եթէ հրապարակի վրայ ոչ թէ աւելի թոյլն է, այլ հաւասարը, որին կուլ տալ անկարելի է, այդ դէպքում ինչի է պէտք մրցումը: Եթէ մանրի վերաբերմամբ խոշոր դրամատէրը գնկալարւում է սարպի՝ աւելի թոյլին ուանելու սոսորութեամբ, — խոշորի վերաբերմամբ նա սկսում է նկատել, որ աւելի ձեռնաու



է գնկալարել — «ագռաւը ագռաւի աչքը չի հանի» առածով: Միմեանց դէմ չը մրցելու համար արդիւնագործութեան այս կամ այն ճիւղի խոշոր արդիւնաբերող-դրամատէրերը միացնում են իրանց ձեռնարկութիւնները և սկսում են աշխատել միասին, բաժանելով իրար մէջ ստացած չափը համաձայն իւրաքանչիւրի ձեռնարկութեան մեծութեան: Կազմւում են արդիւնաբերող-դրամատէրերի միութիւնները կամ արիւանները (համընկերութիւն): Այսպիսի միութիւնները սկզբից և եթ աւելի նպաստաւոր պայմաններում են գանւում:

Ներկայացնելով մի հակայական ձեռնարկութիւն, որ բռնում է արդիւնագործութեան ճիւղի մեծ մասը, միութիւնը ամենակարճ ժամանակում մրցման միջոցով ոչնչացնում է այն բոլոր առանձին ձեռնարկութիւնները, որոնք չեն մտել նրա մէջ, և դառնում է արդիւնագործութեան լիակատար տէրը: Վերացնելով մրցման ամեն մի հնարաւորութիւն, միութիւնը իրօք իր մենաշնորհն է դարձնում արդիւնագործութեան իր գրաւած ճիւղը: Նախօրօք կատարւած հաշւի համաձայն, նա արտադրում է միայն այնքան ապրանք, որքան հարկաւոր է նրան, և այդպիսով խուսափում է գերարտադրութիւնից, որ գալիս է ապրանքների գինը: Տրիւստները ծագեցին Ամերիկայում և առաջ բերին այնտեղ անտեսութեան մի քանի ճիւղերում արդիւնագործութեան իսկապէս գլխաւորապէս պատճառող կենտրոնացում: Սակայն և ուրիշ երկիրներում արդիւնաբերող-դրամատէրերի միութիւնները սկսում են ցոյց տալ իրանց գործունէութիւնը:

**Հաղորդակցութեան միջոցների կեանրօրացումը.** — *Խոշոր արդիւնագործութեան զարգացումը ամենաերաշ կերպով կապւած է հաղորդակցութեան միջոցների եւ ճանապարհների զարգացման հետ: Համաչխարհային*

չուկայի համար աշխատող խոշոր արդիւնագործութիւնը կարող է գոյութիւն ունենալ միայն այն ժամանակ, երբ նա հնարաւորութիւն ունի արագ և մեծ քանակութեամբ հասցնելու արտադրած ապրանքները ուր հարկն է։ Որ վերջին յիսուն տարւայ ընթացքում հաղորդակցութեան միջոցները և ճանապարհները հասել են զարգացման չը տեսնւած աստիճանի, — այդ ամենքին էլ յայտնի է։ Տեղի է ունեցել արդիւնք դրամագլուխի կենտրոնացումը հասարակական անտեսութեան այդ ճիւղի մէջ էլ։

Հաղորդակցութեան նորագոյն միջոցները և ճանապարհները իրանց էութեամբ չեն կարող մանր անտեսութեան առարկայ լինել։ Երկաթուղիների կառուցումը և նրանց չարժական կազմի արտադրութիւնը, ջրանցքների անցկացնելը և չոգենաւերի չինելը պահանջում են մեծ դրամագլուխներ, իսկ իւրաքանչիւր առանձին ձեռնարկութիւն չարժելու համար հարկաւոր են չատ աշխատաւոր ձեռներ։ Այդ հինց պատճառով իւրաքանչիւր երկաթուղային գիծ, իւրաքանչիւր չոգենաւային գիծ իր գոյութեան սկզբից արդէն ներկայանում է համեմատաբար խոշոր դրամատիրական ձեռնարկութիւն։ Այնու ամենայնիւ այս ճիւղում էլ տեղի է ունեցել հակայական կենտրոնացում, որը երբեմն հանում է հաղորդակցութեան միջոցների լիակատար հասարակականացման։

Երկաթուղային ճիւղում գործը սկսւել է նրանից, որ առանձին գծերը միացան-դառնան ձեռնարկութիւններ, իսկ նրանց տէրերը կազմեցին քիչ-չատ խոշոր երկաթուղային ընկերութիւններ։ Այդ ի հարկէ ուներ իր ծանրակչիռ անտեսական պատճառները։ Բանը նրանում է, որ ոչ բոլոր գծերը դանում են նոյնանման նպաստաւոր պայմաններում։ Նրանցից մի քանիսը տանում բերում են չատ ապրանք և ուղեւոր և մեծ եկամուտ



են տալիս, միւսները տանում-բերում են քիչ և փոքր եկամուտ են տալիս կամ բոլորովին ոչինչ չեն տալիս։ Հասկնալի է, որ այսպիսի քիչ չահաւէտ կամ բոլորովին անչահաւէտ երկաթուղային գծերը իրենք իրենց գոյութիւնը չեն կարող պահպանել։ Նրանց չահաւէտութիւնը բարձրացնելու համար անհրաժեշտ է կամ պակասեցնել ընդհանուր ծախսերը կամ աւելացնել փոխադրութիւնը, կամ թէ չէ՝ այդ երկուսն էլ միաժամանակ իրագործել։

Այդ բոլորին մի հասւածով են հասնում, երբ քիչ չահաւէտ գծերը միացնում են չահաւէտ գծերի հետ։ Շնորհիւ ձեռնարկութեան մեծացման՝ պակասում են ծախսերը ճանապարհի իւրաքանչիւր վերստի վրայ։ Միևնոյն ժամանակ, իր ձեռքում պահելով երկաթուղիների ամբողջ ցանցը, ընկերութիւնը կարող է աւելի հաւասար կերպով բաշխելու փոխադրութիւնը իր բոլոր գծերի վրայ և դրանով նպաստել նրանց աւելի չոջող զարգացման։ Եւ իրօք այնպէս եղաւ, որ ամեն մի երկրում ամբողջ երկաթուղային ցանցը կամաց-կամաց մի քանի երկաթուղագծային ընկերութիւնների ձեռքն ընկաւ։

Վերջին երկու տասնեակ տարիների ընթացքում հաղորդակցութեան երկաթուղային միջոցների կենտրոնացումը հակայական քայլեր արեց չնորհիւ երկաթուղիների մանակի կամ ամբողջովին պետութեան ձեռքը անցնելուն։ Երբ մի որ և է դրամատէր կամ դրամատէրերի ընկերութիւն որոշում է երկաթուղային գիծ չինել, նա ամենից առաջ թոյլատրութիւն է խնդրում պետութիւնից, առանց որի օգնութեան չի կարող սկսել ոչ մի երկաթուղային ձեռնարկութիւն։ Երկաթուղու համար տարկաւոր է հատկ մի երկար տարածութիւն, որի ամեն մի կտորը պատկանում է այս կամ այն անձին մասնաւոր սեփականութեան իրաւունքով։ Սակայն մի հողատերը

համար չի կարող ցանկալի կամ ձեռնտու լինել պահանջված հողաբաժինը ծախել և ելնել ամեն ինչ հիմնված լինելը ժամանակավոր առուծախի վրայ, այդ դեպքում չատ հաւանական է, որ ոչ մի երկաթուղի չհնուած չէր լինի: Բայց այստեղ գործի մէջ խանգարում է պետութիւնը: Ներկայ կարգերի պահպանները ամեն կերպ պնդում են, որ սեփականութիւնը սրբազան է և անձեռնմխելի: Սակայն այդ բոլորը միայն խօսքեր են: Նոյնիսկ ներկայ մանաւանդ սեփականութեան վրայ հիմնած դրամատիրական կարգերում պետութիւնը, որ ներկայացնում է ամբողջ հասարակութեան շահերը, թեև չի քաշւում խախտելու առանձին անդամների սրբազան իրաւունքը, երբ հարցը վերաբերում է ամբողջ հասարակութեան: Ինձ, հողի սեփականատիրոջս, հարկաւոր չէ երկաթուղին, բայց նա հարկաւոր է հասարակութեան, և այդ պատճառով իմ հողը ինձանից գրաւում են: Ես մի ձի ունեմ, սրին սիրում եմ և սրին, դուցէ, երբէք չեմ ծախի, ինչքան էլ առաջարկեն: Բայց հասարակութեան հարկաւոր է տնժելաջօրք, և ինձանից խլում են իմ ձին: Պարզ է, որ նոյնիսկ այժմ մանաւանդ սեփականութիւնը, անձեռնմխելի է միայն մինչև այն ժամանակ, քանի նա դեռ չի ընդհարւել ամբողջ հասարակութեան շահերի հետ: Հէնց որ նա կանգնեց հասարակական բարօրութեան ճանապարհի վրայ, նա առանց այլևայլութեան ոչնչացուում է: Ուրիշ խօսքով, հասարակութիւնը իր ամբողջութեամբ վերցրած պահպանում է իր ձեռքում սեփականութեան գերագոյն իրաւունքը այն բոլոր առարկաների վրայ, որոնք կազմում են նրա կեանքի նիւթական հիմքը, այսինքն հողի վրայ, որ հասարակութեան ձեռքի տակ է գանւում, և այն բոլորի վրայ, որ հողի մէջը կամ վրան է գանւում: Դառնանք երկաթուղուն:

Համարելով երկաթուղու կառուցումը օգտակար,



պետութիւնը յանձնում իր ներկայացուցիչների, այսինքն կառավարութիւնը, ասում է դրամատիրոջ արտօնութիւն (կոնսիսիա): Նա գիջում է դրամատիրոջ որոշ ժամանակով երկաթուղին չհնելու և չահագործելու իրաւունքը, միևնոյն ժամանակ հարկաւոր դէպքում բռնի գնում է սեփականատիրոջից այն հողը, որ անհրաժեշտ է դրամատիրոջ նրա ճանապարհի համար: Բայց դրամատէրը բնաւ իր չհնած ճանապարհի սեփականատէրը չէ: Ճանուն ամբողջ հասարակութեան չահերի պետութիւնը գնում է դրամատիրոջ վրայ մի չարք պարտաւորութիւններ, որոնք դրկում են նրան հնարաւորութիւնից իր ուզածի պէս անօրինելու իր կայքը: Ճանապարհը պէտք է այսպէս չհնուի, ապրանքների և ուղևորների փոխադրութեան գինը (դարիֆ) այսպէս պիտի լինի, օրական այսքան գնացքներ պիտի գնան-գան և այլն: Իսկ որովհետև պետութիւնը սիրում է ցոյց տալ իր իշխանութիւնը և աչալրջութիւնը պահպանում է նրան, ուստի և դրամատիրոջ սեփականութեան իրաւունքը ճանապարհի վրայ իրօք համարօր է դրսևորը գնելուն իր չահը, որ ընկնում է այնտեղ, չը նայելով նրա ձեռնարկողական ոգու դէմ յարուցած բոլոր խոչընդոտներին: Եթէ գործի էութեան մէջ մանելու լինենք, առանց դժւարութեան կը տեսնենք, որ իրօք հաղորդակցութեան ճանապարհների սեփականատէրը պետութիւնն է, բայց որ նա գիջում է ժամանակով սեփականութեան իր իրաւունքի մի մասը դրամատէրերին, որպէս զի նրանք գործը ուսի վրայ գնեն և դրա փոխարէն թոյլատւում է նրանց հնարաւորութիւն օգտւելու ձեռնարկութիւնից որոշ ժամանակւայ ընթացքում: Երբ չնորհիւ չատ երկաթուղային գծերի միացման, չնորհիւ ներքին ձեռնարկութիւնների կենտրոնացման, գործը բաւականաչափ կարգի է ընկնում և սկսում է

մեծ եկամուտ տալ, պետութիւնը միջոցներ է ձեռք առնում այդ եկամուտը իր գանձարանը մտցնելու։ Եւ նա չաճախ չի էլ ապաւում, որ արտօնութեան ժամանակը վերջանայ, այլ մտնում է երկաթուղային ընկերութիւնների հետ ուրիշ կամ պակաս ախտզոտական համաձայնութիւնների մէջ ձանապարհները յետ գնելու վերաբերմամբ։ Երկաթուղիները, որոնք մինչ այդ կազմում էին կիսով չափ դրամատէրերի մանաւոր սեփականութիւնը, դառնում են այն ժամանակ պետութեան, այսինքն ամբողջ հասարակութեան, լիակատար սեփականութիւնը։ Ներկայումս չատ երկիրներում երկաթուղիները ամբողջովին կամ մասամբ պետութեան ձեռքումն են գտնւում, և մօտիկ ապագայում մանաւոր երկաթուղիները իսպառ կը վերանան։

Երկաթուղիների դրամատէրերից պետութեան փոխանցելը ունի ահագին պատմական նշանակութիւն, օրպէս ասպիճանացոյց այն ուղղութեան, որով աւազ է գնում արդիւնաբերական ոյժերի զարգացումը ժամանակակից հասարակութիւնների մէջ։ Այս օրինակի վրայ հրաշալի կերպով կարելի է տեսնել, որ արտադրութեան գործիքները և միջոցները իրանց ամբողջութեամբ ներկայացնում են աւրհնող հասարակութեան գոյքը, և որ նրանց մանաւոր սեփականութիւնը շահեցողութեան միայն ժամանակաւոր, անցողակի ձեւն է, որ համապատասխանում է հասարակութեան զարգացման ստորին և, այսպէս ասած, նախապատրաստական ասպիճաններից մէկին։ Այստեղ էլ ըստ երեւոյթին այնպէս է դուրս գալու, որ արտադրութեան միջոցների դրամատիրական սեփականութիւնը տանում է դէպի արտադրութեան կնճռոտութիւնը և անհատական աշխատանքը հասարակական դարձնում։ Բայց հէնց որ հասարակութիւնը անցաւ իր զարգացման նախապատրաստական ասպիճանը, հէնց որ



աշխատանքը հասարականացաւ բաւականաչափ, արտադրութեան միջոցների դրամատիրական սեփականութիւնը բոլորովին կորցնում է իր նշանակութիւնը հասարակական զարգացման համար և չարդարում–ընկնում, ինչպէս անպէտք կեղեւը։ Այն ժամանակ արտադրութեան կատարելագործւած և հասարականացած միջոցները դառնում են հասարակութեան լիակատար սեփականութիւնը, մինչև որ կ'իրագործւի նրանց հասարակական շահեցողութիւնը։ Որովհետև չը պէտք է մոռանալ, որ արտադրութեան միջոցների հասարական սեփականութիւնը պէտ չի նշանակում նրանց հասարական չահեցողութիւնը։ Գերմանիայում և Շւէյցարիայում երկաթուղիները պատկանում են ամբողջ հասարակութեան։ Սակայն հասարակութեան ներկայացուցչին է պետութիւնը, իսկ պետութիւնը և նրա պատասխանը — կառավարութիւնը — այժմ, ինչպէս մենք պիտենք արդէն, դասակարգային, այսինքն դրամատիրական բնոյթ ունի։ Կառավարութիւնը, որը դրամատիրական դասի մի մասն է կազմում անօրինում է պետական երկաթուղիները և ուրիշ պետական գոյքերը աւրհնող հասարակութեան անունից, բայց անօրինում է դրամատիրական կերպով։ Աշխատաւորները պետական արդիւնագործական ձեռնարկութիւնների մէջ առնում են աշխատավարձ, իսկ նրանց արտադրած յաւելեալ արժէքը մտնում է պետական գանձարանը։ Ի հարկէ դուէ լաւ է, որ պետական դրամատիրական ձեռնարկութիւններից ստացած չահը չի մտնում մասնաւոր անձերի գրպանը, այլ ծառայում է այսպէս կոչւած «համապետական նպատակներին»։ Բայց ցաւը նրա մէջն է, որ կառավարութիւնը այդ համապետական նպատակների և կարիքների վրայ նայում է իր դասակարգային աչկոցներով, և դրա հետեւանքը լինում է այն, որ վերոյիշեալ չահի մեծ մասը ծառայում է հէնց այդ

կառավարութիւան և դրամատիրական դասի կարիքնե-
րին, և ոչ թէ ամբողջ հասարակութիւան կարիքներին։
Այնուամենայնիւ պէտք է խոստովանել, որ պետական
ձեռնարկութիւնների մէջ աշխատանքի պայմանները ան-
կասկած աւելի լաւ են, քան մասնաւոր ձեռնարկու-
թիւններին մէջ, — աշխատավարձը աւելի բարձր է, աշ-
խատանքի ժամերը աւելի կարճ և այլն, մանաւանդ այդ
նկատելի է ժողովրդապետական կարգեր ունեցող եր-
կիրներում։ Այստեղ կառավարութիւնը ստիպուած է
ի նկատի առնել աշխատաւոր դասի անընդհատ աճող քա-
ղաքական ոյժը, և նա ջիջում է նրան ամենաւերջը, որ-
տեղ այդ կարելի է։ Պարզ է, որ արտադրութիւան մի-
ջոցների հասարակական սեփականութիւնից նրանց հա-
սարակական չհնազանդութիւան անցնելը տեղի կ'ունենայ
միայն այն ժամանակ, երբ պետութիւնը և կառավարու-
թիւնը կը դադարեն դասային լինելուց, երբ հասարա-
կական կայքերը կը կառավարեն ոչ թէ դրամատիրական
դասի ներկայացուցիչները, այլ ամբողջ հասարակութիւան
ազատ կերպով ընտրած ներկայացուցիչները։

Եթէ մենք այժմ դիմենք հաղորդակցութիւան միւս
միջոցներին, ինչպէս են չոգենաւային գծերը՝ գետերի և
ծովերի վրայ, ցամաքային և ովկիանոսային հեռագրա-
կան գծերը և հեռախօսական ցանցերը, այստեղ էլ մենք
կը հանդիպենք խոշոր դրամատիրական ձեռնարկութիւնե-
րի, որոնց մասին կէս դար առաջ խօսք անգամ չը
կար և չէր էր կարող լինել։ Գլխաւոր չոգենաւային ըն-
կերութիւնները, որոնք ապահովում են արագ և յաճախ
հաղորդակցութիւն Եւրոպայի և աշխարհիս բոլոր միւս
մասերի միջև, ունեն իւրաքանչիւրը հարիւրաւոր չոգե-
նաւեր և չհաշուած են դրամագլուխներ, հարիւրա-
ւոր միլիոնների հասնող։

Հեռագրական և հեռախօսական ցանցերը համարեա



ամին տեղ գանւում են պետութիւան ձեռքում, իսկ
այնտեղ, ուրտեղ այդպէս չէ, ինչպէս Ամերիկայում,
նրանք պատկանում են մի քանի խոշոր դրամատիրական
ընկերութիւնների։ Իսկ Եւրոպան անդրովկիանեան եր-
կիրների հետ միացնող հեռագրական գծերի հաստա-
տումը պահանջում է այնպիսի ահագին դրամագլուխներ,
որ նա կարող է լինել հէնց սկզբից միայն խոշոր ձեռ-
նարկութիւնների գործը։

**Փողային (բանկային) եւ առեւտրական դրամագլխի կենտրոնացումը.** — Արտադրութիւան միջոցների և հա-
ղորդակցութիւան միջոցների հետ ժամանակակից հասա-
րակութիւնների միջոցների մէջ կարելի է նկատել նոյնպէս
փողային (բանկային) և առևտրական դրամագլխի կենտ-
րոնացումը։

Առևտուրը փողով, այսինքն փողը պարտքով տալը
նրան աւելի մեծացած չեն ստանալու նպատակով, դո-
յութիւն ունի նոյնքան վաղուց, որքան և փողի չրջա-
նառութիւնը։ Բայց այդ առևտրի բնոյթը փոխւում է
արտադրութիւան բնոյթի փոփոխման հետ զուգընթաց-
բար։ Քանի դեռ հասարակութիւնը ապրում է մանր
արդիւնաբերութեամբ — աշխատաւոր և մանուֆակտու-
րային, — փողային դրամագլուխը իր առաջ ունի գոր-
ծողութեան չատ նեղ չրջանակ, և նրա սեփական գար-
գացման համար չը կայ բաւականաչափ ազատութիւն։
Մեծ դրամագլուխը հարկաւոր չէ մանր արտադրողին
ցանցի մէջ գցելու համար — միևնոյն է լինի այդ նո-
դազործը, արհեստաւորը թէ նոյնիսկ «խելքը գլխին
փականագործը», որին նոյնպէս վիճակւում են սև օրեր։
Այստեղ ամէն մի մարդ, որ աւելորդ փող կամ ապա-
հադրութիւն ունի ձեռնարկելու իր միջոցներին նեղն ընկած
ժամանակ, կարող է պարտական վաչխառութեամբ։ Բայց

երբ մանր արդիւնաբերութիւնը դառնում է խոչոր դրամատիրական, նրան չհետաքրքրելու համար արդէն հարկաւոր են խոչոր դրամական ձեռնարկներ: Մի որևէ խոչոր դրամատիրական ձեռնարկութեան գլուխ կանգնած եռանդուռ դրամատէրը յաճախ նոյնքան փողի կարիք է զգում, որքան և փոքրը: Սակայն տարբերութիւնը նրանց միջև այն է, որ մանր արդիւնաբերողին պակասում են տասնեակ կամ հարիւր ռուբլիներ, իսկ խոչորին՝ տասնեակ և հարիւր հազար ռուբլիներ: Այդ տասնեակ և հարիւր հազար ռուբլիները նրա տրամադրութեան տակ են դնում — օրինաւոր տոկոսով — վարկային հիմնարկութիւնները կամ դրամատունները (բանկերը): Եւ իրօք մենք տեսնում ենք, որ վերջին յիսուն տարիների ընթացքում բանկային գործի զարգացումը այնքան առաջ է գնացել, որ մեր պապերը այդ երևակայել անգամ չէին կարող: Օրինակ, Ռօշչիլդների բանկային տան կարողութիւնը գնահատւում է մի միլիարդ (մի հազար միլիոն) ռուբլի, իսկ այդ տան տարեկան շրջանառութիւնը հասնում է մի քանի միլիարդի: Այդ թիւերը այնքան մեծ են, որ սովորական մահկանացուն չի կարող նոյնիսկ երևակայել փողի այդպիսի տարր: Ինչ չեն և ուրիշ բանկերը, որոնք տարեկան հարիւրաւոր միլիոնների գործ են անում:

Առևտրական դրամագլխի կենտրոնացումը չէ տացել այնպիսի խոչոր չափեր, ինչպէս բանկային կենտրոնացումը, բայց այնուամենայնիւ այսօր էլ նա չատ հեռու է գնացել համեմատած այն դրութեան հետ, որ կար կէս դար առաջ: Առևտրական դրամագլխի կենտրոնացման որպէս կենդանի օրինակ կարող է ծառայել երևոյթը անօրինակ մեծութիւն ունեցող վաճառատանների, որոնք կենտրոնացնում են իրանց մէջ մեծ քաղաքների առևտուրը և տասնեակ միլիոնների շրջառութիւն են անում:



**Դերարտադրութիւնը եւ ճգնաժամը.**— Մարքսի վարդապետութեամբ դրամատիրական արդիւնագործութիւնը ձգտում է իր սեփական կարիքների այժմ դէպի անսահմանի ընդարձակումը և, նպաստաւոր պայմաններում, մանրից ու միջակից դառնում է խոչոր և խոչորագոյն: Սրա համաձայն փոխուում է այն չուկայի բնոյթը որին ծառայում է արդիւնագործութիւնը: Այն ժամանակ, երբ մանր արդիւնագործութիւնը աշխատում է տեղական ծանօթ չուկայի համար, խոչոր արդիւնագործութիւնը սահպատած է լոյսը դնել համաչխարհային չուկային վրայ, որի պահանջները նոյնիսկ մօտաւորապէս չեն կարող որոշել: Արդիւնագործութիւնը անընդհատ ընդարձակելու կարիքը և ապրանքների առաջարկը իւղրանքի հետ համաձայնեցնելու անկարելիութիւնը առաջացնում են ապրանքների դերարտադրութիւնը, չուկաների լցիլը և արդիւնագործական ճգնաժամը կամ կրիզիսը: Ճգնաժամերի անխուսափելիութեան մասին Մարքսը յայտնեց, ուսումնասիրելով դրամատիրական արդիւնագործութեան ներքին յատկանիշները և նրա զարգացման ընթացքը: Իսկ իրականութեան վրայ կատարած դիտողութիւնները հաստատեցին այդ մասի ճշդութիւնը: Իսկական դրամատիրական արդիւնագործութեան ծագումից սկսած մինչև 1848, երբ լոյս տեսաւ Կոմմունիստական Կուսակցութեան Մարքսի և Էնգելսի կազմած Մանիֆեստը, խոչոր ճգնաժամեր (կրիզիս) տեղի են ունեցել ինդուստրիայում 1815, 1825, 1836 և 1847 թուերին: Այնուհետև կրիզիս եղաւ 1857 թուին, իսկ 1873 թուին պայթեց սոսկալի ընդհանուր կրիզիսը, որը նկատելի էր բոլոր դրամատիրական երկիրներում և տեւեց մինչև 80-ական թուականները: Ինդուստրիայի ուժեղ վերելքի 80-ական թուականների վերջին յայտնուեց ընդհանուր

կրկնակը, որ սեւեց մօտաւորապէս մինչև 90-ական թուականների կէսը, իսկ սրան կրկին յաջորդեց արդիւնաբերական ծաղկման շրջանը: Այսպիսով վերջին յիսնամեակի ընթացքում կատարած դիտողութիւնները ամենաարդ կերպով հաստատեցին այն մասի ճշմարտութիւնը, որ կրկնակները անխուսափելի են և բնական հետեւանք՝ խոշոր արդիւնաբերութեան ճաման:

**Հասարակութեան շերտաւորումը եւ աշխատաւորութեան դասային ինքնագիտակցութեան սեռումը.** — Մենք տեսանք, որ արդիւնաբերութեան և դրամագլխի կենտրոնացումը առաջացնում է հասարակութեան անընդհատ շերտաւորում և ստեղծում պայմաններ, որոնք նպաստում են դասերի գոյացման հասարակութեան մէջ, իսկ արժէքների դրամագլխական բաշխումը ներկայացնում է մօտաւոր պատճառը հասարակութեան բաժանելուն երկու մեծ դասի — աշխատաւորական և դրամատիրական: Ուժեղացել է արդեօք հասարակութեան շերտաւորումը վերջին յիսուն տարուայ ընթացքում: Սասցել է արդեօք աւելի սուր կերպարանք հակամարտութիւնը աշխատաւորական և դրամատիրական դասերի միջև:

Երկար ու բարակ մանրամասնութիւններու մէջ չը մանելու համար կ'ասենք միայն, որ կեանքը այդ հարցերին դրական պատասխան է տալ: Արդէն այն հանգամանքը, որ խոշոր արդիւնաբերութիւնը հասել է այժմ զարգացման բարձր աստիճանի, որ գոյութիւն ունեն գործարաններ, որոնց մէջ աշխատում են տասնեակ հազարաւոր բանուորներ, բերում է այն եզրակացութեան, որ վերջին յիսնամեակի ընթացքում հասարակութեան կազմւածքի մէջ տեղի են ունեցել խորը փոփոխութիւններ: Գործարաններում, ինչպէս յայտնի է, աշխատում են ոչ ինքնուրոյն արտադրողները՝ արտադրութեան անհրաժեշտ միջոցները ունեցող, այլ ընդհակառակը արտադրութեան միջոցներից արդէն զրկուած արտադրողները, այսինքն պրօլետարները: Այդ պատճառով խոշոր արդիւնաբերութեան ճնճանալը նշանակում է միաժամանակ և արտադրութեան միջոցներից զրկուած արտադրողների թւի բազմանալը: Եւ իսկ զանազան երկիրներում կատարած ժողովրդագրութիւնները ցոյց տուին, որ արտադրութեան միջոցներ չունեցող արտադրողների թիւը աճում է անընդհատ և չատ աւելի արագ, քան ինքնաշխատ երկրի ազգաբնակութիւնը: Պրօլետարիատի այդ անդադար աճումը միայն վախճանական արտայայտութիւնն է դրամատիրական հասարակութեան այն անընդհատ չերտաւորման, որի շնորհիւ սկզբում իրար հետ սերտ ինքնուրոյն արտադրողները դառնում են մի կողմից՝ արտադրութեան միջոցներից զուրկ արտադրողներ, միւս կողմից՝ խոշոր և խոշորագոյն դրամատէրեր:

Դրամագլխի կենտրոնացման և պրօլետարիատի աճման մէջ անկասկած կերպով բացւում է հակամարտութիւնը դրամագլխի և աշխատանքի, դրամատիրական դասի և աշխատաւորականի: Որքան աւելի առաջ է գնում դրամագլխի կենտրոնացումը, որքան աւելի աճում է պրօլետարների թիւը, այնքան աւելի սուր բնաւորութիւն է ստանում այդ դասային հակամարտութիւնը: Իր կողմից դասային հակամարտութեան ուժեղացումը նոյ է ստեղծում աշխատաւորների դասային ինքնագիտակցութեան զարգացման համար: Եւ ահա վերջին յիսնամեակի պատմութիւնը ցոյց տուց, որ դրամատիրական արդիւնաբերութեան զարգացման հետ զուգընթացաբար առաջ էր գնում աշխատաւորների միացումը մի դասի մէջ, որ պիտակում է իր չահերին և ձգտում նրանց պաշտպանութեան: Բոլոր քիչ-շատ դրամատիրական զարգացած երկիրներում այդ միացումը արտայայ-

*արեւեմ ընկերավարական կուսակցութիւններէ առաջնորդութեան մէջ, կուսակցութիւններ, որոնք եւրոպական մասնակցութիւն են ցոյց տալիս այդ երկիրների խաղաղական կեանքում: Այդ երկիրներում, որտեղ գոյութիւն ունի քաղաքական ազատութիւնը, ընկերվարական կուսակցութիւնները ուշադրութիւն են իրանց ընտրեալներին պարլամենտները, ուր նրանք հանդիսանում են ամբաստաւոր դասի պահանջների և ձգտումների թարգմանը: Իսկ այնտեղ, որտեղ դեռ չը կայ քաղաքական ազատութիւն, ընկերվարական կուսակցութիւնները ազատապրական գործի առաջին չարքերումն են կանգնած: Որովհետև առանց քաղաքական ազատութեան աշխատաւորների դասային ինքնագիտակցութեան զարգացումը և նրանից բղխող դասերի կռիւը կարող են առաջ գնալ միայն կրիայի քայլերով: Մենք գիտենք արդէն թէ ինչ մեծ նշանակութիւն ունի քաղաքական ազատութիւնը, որ ապահովում է հասարակութեան բոլոր անդամներին քաղաքացիների իրաւունքները, այսինքն խօսքի, մամուլի, ժողովների և միութիւնների ազատութիւնը, նոյնպէս և հասարական գործերը կառավարելուն մասնակցելու իրաւունքը ընտրեալների միջոցով:*

*Կազմակերպած ընկերվարական կուսակցութիւնների արագ աճումը բոլոր դրամագիրական երկիրներում նորագոյն ժամանակի երեւոյթ է: Այդ երեւոյթի անխուսափելի լինելը պարզուեց Մարքսի համար, երբ նա ուսումնասիրում էր դրամագիրական հասարակութեան զարգացումը մինչև 1848 թ., իսկ վերջին կէս դարի պատմութիւնը այս դէպքում էլ հաստատեց նրա արած եզրակացութեան ճշտութիւնը:*



## 2. ԻՆՉՈ՞ՒՄ ՄԱՐՔՍ-ԷՆԳԵԼՍԻ ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ ՇԵՂԻՈՒՄ Է ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

*Ստեղծելով դրամագիրական հասարակութեան զարգացման ենթադրական օրէնքը դիտողութիւններով, որոնք արել են նրա զարգացման վերաբերմամբ զանազան երկիրներում վերջին յիսուն տարուայ ընթացքում, մենք տեսանք թէ ինչո՞ւմ այդ օրէնքը հաստատուեց: Այժմ քննութեան ենթարկենք այն, թէ ինչո՞ւմ Մարքսի և Էնգելսի արած եզրակացութիւնը դուրս եկաւ իրականութեան անհամապատասխան: Այդ ժամանակ պարզ կը լինի թէ ինչ ուղղումներ պէտք է մտցնել:*

**Համապատասխանո՞ւմ է արդեօք լիովին արդիւնաբերական կեանքի զարգացումը դրամագլխի կեանքի զարգացման.** — *Դիտելով դրամագիրական արդիւնագործութեան զարգացման ընթացքը, նախորդ գլխում արտադրութեան և դրամագլխի կենտրոնացման վերաբերմամբ մենք եկանք հետեւեալ եզրակացութեան. «Այսպիսով երբ դրամագիրական արդիւնագործութիւնը առաջ է գալիս իր զարգացման համար նպաստաւոր պայմաններում, նա ձգտում է հնարաւորին չափ ծաւալել իր սեփական կարիքների զօրութեամբ: Ծաւալման այդ ձգտումը իրագործւում է այնպէս, որ, չնորհիւ աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացման, աւելի խոշոր ձեռնարկութիւնները դուրս են քշում չնչաւոր և կանգնում աւելի փոքրերին: Իսկ որովհետև դրամագիրական ձեռնարկութիւնները պահպանում են դրամագիրերին, որպէս արդիւնաբերութեան ազգային ընդհանրական և միաժամանակ եւ դրամագլխի կենտրոնացումը աւելի ու աւելի փորձաքիւ դրամագիրերի ձեռքում»:*

Այս վերջին դրութիւնը, ինչպէս փորձը ցոյց տուել է, չի համապատասխանում իրականութեան վրայ: Բանը նրանումն է, որ իւրաքանչիւր դրամատիրական ձեռնարկութիւն — բնական է, որ ծագի — ամենից առաջ ձգտում է պահպանել իր գոյութիւնը: Իսկ պահպանել իր գոյութիւնը, իր նման ուրիշ ձեռնարկութիւնների հետ կռուելով, նա կարող է միայն աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացման միջոցով, այսինքն սեփական ընդարձակման միջոցով: Այդպա դրամագլուխ ունեցող արդիւնագործական դրամատէրերը լայնացնում են իրանց ձեռնարկութիւնները առանց դժուարութեան և որանք ծաղկում են անարգել: Բայց ազատ դրամագլուխ չունեցող դրամատէրերը նոյնպէս ուզում են ապրել, և ապրելից հետանալ նրանք վճռում են միայն այն ժամանակ, երբ ոչինչ արդէն չի կարելի անել: Եւ այդ պինդած կեանքի դառն ճշմարտութեամբ, նրանցից մի քանիսը տեսնում են, որ արդիւնագործութիւնը անհրաժեշտ է ընդարձակել, ինչ ուզում ես ասա, ուրիշ ելք չը կայ — և որ այդ անել նրանք կարող են միայն ուրիշի վրայով, որովհետև սեփական չունեն: Իսկապէս նրանց գլխում միտք է ծագում հրաւիրել փողատէր բաժնեհէրերը իրանց ձեռնարկութեանը մասնակցելու և, իհարկէ, ընդել նրանց չորի մի մասը՝ համաձայն նրանց բերած դրամագլխի: Այսպիսով առաջ են գալիս բաժնետէրերի վրայ կազմուած ընկերութիւնները, կամ բաժնեսիրական ընկերութիւնները: Ինքն բան ինքնին հասկանալի է, որ ամեն մի դրամատիրական ձեռնարկութիւն չի կարող բաժնեսիրական դառնալ: Դրա համար հարկաւոր է, որպէսզի ունալ ձեռնարկութիւնը լինի ընդունակ զարգացման համար և կարողանայ լաւ եկամուտ տալ: Հասկանալի է, որ մի այդպիսի յաջող ձեռնարկութեան հանդէպ լինում են առանձակ և հարիւրաւոր



ուրիշները, որոնք ընկճուում են անհատական կեանքի անհրաժեշտ բաղդատութիւնների հետ: Անհատականութիւնը իրականութիւնը ցոյց է տալիս, որ դրամատիրական արդիւնագործութիւնը, նոյն իսկ ամենամեծը, ամենամեծ չափով առաջ է տարուում հասարակական, բաժնեսիրական դրամագլխով: Ուրիշ խօսքով, չնորհիւ բաժնեսիրական ընկերութիւնների, միջակ և նոյնիսկ մանր դրամագլուխը կարող է մասնակցութիւն ունենալ խոշոր արդիւնագործութեան մէջ և դրանով ազատուել անխուսափելի կործանումից: Մասնակցելով խոշոր արդիւնագործութեան, միջակ և մանր դրամագլուխը արդէն չի վախենում խոշոր դրամագլուխի մրցումից, որովհետև բաժնեսիրական դրամագլուխը ունի խոշորի բոլոր յատկութիւնները: Նա խոշորից ոչ պակաս կարող է ընդարձակել արդիւնագործութիւնը և խոշորի նման յաղթող հանդիսանալ չուկայում և մանր և միջակ դրամատիրական արդիւնագործութեան վերաբերմամբ:

Վերեւում ասածից երեւում է, որ արտադրութեան կենտրոնացումը միշտ չի համապատասխանում դրամագլխի կենտրոնացման: Բանի գնալ դրամատէրը ատուում է իր դերը սեփական դրամագլխով, — այդ երկուսն էլ իրար համապատասխան են: Բայց երբ ձեռնարկութիւնը տարուում է բաժնեսիրական կերպով, դրամագլուխը կարող է ձեռք բերել բաժան-բաժան բազմաթիւ բաժնեկիրների ձեռքում, մինչդեռ արդիւնագործութիւնը, այդ հատուկ դրամագլխի համապատասխանող, կենտրոնանում է մի տեղում, տարուում է մի ընդհանուր դեկավարութեամբ և ներկայնում է խոշոր արդիւնագործութեան բոլոր առաւելութիւնները:

Պէտք է նկատել, որ դրամագլխի կենտրոնացման չը համապատասխանելը արտադրութեան կենտրոնացման՝ չի փոխում էապէս դրամատիրական հասարակութեան են-

թատրական օրէնքը, որովհետև և ինքը՝ դրամագլխի կենտրոնացումը՝ դրամատիրական հասարակութեան զարգացման համար ունի խիստ երկրորդական նշանակութիւն, արտադրութեան կենտրոնացման հետ համեմատած։ Դրամատիրական արդիւնագործութեան զարգացման էութիւնը կայանում է նրանում, որ նրա հետ կապած՝ աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումը առաջացնում է արտադրութեան լայնացում, իսկ լայնացրած արտադրութիւնը հնարաւոր դարձնում աշխատանքի արդիւնաւէտութեան յետագայ բարձրացումը։ Այդ երկու անտեսական երեւոյթների փոխազդեցութիւնից ըստացում է արդիւնագործութեան անընդհատ կենտրոնացումը։ Արտադրութեան կենտրոնացումը միաժամանակ և աշխատանքի հասարակականացում է։ Այդ պատճառով աշխատանքի լիակատար հասարակականացումը ներկայացնում է այն սահմանը, որից դէնը չի կարող գնալ արդիւնագործութեան կենտրոնացումը։ Իսկ որովհետև արդիւնագործութեան կենտրոնացման մէջն է կայանում դրամատիրական արդիւնագործութեան զարգացման էութիւնը, ուստի և աշխատանքի լիակատար հասարակականացումն է այն սահմանը, որից դէնը չի կարող գնալ դրամատիրական արդիւնագործութիւնը։ Հասնելով այդտեղ, նա պէտք է չքանայ և փոխարինէ հասարակական սոցիալիստական արդիւնագործութեամբ։ Պարզ է որ այն հարցը թէ կենտրոնացած արդիւնագործութեան համապատասխանող դրամագլուխը կը գանւի՞ արդեօք փոքրաթիւ արդիւնագործական կրեսոսների թէ՞ տասնեակ և նոյնիսկ հարիւր հազարաւոր մանր ու մանրիկ դրամատէրերի ձեռքում, — չ'ունի էական նշանակութիւն գործի ելքի համար։ Ըստ Մարքսի, դրամագլխի կենտրոնացումը փոքրաթիւ արդիւնագործական կրեսոսների ձեռքում, պէտք է աւելի սուր կերպարանք տայ աշխատաւորների



և դրամատէրերի միջև եղած դասային հակամարտութեան և ակնյայտնի կերպով ցոյց տայ դրամատիրական հասարակարգի անպէտքութիւնը։ Բայց քանի դրամատիրական արդիւնագործութիւնը զարգանում է, այնքան նրա վրայ հիմնուած ամբողջ այդ հասարակարգի անհեթեթութիւնը դառնում է աշխատաւորների համար այնքան պարզ, որ կարիք չի լինում կենդանի ապացոյցների, յանձինս «արդիւնագործական իշխանաւորների»։

Ուշադրաւ է սակայն, որ հակառակ նրան՝ որ դրամագլխի կենտրոնացումը անհամեմատական է արտադրութեան կենտրոնացման, Մարքսի դուշակութիւնը «արդիւնագործական իշխանների մասին որոշ չափով արդարացաւ։ Արդիւնագործական դրամագլխի կենտրոնացումը Հիւսիսային Ամերիկայում հասաւ այնպիսի բարձր աստիճանի, որ այնտեղ առաջ եկան այդ իսկ «իշխանները»։ Միայն նրանց այնտեղ անւանում են ոչ թէ «իշխաններ», այլ «թագաւորներ»։ Կան այնտեղ «թագաւորներ» արդիւնագործութեան զանազան ճիւղերում։ Կայ «նաւթային թագաւոր», «պղնձի թագաւոր», «երկաթի թագաւոր» և այլն։ Շնորհիւ իրանց հսկայական դրամագլուխներին, այդ թագաւորները ստիպում են արդիւնագործական ուրիշ դրամատէրերին մանել նրանց կազմած միութիւնների կամ արհեստների մէջ և, ի հարկէ, նրանք իրանք են այդ միութիւններում գլուխ կանգնում և արդիւնագործութեան ամբողջ ճիւղեր ձեռնածուպ դարձնում։

**Խոշոր և մանր արդիւնագործութիւնը Ինդուստրիայում.** — Ըստ Մարքսի վարդապետութեան դրամատիրական արդիւնագործութեան զարգացումը տեղի է ունենում այնպէս, որ մանր և միջակ անտեսութիւնը հետզհետէ դուրս են քշւում և կուլ են գնում խոշորից։ Դրամատիրական արդիւնագործութեան զարգացումը է

միաժամանակ արդիւնագործութեան կենտրոնացումը աւելի ու աւելի վտանգաւոր ձեռնարկութիւնների մէջ։ Ինչպէս մենք վերեւում տեսանք, նոյնիսկ ամենամանր կենսագործական դիտողութիւնը բերում է մեզ այն եզրակացութեան, որ ինդուստրիայում արդիւնագործութեան կենտրոնացումը անխուսափելի տեղի է ունեցել, և տեղի է ունենում վիթխարի չափերով։ Բայց միևնոյն ժամանակ ներկայիս տնտեսական կարգերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս մեզ, որ ինդուստրիայի մի քանի ճիւղերում միջակ և նոյնիսկ մանր դրամատիրական արդիւնագործութիւնները ապրում են խոշորի հետ իրար կողքի։ Որ կան այնպիսի ճիւղեր, որտեղից մանր արդիւնագործութիւնը դուրս է քշուած խաղաս, ինչպէս օրինակ, մեծագործութեան, ոսկեգործութեան մէջ և այլն,— այդ անկասկած է։ Կան սակայն և այնպիսի ճիւղեր, որտեղ դրամատիրական արդիւնագործութեան զարգացումը առաջ է գնում կատարելապէս ազատ կերպով, բայց որտեղ ամենամանրամասն մանր և միջակ տնտեսութիւնները յաղթողութեամբ մրցում են չուկայում խոշորի հետ։ Օրինակ, մեքենագործութիւնը, ժամացոյցագործութիւնը, ամեն տեսակ դիտական գործիքների արդիւնագործութիւնը... Պէ՞տք է արդեօք սրանից եզրակացնել, որ Մարքսի ենթադրած՝ արդիւնագործութեան կենտրոնացումն օրէնքը սխալ է ինդուստրիայի նոյնիսկ այն ճիւղերի համար, որտեղ արդիւնագործութեան դրամատիրական եղանակը գտնում է իր զարգացման համար նպաստաւոր պայմաններ։ Այդպիսի եզրակացութիւնը չափազանց խոստումն կը լինէր։

Հէնց այն արդէն, որ վիրջին ժամանակ ընթացքում արդիւնագործութեան կենտրոնացումը ինդուստրիայում հասել է իրօք չնախընթաց չափերի, ցոյց է տալիս մեզ, որ Մարքսը ճիշտ կերպով է նկատել



դրամատիրական արդիւնագործութեան զարգացման ընդհանուր ուղղութիւնը։ Իսկ եթէ ինդուստրիայի մի քանի զարգացած ճիւղերում մանր և միջակ դրամատիրական արդիւնագործութիւնները խոշորի հետ ապրում են իրար կողքի, այդ առաջ է գալիս ուրիշ պատճառներից, որոնք չեն փոխում օրէնքի էութիւնը։

Արտադրութեան կենտրոնացման գլխաւոր խթանը, ինչպէս մենք գիտենք, աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումն է։ Իր կողմից՝ աշխատանքի արդիւնաւէտութեան զարգացման մէջ մեքենաների դերը մեծ է։ Երբ արդիւնագործութիւնը այնպիսիներից է, որ մեքենաները և ամեն տեսակ գործիքները նրա մէջ անպէտ ծախսեր են պահանջում, այդ դէպքում,— ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մանր և նոյնիսկ միջակ դրամատիրական արդիւնագործութիւնը պէտք է նրանից վերջնականապէս քաշուի։ Երբ երկաթի ամենատարբերագործած (ուսած և ամենաձեռնասուն) մշակման համար պահանջւում են վիթխարի և շատ թանկ հաստոյային վարպետանոցներ և շոգեմուրճեր տասնեակ հազարաւոր ֆունտների ծանրութեամբ, այս դէպքում պարզ է, որ մանր դրամագլուխը այստեղ ոչինչ չի կարող անել։ Բայց երբ արդիւնագործութեան տեսակի շնորհիւ ամենատարբերագործած մեքենաները և գործիքները շատ մեծ դրամագլուխներ չեն պահանջում,— խոշոր արդիւնագործութիւնը չի կարող ունենալ մեծ առաւելութիւններ միջակի և նոյնիսկ մանրի նկատմամբ, և նրանք բոլորն էլ կարող են գոյութիւն ունենալ իրար կողքի, չը խանգարելով իրար աշխատել։ Այդ ճիւղերում խոշոր արդիւնագործութեան բերած օգուտները համեմատած միջակ և մանր տնտեսութիւնների հետ այնքան էլ մեծ չեն, որպէս զի նրա համար հնարաւորութիւն տանջալի տիրելու չուկային և կենտրո-

նայում առաջ բերելու։ Այստեղ, ըստ երևույթին, մենք գործ ունենք վաճառուոր դէպքի հետ։ Արդիւնագործութեան կենտրոնացումը այնքան աւելի արագ է առաջ գնում, որքան աւելի առաւելութիւններ է տալիս խոշոր արդիւնագործութիւնը միջակի և մանրի հետ համեմատած։ Եթէ այդ առաւելութիւնները փոքր են, արդիւնագործութեան կենտրոնացումը տեղի է ունենում դանդաղ, իսկ եթէ նրանք զգալի չունեն, արդիւնագործութեան կենտրոնացումը կարող է բոլորովին կանգ առնել։ Բայց որովհետև ընդհատարիայի մէջ շատ քիչ են այնպիսի ճիւղերը, որտեղ խոշոր արդիւնագործութիւնը փոքր առաւելութիւններ ունենար միջակի և մանրի վերաբերմամբ, ուստի այդ մանուսոր չեղումները ընդհանուր դրութիւնից չեն պահանջում էական ուղղումներ. անել արդիւնագործութեան կենտրոնացման օրէնքի մէջ — ընդհատարիայում արդիւնագործութեան կենտրոնացումը առաջ է գնում անընդհատ անյողդողդ քայլերով, և այստեղ Մարքսի ու Էնգելսի դուշակութիւնները արդարացան։

**Գրամատիրական արդիւնաբերութիւնը հողագործութեան մէջ.** — Այսպիսով, եթէ Մարքսի և Էնգելսի առաջադրած՝ գրամատիրական արդիւնաբերութեան զարգացման օրէնքը ընդհանուր առմամբ հաստատուեց յետագայ դիտողութիւններից, ընդհատարիայի չրջանում կատարած, — գիւղատնտեսութեան չրջանում նա ընդհատակառակը մեծապես շեղուեց իրականութիւնից։ Համաձայն այդ օրէնքի, պէտք էր ասաել, որ հողագործութիւնը, որը ընդհատարիայի ազգաբնութեան ընորհիւ կանգնեց ապրանքային արդիւնաբերութեան ճանապարհի վրայ, անխուսափելիօրէն պէտք է ընկնի գրամագլխի սերտ ազդեցութեան տակ։ Այդ պատճառով գիւղատնտեսութեան



մէջ պէտք է տեղի ունենար արտադրութեան և գրամագլխի նոյնպիսի կենտրոնացում, ինչպէս և ընտուսարիայի մէջ։ Մարքսը և Էնգելսը այդ առթիւ արտայայտուեցին բոլորովին որոշակի և բնաւ չէին թոյլ տալիս, որ հողագործութիւնը չի գնայ նոյն ճանապարհով, որով գնաց ընդհատարիան։ Մինչդեռ վերջին չորս տարուայ ընթացքում արած դիտողութիւնները գրամատիրոջին ամենազարմացած երկիրներում ցոյց տուին, որ հողագործութեան չրջանակում ոչ միայն տեղի չունի արտադրութեան և գրամագլխի կենտրոնացում, այլ նոյնիսկ չատ դէպքերում մանր գիւղատնտեսական արդիւնագործութիւնը զարգանում է աւելի արագ, քան խոշորը։ Որքան էլ Մարքսի չափից դուրս եռանդուն աշակերտները աշխատեն հարթել ենթադրական օրէնքի և նորագոյն դիտողութիւնների մէջև եղած հակառակութիւնը, այնուամենայնիւ իրողութիւնը մնում է իրողութիւն, — գրամատիրական արդիւնաբերութիւնը չափազանց դանդաղ ու մեծ դժուարութիւններով է մուտք գործում գիւղատնտեսութեան մէջ և չի տալիս այնտեղ այն հետեւանքները, որ նա տալիս է ընդհատարիայում։ Այդ հարցը թէ գիտական և թէ գործնական տեսակէտից ունի այնպիսի խոշոր նշանակութիւն, որ նրա մանրամասն վերլուծման մենք կը նուիրենք մի առանձին գլուխ։ Այստեղ մենք նկատենք միայն, որ գրամատիրական արդիւնագործութեան զարգացման օրէնքի և հողագործութեան իրական զարգացման մէջև եղած անհամապատասխանութիւնը սահմանափակում է այդ օրէնքը, բայց չի ոչընչացնում նրան։ Միայն ընդհատարիայի չրջանում գրամատիրական արդիւնագործութեան զարգացումը գնաց այնպէս, ինչպէս ենթադրել էին Մարքսը և Էնգելսը։ Ինչ վերաբերում է հողագործութեան, ընդհատարիայի զարգացման օրէնքի մէջ մենք կարող ենք գտնել բա-

ցասրութիւնը այն բանի մէջ չէնթարկուեց դրամատիրական արդիւնագործութեան իշխանութեան: Ինչպէս մենք ցոյց կը տանք հետեւեալ գլխում, դիւզական տնտեսութեան մէջ դրամագլուխը չի գտնում այն հիմնական պայմաններից մէկը, որոնք անհրաժեշտ են արհեստանոցի արդիւնաբերութեան անընդհատ բազմացման համար՝ նրա բաժանման և պարզացման միջոցով: Ուստի սխալ է ոչ թէ դրամատիրական արդիւնագործութեան զարգացման օրէնքը այն ձեւով, ինչպէս նա դուրս է բերած Ընդհանուր կարծիքի ենթադրութիւնների հիման վրայ, այլ սխալ էր նրա կիրառութիւնը գիւղատնտեսութեան նկատմամբ: Նախքան նրան այդ ուղղութեամբ կիրառելը պէտք էր ցոյց տալ, որ հողագործութեան մէջ էլ կան նոյն հիմնական պայմանները, որոնք անհրաժեշտ են դրամատիրական արդիւնագործութեան զարգացման համար, և որոնք գոյութիւն ունեն ընդհանուր կարծիքում: Իսկ եթէ չը կայ լիակատար նոյնութիւն ընդհանուր կարծիքի և գիւղատնտեսութեան պայմանների միջև, — պարզ է, որ ընդհանուր կարծիքի զարգացման օրէնքը չի կարող տարածուել և գիւղատնտեսութեան վրայ:

**Դրամատիրական հասարակարգի կործանման ժամանակը.** — Մի կողմ թողնելով Մարքս-Էնգելսի ենթադրական օրէնքի չափազանց կարեւոր չեղումը իրականութիւնից, — այնուամենայնիւ կը գտնենք մէկը եւս, որի վերաբերմամբ նրանց դուշակութիւնը նոյնպէս չ'արդարացաւ: Ուսումնասիրելով դրամատիրական արդիւնագործութեան զարգացումը, նրանք որքան էին ապշած մնայել նրա արագ ընթացքից, որ արհեստագործութեան և դրամագլխի լիակատար զարգացումը, ուրեմն և դրամատիրական կարգերի կործանումը նրանք մի քանի տասնեակ տա-



րիների գործ էին համարում: Նրանց հաշուով, սոցիալական յեղաշրջումը, որ կը հաստատէր սոցիալիստական հասարակարգը, պէտք է տեղի ունենար մօտաւորապէս անցեալ դարի 80-ական թուականներին: Իրականութիւնը ցոյց տուեց, որ արդիւնագործութեան կենտրոնացումը այնքան էլ արագ չի կատարւում, ինչպէս այդ թուում էր Մարքսին և Էնգելսին: Եթէ սոցիալիստական կարգերը իրագործէին միայն արդիւնագործութեան կենտրոնացման լիակատար զարգացումից յետոյ, — այդ դէպքում պէտք էր նրան շատ երկար սպասել: Բարեբախտաբար, սոցիալիստական կարգերի իրագործումը կախուած է անհամեմատ աւելի աշխատաւորական դասային իմպերիալիստական ազդուից, քան արդիւնագործութեան նրանից պայմաններից: Նորագոյն ժամանակի պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ դասային ընդհարակցութեան աճումը մշտապէս չի համապատասխանում արտադրութեան և դրամագլխի կենտրոնացման, արդիւնաբերողական ոյժերի աճման: 10-րդ դարի ընթացքում դրամատիրական առաջաւոր երկիրն էր Անգլիան, և նրա վրայ էր Մարքսը գլխաւորապէս ուսումնասիրել դրամատիրական արդիւնագործութեան զարգացումը: Մինչդեռ այդ երկրում բանւորների դասային ընդհարակցութեան լիակատար բացակայութիւնը իրողութիւն էր երկար ժամանակ, չը նայած այդ երկրի չափազանց զարգացած դրամատիրական արդիւնաբերութեան: Եւ դասային ընդհարակցութեան այդ բացակայութիւնը բնաւ հեռեւանք չէր անգլիական բանւորի լքման կամ նրա անընդունակութեան համերաշխ ու կազմակերպուած գործելու: Ընդհակառակը, անգլիական բանւորին պէտք է համարել մէկը ամենաառաջադիմներից և կազմակերպման ընդունակներից: Եւ իրօք դրամատիրական արդիւնագործութեան աճման հետ զուգընթացաբար Անգլիայում աճում էին և բան-

ւորական միութիւնները (արհեղ-իւնիօնները)։ Բայց այդ միութիւնները կազմուեցին ոչ թէ բանուորների և դրամատէրերի չահերի հակամարտութեան և անհաչտութեան հողի վրայ, կազմուեցին ոչ թէ դասային անհաչտ կռիւ համար, այլ միայն դանդաղ բարւոքման համար այն բանուորների դրութեան, որոնք մնել են միւռթեան մէջ, իսկ բանուորների մասին, որպէս դասակարգի, խօսք չէր եղել։ Անգլիական արհեղ-իւնիօնականների համար դրամատէրը մարմնացում չէր անարդար և վնասակար կարգերի, որոնց անհրաժեչտ է կործանել։ Նրանք բոլորովին հաչտուում էին դրամատիրական հասարակակարգի գոյութեան հետ, ճանաչելով նրան համարեա որպէս բնութեան օրէնք, և աչխատում էին միայն այդ կարգերի սահմանում բարելաւել իրանց անմեսական դրութիւնը։ Միայն մեր ժամանակում անգլիական բանուորների մէջ բացայայտուեց դասային ինքնագիտակցման աճումը, երեւան եկան սոցիալիստական կուսակցութիւններ, որոնք կազմակերպում են բանուորներին սոսկ դասային կռիւ համար դրամատիրական հասարակակարգի հետ։

Ա.յսպիսով, Անգլիայում դասային ինքնագիտակցութեան զարգացումը առաջ էր գնում անհամեմատ աւելի դանդաղ, քան դրամատիրական արդիւնագործութեան աճումը և դրամագլխի կենտրոնացումը։ Միւս կողմից, այնպիսի յետ մնացած երկիրներում, ինչպէս են Իտալիան և Ռուսաստանը, կարելի է դիտել աչխատաւորութեան դասային ինքնագիտակցութեան չափազանց արագ զարգացումը, չի համապատասխանող այդ երկիրների դրամատիրական արդիւնագործութեան զարգացման։ Իսկ որովհետև սոցիալիստական կարգերի իրագործումը կարող է միայն հետեւանք լինել գիտակցական և յամառ դասային պայքարի, ուստի մենք լիակատար իրաւունք ունենք պնդելու, որ նա չատ աւելի կախուած է աչխատաւորների դասային ինքնագիտակցութեան զարգացումից, քան արտադրութեան և դրամագլխի կենտրոնացումից։



## 3. ՄԱՐՔՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՆԱՀԱՏՈՒՄԸ

**Ընդունելիս դրամատիրական հասարակութեան զարգացման ենթադրական օրէնքի մէջ.** — Մարքսի և նրա ընկերը Էնգելսի նախագծած՝ դրամատիրական արդիւնագործութեան զարգացման ենթադրական օրէնքի ուղղումների նկատմամբ մինչև այժմ մեր բոլոր ասածները ամփոփելով, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ ընդհանուր առմամբ այդ օրէնքը հաստատուեց։ Փաղաքակրթուած երկիրների ժամանակակից անմեսական կեանքի մանրակրկիտ ուսումնասիրութիւնը անկասկած ցոյց է տալիս մեզ, որ այնտեղ դրամատիրական արդիւնագործութեան զարգացումը առաջ է գնում աչխատանքի արդիւնաէֆեկտութեան անընդհատ բարձրացման միջոցով դէպի արտադրութեան ու դրամագլխի կենտրոնացումը և աչխատանքի հասարականացումը։ Բայց սրա հետ միասին իրականութեան մէջ բացայայտուում են մի քանի չեղումներ այդ ընդհանուր դրութիւնից, — չեղումներ, որոնք պահանջում են մտցնել համապատասխան ուղղումներ Մարքս-Էնգելսի ենթադրական օրէնքի մէջ։ Այդ ուղղումները սրանք են.

1. Շնորհիւ բաժնեսիրական (հատաքական) դրամագլխի գոյութեան՝ արդիւնագործութեան կենտրոնացումը կարող է չը համապատասխանել դրամագլխի կենտրոնացման։ Ուստի դրամատիրական արդիւնագործութեան զարգացման համար բնորոչ է ոչ թէ դրամագլխի կենտրոնացումը, այլև արդիւնագործութեան կենտրոնացումը։

2. Արդիւնագործութեան կենսաբնագաւմը ուղղակի կախուած է այն առաւելութիւնից, որ խոշոր դրամատիրական արդիւնագործութիւնը ունի՝ համեմատած մանր միջակ դրամատիրական արդիւնագործութեան հետ: Որքան աւելի մեծ է այդ առաւելութիւնը, այնքան աւելի արագ է ընթանում արդիւնագործութեան կենսաբնաւորութիւնը: Ուստի այս ձիւղերում, որտեղ այդ առաւելութիւնը այնքան էլ մեծ չէ, խոշոր արդիւնագործութիւնը կարող է գոյութիւն ունենալ միջակի և նոյնիսկ մանրի կողքին:

3. Դրամատիրական արդիւնագործութիւնը չափազանց դանդաղ է մուտք գործում գիւղատնտեսութեան մէջ և բոլորովին չի տալիս այն հետեւանքները, որ նա աւելց ինդուստրիայում: Դրա պատճառը այն է, որ հողագործութեան մէջ բացակայում է մէկը այն հիմնական պայմաններից, որոնք անհրաժեշտ են դրամատիրական արդիւնագործութեան զարգացման համար, այսինքն աշխատանքի արդիւնաւէտութեան անընդհատ բարձրացման հնարաւորութիւնը նրա բաժանման և պարզացման միջոցով: Ուստի ինդուստրիայի վրայ կատարած դիտողութիւններից դուրս բերած օրէնքը չի կարող կիրառել գիւղատնտեսութեան վերաբերմամբ:

Այս ուղղութիւններից առաջինը չունի էական նշանակութիւն օրէնքի համար: Երկրորդը նրանից բղխող կոշտինակի հետեւանքներից մէկն է, ուստի և չի կարող փոխել նրա ներգործութիւնը. իսկ երրորդը մեծ չափով ահմանափակում է նրա ներգործութեան չրջանը, բայց բնաւ չի ոչնչացնում նրան, այլ աւելի շուտ նոյնիսկ հատատատում է նրա ճշդութիւնը ինդուստրիայի համար:

Այս ուղղութիւնները ի նկատի առնելով, Մարքսի և Էնգելսի նախագծած՝ դրամատիրական արդիւնագործութեան զարգացման ենթադրական օրէնքը ճարելի է արտայայտել այսպէս.



*Հասարակական տնտեսութեան այն ճիւղերում, որտեղ դրամատիրական արդիւնագործութիւնը գտնում է իր զարգացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները, տեղի է ունենում աշխատանքի արդիւնաւորութեան անընդհատ բարձրացման միջոցով արդիւնագործութեան կենտրոնացում և աշխատանքի հասարակականացում: Մինչև այժմ միայն ինդուստրիայում իրագործուցին դրամատիրական արդիւնագործութեան զարգացման նպաստող պայմանները:*

Սակայն մէկ բան ևս է ասանում Մարքս-Էնգելսի օրէնքը, եթէ քննենք նրան, կանգնած լինելով խիստ պատմական հողի վրայ, և ոչ մէկ իրականութիւնից չը ճչտուղ դուրսկութիւնների հողի վրայ:

**Արդեօք դրամատիրական արդիւնագործութիւնը ներկայացնո՞ւմ է պատճառը աշխատանքի հասարակականացման.**

— Մենք քննութեան առանք դրամատիրական հասարակութեան զարգացման ենթադրական օրէնքը և, համեմատելով նրան իրականութեան հետ, տեսանք այն ուղղութիւնները, որ այդ իրականութիւնը անհրաժեշտ է դարձնում մտցնել նրա մէջ: Սակայն բացի օրէնքներից կան նաև նրանց մեկնութիւնները և բացատրութիւնները: Իսկ եթէ ինդիրը հանում է պատմական օրէնքների մեկնութեան և բացատրութեան, տեղի է ունենում ձիշտ նոյնը, որ պատահում է առօրեայ կեանքի օրէնքների հետ — բացատրութիւնները և մեկնութիւնները յաճախ այնքան են այլանդակում օրէնքները, որ նրանց անունն է միայն մնում: Այստեղ արդէն իւրաքանչիւր ոք ստիպուած է պարզել գործը բուռ իր կարողութիւնների և ոյժի:

Մենք այստեղ կանգ կ'առնենք Մարքսի և Էնգելսի օրէնքի մեկնութիւններից մէկի վրայ, որ չատ մեծ կարեւորութիւն ունի ոչ միայն պատմական, այլև գործնական տեսակէտից: Մեր խօսքը այն նշանակութեան մասին է, որ Մարքսը և նրա հետեւողներից չատերը վե-

բագրում են դրամատիրական արդիւնագործութիւնը հասարակութեան զարգացման պատմութեան մէջ։

Դրամատիրական արդիւնագործութեան ուսումնասիրութիւնը բերեց Մարքսին այն եզրակացութեան, որ նրա ներմուծման ամենաառաջին հետեւանքն է աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումը, արդիւնագործութեան կենտրոնացումը, հետեւապէս և արդիւնաբերողական ոյժերի զարգացումը աշխատանքի հասարակականացման միջոցով։ Դա ենթադրական մի օրէնք է, որ դուրս է բերուած իրականութեան վրայ կատարած դիտողութիւններից։ Դա կարելի է բացատրել նրանով, որ դրամատիրական արդիւնագործելակերպը կապուած է աշխատանքի հասարակականացման հետ, հիմնուած այն եզրակացութեան վրայ, որ դրամատիրութիւնը աշխատանքի հասարակականացման պատճառը կամ խթանն է։ Դրամատիրական կարգերի նշանակութիւնը հասարակութեան զարգացման մէջ իւր մէջ կայանում է այն բանում, որ նա կոչուած է զարգացնելու հասարակութեան արդիւնաբերողական ոյժերը աշխատանքի հասարակականացման միջոցով։ Մարքսի միտքը աւելի կենդանի կերպով ներկայացնելու համար մենք համեմատեցինք հասարակութեան զարգացման դրամատիրական ասպիճանը հայհասիկի ուսչելու և ծլելու հետ, որ ապահովում է լոյսի լիակատար և բազմակողմանի մուտքը։ Մենք հարկաւոր է այժմ լուծել միայն ո՛րքան դրամատիրական կարգերի պատմական նշանակութեան մասին յայտնուած այդ միտքը ճիշտ է, ո՛րքան դրամատիրական կարգերը ներկայացնում են աշխատանքի հասարակականացման պատճառը կամ խթանը։

Եթէ մարդկային հասարակութիւնների զարգացումը դիտելու լինենք անցեալ 19-րդ դարի սկզբից մինչև մեր ժամանակը, այդ դէպքում իրօք կարող է առաջին հայեացքից թուիլ, որ դրամատիրական կարգերը աշխատանքի հասարակականացման հիմնական պատճառն են ներկայացնում։ Որովհետև արդիւնագործութեան այն ճիւղերը և այն երկիրները, որոնց չէ դրաւել դրամատիրական արդիւնագործութիւնը, անտեսական տեսակէտից մնացել են նոյն դրութեան մէջ, որի մէջ նրանք գտնուում էին տարիւր կամ երկու տարի առաջ։ Եւ ընդհակառակը, ամէն տեղ, ուր մուտք է գործել դրամագլուխը իր պահանջներով և ձգտումներով, նա բոլորովին կերպարանափոխում արդիւնագործութիւնը և մեծ ուժով առաջ մղել արդիւնաբերողական ոյժերի զարգացումը։ Բայց եթէ չը սահմանափակենք 19-րդ դարով, այլևնքն դրամատիրական արդիւնագործութեան ծագման և վերլուծման դարով, այլ մի ընդհանուր հայեացք դեպի մարդկային հասարակութիւնների զարգացման պատմութեան վրայ, — այդ դէպքում կ'երեւայ, որ աշխատանքի հասարակականացման ձգտումը արդիւնք է ոչ թէ դրամատիրական կարգերի, այլ նա նոյնքան հին է, որքան և իրաքը հասարակութիւնը։ Որովհետև հասարակութեան հիմքը կազմող աշխատակցութիւնը ընդհնին արդէն աշխատանքի հասարակականացման ամենաառաջին և ամենապարզ ձևն է։ Եւ քանի հասարակութիւնը ամրանում է և զարգանում, այնքան նրա մէջ անընդհատ ուժում է հասարակականացումը ոչ միայն աշխատանքի, այլ և մարդկային գործունէութեան բոլոր այլ տեսակների։ Ոչ միայն նրա մէջ աշխատակցութիւնը հասարակից դառնում է բոլոր՝ աշխատանքի բաժանումով և արտադրութեամբ՝ փոխանակութեան համար, այլ անընդհատ հասարակականանում են նրա մէջ գործունէութեան այնպիսի տեսակներ, որոնք արտադրութեան հետ ոչնչ առնչութիւն չ'ունեն։ Ցոյց տանք օրինակի համար թէկուզ ուսուցման հասարակա-

նայումը, որը գոյութիւն ունի չատ հին ժամանակներից և որը քաղաքակրթուած հասարակութիւնների մէջ հասել է զարգացման բարձր աստիճանի: Հասարակական կեանքի արշալոյսին ամող սերունդների ուսուցումը բնաւ գոյութիւն չ'ունէր, կամ եթէ գոյութիւն ունէր, այն էլ սաղմային վիճակի մէջ: Իւրաքանչիւր ամող մարդ ձեռք էր բերում իրան անհրաժեշտ կենսական գիտելիքները սեփական փորձով և դիտողութեամբ: Բայց որքան աւելի բազմանում ու հաւաքւում էին գիտելիքները, այնքան աւելի կարիք էր զգացւում յանձնելու նրանց մի սերունդից միւսին, որպէս զի իւրաքանչիւր սերունդ սոսկալած չը լինի ամեն ինչ սկզբից սկսել: Սառաջ եկաւ ուսուցումը: Սկզբում իւրաքանչիւր հայր և իւրաքանչիւր մայր սովորեցնում էին իրանց երեխաներին, ինչպէս և ինչ որ կարող էին: Կամաց-կամաց աշխատանքի բաժանումը՝ մարդկային գործունէութեան այս ճիւղն էլ՝ մուտք գործեց. — առաջ եկան ուսուցիչներ, որոնց յանձնուեց էր ուսուցանել ամող սերունդներին: Ուսուցիչները գնում էին իւրաքանչիւր տանտիրոջ մօտ և սովորեցնում էին նրանց երեխաներին որոշ ժամանակի ընթացքում որոշ վարձատրութեամբ (արդիւնքներով կամ փողով): Որովհետև չատ երեխաներ սովորեցնելու համար աւելի քիչ ժամանակ և աշխատանք է պէտք, քան նրանց առանձին սովորեցնելու համար, — ուստի երեխաներին սկսեցին դպրոցները հաւաքել, — սկզի ունեցաւ ուսուցման կենտրոնացում: Երբ դպրոցական գործը բաւականաչափ կարգի ընկաւ, պետութիւնը, ամբողջ հասարակութեան չահերի ներկայացուցիչը, տեսաւ այն ամբողջ նչանակութիւնը, որ ուսուցումը ունի հասարակութեան զարգացման համար, և իր ձեռքը վերցրեց դպրոցները. — ուսուցման կենտրոնացումը հասաւ իր զարգացման ամենաբարձր աստիճանին իր լիակատար հասարակականացումով: Մեր առաջին



է այստեղ մարդկային գործունէութեան այնպիսի ճիւղի մի օրինակ, որի մէջ կենտրոնացումը և հասարակականացումը տեղի են ունեցել անկախ դրամագլխի որ և է ազդեցութիւնից: Պետական և հասարակական դպրոցները գոյութիւն ունէին դրամատիրական կարգերի ծագումից չատ առաջ:

Վերցնենք մի այլ օրինակ, ոչ պակաս հրահանգիչ— կրօնը:

Կրօնը մարդուս վերաբերմունքն դէպի Աստուածը, այսինքն այն, որ համաբուում է պատճառը բոլոր պատճառների: Թէ որքան ճիչտ կամ սխալ է նա որոչում բոլոր պատճառների պատճառը և իր վերաբերմունքը դէպի նա, մենք այստեղ քննութեան չենք ենթարկի: Բաւական է ասել, որ իւրաքանչիւր մարդ ունի իր աստուածը: Հօտաւինտօտի (Հարաւային Սֆրիկայի վայրենու) համար փետուրներով լի ամանը աստուած է: Ուրիչ ժողովուրդների մօտ աստուածները աւելի կարեւոր առարկաներ են՝ — փայտից, կաւից կամ քարից չինուած ու զարդարուած կառոյներ. վանդալան կենդանիներ (եղներ, օձեր), տարրերք (կրակ, արև): Աւելի քաղաքակրթուած ժողովուրդները Աստուծու մասին ունենալով իրանց դաղափարում աւելի են մօտենում բոլոր պատճառների պատճառի հասկացողութեան, — նրանք համարում են Աստուծուն ստեղծող երկնքի և երկրի, տեսանելի և անտեսանելի, ինչպէս վայել է բոլոր պատճառների պատճառին, նա ամենազոր, ամենագէտ և ամենաբարի է: Թւում է թէ կրօնը իւրաքանչիւր մարդու անձնական գործն է, որ բացի նրանից ոչ ոքի հետ առընչութիւն չունի: Բայց իրօք դուրս է գալիս, որ կրօնը ուսուցման նման ենթարկուում է հասարականացման: Սկսում է այն բանից, որ հասարակութեան մէջ ապրող մարդիկ փոխադարձաբար հաղորդում են իրար

իրանց խորհրդածութիւնները, յետոյ սկսում են հաւաքել միասին աստուածային խնդիրներու մասին խօսելու և իրանց վերաբերմունքը դէպի Աստուածը արտայայտելու համար՝ բանաւոր դիմումների (աղօթքների) միջոցով։ Ծագում են կրօնական համայնքները, որոնք որոշ օրեր և ժամեր հաւաքւում են յատկապէս կառուցած չինութիւնների (սաճարների) մէջ ընդհանուր (հասարակական) աղօթքների համար։ Համայնքները մանում են յետոյ յատկանշութեան մէջ իրար հետ և միանում-կազմում են մի ընդհանուր հասարակական միութիւն — եկեղեցի, որ արտայայտում է նրա կազմի մէջ մտնող բոլոր հաւատացեալների հոգեւոր չափերը։

Այսպիսով կրօնը գործում սեղի է ունենում նոյնպիսի սահմանական հասարակականացում, ինչպէս և արդիւնագործութեան և ուսուցման մէջ։ Եւ առհասարակ, ուսումնասիրելով մարդկային հասարակութիւնների զարգացման պատմութիւնը, չի կարելի չը տեսնել, որ նրա մէջ կարմիր թելով անցնում է մարդկային գործունէութեան բոլոր տեսակների հասարակականացման ձգտումը։ Բայց մարդուս գործունէութիւնը ունի մի նպատակ — բաւարարել նրա կարիքները, ինչպէս նիւթական, այնպէս և հոգեւոր։ Ուստի մենք վճռականապէս իրաւունք ունենք ասելու, որ հասարակութեան զարգացումը աստիճանական հասարակականացումն է մարդուս նիւթական եւ հոգեւոր կարիքները հոգալու համար անհրաժեշտ միջոցների եւ եղանակների։

Մեր ասածից երեւում է, որ աշխատանքի հասարակականացումը արդիւնք չէ դրամատիրական արդիւնագործութեան և յատուկ չէ միմիայն նրան։ Հասարակականացման ձգտումը բոլոր է հասարակութեան հնոյ էութիւնից, որովհետև մարդիկ միայն նրա համար են հասարակութիւն կազմում, որպէսզի հասարակականացնեն



իրանց գործունէութիւնը։ Բայց մեզ կարող են ասել. «Ճիշտ է, աշխատանքի հասարակականացման ձգտումը արդիւնք չէ դրամատիրական արդիւնագործութեան, բայց միայն նա է, որ իրագործում է աշխատանքի հասարակականացման այդ ձգտումը, դարձնում է նրան իրողութիւն, որովհետև այնտեղ, որտեղ չը կայ դրամատիրական արդիւնագործութիւն, չը կայ և հասարակութեան արդիւնաբերողական ոյժերի զարգացում, չը կայ աշխատանքի հասարակականացում»։

Այդ առարկութիւնը առաջին հայեացքից թւում է շատ ազդեցիկ, և մենք կ'աշխատենք վերլուծել նրան այն անաչառութեամբ ու հանդարտութեամբ, որ անհրաժեշտ է մացնել ոչ միայն գիտական, այլ թերեւս ամեն տեսակ հարցերի քննութեան մէջ։ Մեր միտքը ասելի պարզ արտայայտելու համար դիմենք կրկին օրինակի։

Երեւակայենք մի գետ, որ հոսում է ժայռոտ ափերի միջով։ Անցնելի ժամանակներից նա փորել է իր հունը և հոսում է նրա վրայով մարմինների թեք հարթութեան վրայ շարժուելու օրէնքի չնորհիւ, — իբրեւ քանչիւր մարմին, որ դրած է թեք հարթութեան վրայ, կը շարժւի նրա վրայով, մինչեւ որ կը հասնի հարթ տեղ. նոյնպէս և գետը հոսում է, մինչեւ որ կը թափւի ծովը։ Իրանց կողմից, ժայռերը կանգնած են գետի ափին ոչ իրանց բարեհայեցողութեամբ, այլ նոյնպէս չնորհիւ լեռների և հովիտների բաշխման առանձին օրէնքի՝ երկրի մակերեւոյթի վրայ։

Այն ժամանակ, երբ գետը հոսում է, ժայռերը նոյնպէս չեն մնում անփոփոխ, — ցրտից ու տաքից նրանք ճեղքւում են, անձրեւների ժամանակ այդ ճեղքածները լցւում են ջրով, որ մաշում է ժայռը, ինչպէս օրթը ուտում է ծառը։ Այդ փոփոխութիւնները նոյնպէս կատարւում են որոշ օրէնքի համաձայն։ Այնպէս դարեր, և

գետի ափի վրայ կանգնած մեծ ժայռերից մեկի ժամը հասաւ, — առնամանիքներից և տաքից նա բաւական ձեղքւած էր, չերեքը նրան բաւական մաշել էին: Նրա հանգարեալ կէսը փլուզից ընկաւ գետի մէջ և լցրեց ամբողջ հունը: Գետը կանգնեց, ափերից դուրս եկաւ, իսկ երբ բաւականաչափ ջուր հաւաքուեց լճացած տեղում, սկսեց — մարմինների թեք տարմաւթեան վրայ չարժւելու անփոփոխ օրէնքի ոյժով — փորել իր համար նոր հուն: Գոյացաւ պատյա անող մի ճամբայ, որով կամաց-կամաց առաջ մղւեց գետի հոսանքը: Գետի պատյա անող այդ ճանապարհի ափին մարդիկ եկան ու չինեցին ջրաղացներ, առաջնորդարաններ, ձիմանոքներ, և սկսեցին այտեղ ապրել ու գործով պարապել...

Այժմ երեւակայենք, որ մի որ և է հետազօտող այս պիսի դատողութիւններ անէր. «Ձիչտ է որ հոսանքը մրեւնոյն է թէ գետի մէջ և թէ պատյա անող ճանապարհի վրայ. բայց միայն պատյա անող ճանապարհն է, որ հնարաւորութիւն ունէ յաջողութեամբ գործի դնել բոլոր այդ ջրաղացները, առաջնորդարանները և ձիմանոքները, որովհետև քանի գետ չը կայ պատյա անող ճանապարհը, գետի վրայ չը կայնի ոչ ջրաղացներ, ոչ առաջնորդարաններ, ոչ էլ ձիմանոքներ»: Ձիչտ այդպէս են դատում նրանք, որոնք դրամատիրական արդիւնագործութեան վերաբերում են աշխատանքի հատատրականացման իրագործութեան: Որովհետև մեր օրինակի մէջ գետի հունը ներկայացնում է հատատրական կեանքի ձեւերը նրա յաւերժ ձգտմամբ դէպի մարդկային գործունէութեան բոլոր տեսակների հատատրականացումը, և պատյա անող ճանապարհը՝ դրամատիրական կարգերն են. իսկ ջրաղացները, առաջնորդարանները և ձիմանոքները, ներկայացնում են զարգացած արդիւնաբերողական ոյժերը աշխատանքի ձեռք բերած հատատրականացումը: Եթէ ու-



զիղ դատելու լինենք, կ'տեսնենք. «Ջրաղացները, առաջնորդարանները և ձիմանոքները յաջողութեամբ գործում են պատյա անող ճանապարհի վրայ, ոչ թէ այն պատճառով, որ նա պատյա անող ճանապարհ է, այլ որովհետև եկան հնարաւոր մարդիկ և չինեցին նրանց այնտեղ»: Ուրեմն խօսքով, արդիւնաբերողական ոյժերի զարգացումը և աշխատանքի հատատրականացումը տեղի ունեցան ոչ այն պատճառով, որ երեւան եկաւ դրամատիրական արդիւնագործութիւնը, այլ որովհետև հատունացան արդիւնաբերողական ոյժերի զարգացման և աշխատանքի հատատրականացման համար նպաստաւոր պայմանները: Դրամատիրական կարգերը միայն օգտւեցին այդ նպաստաւոր պայմաններից և իւրացրին նրանց բոլոր առաւելութիւնները ճիշտ այնպէս, ինչպէս պատյա անող ճանապարհը չեզեց գետի ամբողջ հոսանքը նրա դարեւոր հունից: Արդ, ինչո՞ւմն են կայանում աշխատանքի հատատրականացման նպաստող պայմանները, և ինչպէս նրանց երեւան գալը զուգադիպեց դրամատիրական արդիւնագործութեան երեւան գալու հետ: Փորձենք այդ հարցերին էլ պատասխանել՝ մեր ոյժը նեբածին չափ:

Արդիւնաբերողական ոյժերի զարգացման համար հատատրականութեան մէջ, աշխատանքի անդադար հատատրականացման համար աշխատակցութեան հողի վրայ անհրաժեշտ են հետեւեալ պայմանները.

**1. Աշխատանքի բաժանման անընդհատ ընդարձակման հնարաւորութիւնը.** — Աշխատանքի հատատրականացումը կայանում է նրանում, որ ապրանքի իւրաքանչիւր առարկայի արտադրութեան մէջ մասնակցում է ոչ թէ մի, այլ չատ արդիւնաբերողներ: Իսկ այդ իր հերթին ձեռք է բերում միայն բարդ աշխատակցութեան միջոցով, այսինքն աշխատանքի բաժանումով աշխա-

*տակցութեան մէջ։ Որքան աւելի արդիւնաբերողներ են մանակցում ապառման առարկայի արտադրութեան մէջ, որքան աւելի խելացի կերպով է բաժանուած արտադրութեան աշխատանքը, այնքան աւելի հասարակական է դառնում արտադրութեան արդիւնքը, այնքան աւելի է աճում աշխատանքի հասարականացումը։ Որ աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացման անհրաժեշտութիւնը կամ ձեռնտու լինելը հասարականացման չարժող ոյժն է, — այդ ինքն իսա ինքնին հասկանալի է։*

**2. Հնարաւորութիւնը իւրաքանչիւր արդիւնաբերողի համար գործադրել իր աշխատանքը այնտեղ, որտեղ նա համարում է այդ ձեռնտու եւ յարմար իր համար.** — *Հասարակութեան արդիւնաբերողական ոյժերի զարգացումը կարող է յաջողութեամբ առաջ գնալ միայն այն ժամանակ, երբ արդիւնաբերողը չի հետապնդում բոնի իր գործից ամեն տեսակ՝ արտադրութեան համար օտար ոյժերով, երբ նա հնարաւորութիւն ունի իր բարեհայեցողութեամբ ամենայաջող կերպով չհամագործակցել իր աշխատանքը։ Արդիւնաբերողական ոյժերի զարգացման համար հասարակութեան մէջ, հետեւապէս, աշխատանքի հասարականացման համար արդիւնաբերողին հարկաւոր է գործողութիւնների ազատութիւն։*

**3. Փոխադրութիւն.** — *Աշխատանքի անընդհատ բաժանումն է միաժամանակ և նրա անընդհատ զարգացումը։ Իսկ զարգացումը ենթադրում է հնարաւորութիւնը փոխադրելու մարդկային աշխատանքը մեքենայիով, հնարաւորութիւնը անընդհատ կատարելագործել արդիւնագործութիւնը։ Իսկ արդիւնագործութիւնը կատարելագործել կարելի է միայն այն ժամանակ, երբ հասարակութեան մէջ կան դրա համար հարկաւոր դիտելիքները։*



*Ուստի գիտելիքները կազմում են անհրաժեշտ պայմանը արդիւնաբերողական ոյժերի զարգացման և աշխատանքի հասարականացման։ Այնտեղ, որտեղ չը կան գիտելիքներ, չը կայ և աշխատանքի հասարականացում։*

*Համեմատենք այժմ աշխատանքի հասարականացման համար անհրաժեշտ պայմանները այն պայմանների հետ, որոնք անհրաժեշտ են դրամատիրական արդիւնագործութեան զարգացման համար։*

*Ինչպէս մեզ արդէն յայտնի է, արդիւնաբերողների մի մասի սեղմնական անջատումից զատ իրանց արտադրութեան միջոցներից (դրամագլխի սեղմնական կուտակումից զատ), դրամատիրական արդիւնագործութեան զարգացման համար անհրաժեշտ են նաև հետեւեալ պայմանները.*

*1. Աշխատանքի արդիւնաւէտութեան այնպիսի մակերեւոյթ, որի ժամանակ արդիւնաբերողը աւելի արտադրէ, քան հարկաւոր է նրա կարիքների բաւարարման համար.*

*2. Աշխատանքի լայն բաժանում.*

*3. Գիտելիքների որոշ մակերեւոյթ հասարակութեան մէջ, և*

*4. Գործողութիւնների ազատութիւն։*

*Համեմատութիւնից երեւում է, որ այդ պայմաններից երեքը, այսինքն՝ աշխատանքի բաժանումը, գործողութիւնների ազատութիւնը եւ գիտելիքները նոյնքան հարկաւոր են աշխատանքի հասարականացման սեմման համար, որքան և դրամատիրական արդիւնագործութեան զարգացման համար։ Նրանք արդիւնաբերողական ոյժերի հիմնական պայմաններն են ամեն տեսակ կարգերի մէջ էլ։ Իսկ ինչ վերաբերում է մնացած երկու պայմաններին, որոնք անհրաժեշտ են դրամատիրական արդիւնագործութեան զարգացման համար, — նրանցից մէ-*

կը էական նշանակութիւն չ'ունի աշխատանքի հասարականացման համար, երկրորդը նրան ուղղակի հակառակ է։ Եւ իրօք արդիւնաբերողի անջատումը արտադրութեան միջոցներից, վերջիններիս անցը դրամատէրերի ձեռքը որպէս նրանց մասնաւոր սեփականութիւն, է չեզոքացնում հասարակութեան բնական ձգտումից դէպի արդիւնագործութեան հասարականացումը, և ոչ թէ նրա իրագործումը։ Ճիշտ նոյնպէս և աշխատանքի արդիւնաւէտութեան մակերեւոյթը, որի վրայ արդիւնաբերողը ունկն է արտադրում, քան հարկաւոր է նրա ապրուստի համար, — անհրաժեշտ է դրամատիրոջ համար, բայց աշխատանքի հասարականացման համար ուղղակի նշանակութիւն նա չ'ունի։ Դրամատիրոջ նա հարկաւոր է, որովհետև դրամատէրը այլապէս չի կարողանայ չահ ստանալ արդիւնաբերողից՝ օգտագործելով սեփականացրած արտադրութեան միջոցները։ Իսկ աշխատանքի հասարականացման համար աշխատանքի արդիւնաւէտութիւնը հետեւանք է և ոչ պատճառ։ Աշխատանքի հասարականացումը սկսւում է հասարակ աշխատակցութիւնից, երբ մարդս արտադրում է ոչ միայն ունկն, այլ թերեւս պահաս, քան հարկաւոր է նրա ապրուստի համար։ Աշխատանքի արդիւնաւէտութեան զարգացումը բղխում է նրա հասարականացումից, և ոչ թէ ընդհակառակը։

Ա.յսպիսով, մանրակրկիտ քննութեան ենթարկելով բոլոր վերոյիշեալ դատողութիւնները, անխուսափելիօրէն գալիս ենք այն եզրակացութեան, որ այն պայմանները, որոնք անհրաժեշտ են աշխատանքի հասարականացման աճման համար, նոյնպէս անհրաժեշտ են դրամատիրական արդիւնագործութեան զարգացմանը. իսկ այն յատկապայմանները, առանց որոնց դրամատիրական արդիւնագործութիւնը չի կարող առաջ գալ — արդիւնաբերողի անջատումը արտադրութեան միջոցներից և աշ-



խատանքի արդիւնաւէտութեան բարձր մակերեւոյթը — աշխատանքի հասարականացման համար ոչ միայն անհրաժեշտ չեն, այլ մասամբ նոյնիսկ վնասակար են։ Աշխատանքի հասարականացումը կարող է գոյութիւն ունենալ առանց դրամատիրական արդիւնագործութեան, իսկ դրամատիրական արդիւնագործութիւնը առանց աշխատանքի հասարականացման գոյութիւն չի կարող ունենալ։ Սրանից երեւում է, որ ոչ թէ դրամատիրական արդիւնագործութիւնն է իրագործում աշխատանքի հասարականացումը, այլ, ընդհակառակը, աշխատանքի հասարականացումը հետաքրքրութիւն է դարձնում դրամատիրական արդիւնագործութեան գոյութիւնը։

Սակայն ինչպէս ասւեց, որ աշխատանքի հասարականացման արագ աճումը 19-րդ դարում զուգադիպեց դրամատիրական արդիւնագործութեան արագ զարգացման։ Այդ հարցին պատասխանելու համար պէտք է պարզել թէ աշխատանքի հասարականացման, ինչպէս նաև դրամատիրական արդիւնագործութեան զարգացման համար անհրաժեշտ հնձիական պայմաններից որն է փոխհատուցել 19-րդ դարի սկզբին։

**Գիտութիւնը, որպէս հիմնական շարժիչ արդիւնաբերողական ոյժերի զարգացման, աշխատանքի հասարականացման.** — Աշխատանքի հասարականացման ամենակարեւոր համար անհրաժեշտ պայմաններից ամենաէականը անկասկած գիտութիւնն է։ Երբ հասարակութիւնը կազմակերպւում է աշխատակցութեան հողի վրայ, մարդկանց ոյժերի և ընդունակութիւնների բազմազանութիւնը, ինչպէս և բազմազանութիւնը բնութեան պայմանների, որոնց մէջ գործադրւում է աշխատանքի բաժանումը։ Այդ պատճառով իւրաքանչիւր հասարակութեան մէջ միշտ լինում է աշխատանքի հասարականացման աճումը։ Ճիշտ

նոյնպէս գործողութիւնների ազատութիւնը հարկաւոր է արդիւնաբերողական ոյժերի յաջող զարգացման համար, նրա բացակայութիւնը խանգարում է այդ զարգացման, և ոչ թէ նրան առաջ է մղում: Աշխատանքի դիւրութիւն ունեցող բաժանման և գործողութիւնների լիակատար ազատութեան ժամանակ աշխատանքի հասարականացումը չի աճում բոլորովին կամ աճում է չափազանց դանդաղ, եթէ նրան օգնութեան չի գալիս դիտութիւնը: Միայն դիտութիւնն է, որ հնարաւորութիւն է տալիս կատարելագործելու արդիւնաբերութիւնը աշխատանքի բաժանման և զարգացման միջոցով, այսինքն անընդհատ հասարականացնելու աշխատանքը:

Եթէ դիմելու լինենք դիտութեան պատմութեանը, մենք կը տեսնենք, որ բնութեան օրէնքների ճանաչելը կատարւում և տարածւում էր մարդկային հասարակութիւնների մէջ արտասովոր դանդաղութեամբ մինչև 19-րդ դարը: Սրան կատարելապէս համաձայն, արդիւնաբերողական ոյժերը, և աշխատանքի հասարականացումը կանգնած էին զարգացման չատ ցածր աստիճանի վրայ նոյնիսկ ամենաառաջատար երկիրներում: Յետադարձ հայեացք գցելով մարդկութեան անցած ճանապարհի վրայ սկսած նրա ծագման օրերից մինչև մեր ժամանակը, մենք կարող ենք համոզուած ասել, որ իր գոյութեան ամբողջ ընթացքում մինչև 19-րդ դարը կատարած դիտութիւնը ներկայացում է միայն դանդաղ և չափազանց մեծ աշխատանքով պատրաստած նոր իսկական դիտութեան զարգացման համար: Բայց այդ նորը, քանի երեւոյթին, լաւ էր պատրաստած, և սկսած 18-րդ դարի վերջից, Եւրոպայի և Ամերիկայի ամենաքաղաքակրթուած երկիրներում մարդկային դիտութեան բոլոր ճիւղերը սկսեցին զարգանալ աւելի ու աւելի մեծ արագութեամբ: Միայն մի հարիւր տարուայ ընթացքում



մարդկութիւնը աւելի դիտութիւն ձեռք բերեց, քան իր գոյութեան բոլոր նախընթաց երկար հազարամեակների ընթացքում:

Եւ այսպէս սկսած 19-րդ դարից չափազանց նախաւելի կերպով փոխուեց արդիւնաբերողական ոյժերի և աշխատանքի հասարականացման զարգացման հիմնական պայմանը, փոխուեց դիտութեան մակերեւոյթը: Իսկ որովհետև այդ փոփոխութիւնը կատարւում էր նպատատաւոր ուղղութեամբ — դիտութեան մակերեւոյթի բարձրացման ուղղութեամբ, — ուստի նա անխուսափելիօրէն պէտք է առաջ բերէր նոյնպիսի փոփոխութիւն արդիւնաբերողական ոյժերի դրութեան մէջ: Դիտութեան արագ զարգացումը անխուսափելիօրէն պէտք է առաջ բերէր աշխատանքի հասարականացման արագ զարգացումը:

Սակայն ինչո՞ւ աշխատանքի հասարականացման այդ զարգացումը ստացաւ դրամատիրական արդիւնագործութեան ձեւը: Դրամատիրական արդիւնագործութիւնը հիմնուած է այն բանի վրայ, որ դրամատէրը գրաւում է արտադրութեան միջոցները, դարձնելով նրանց իր սեփական սեփականութիւնը, և իւրացնում-ծաւալեցնում է իր անձնական օգտին հասարակական արդիւնքների մի մասը: Արտադրութեան միջոցների գրաւելը և հասարակական արդիւնքների մի մասի սեփականացնելը դնում են ընդդէմ հասարակութեան բնական ձգտման դէպի արտադրութեան և բաշխման հասարականացումը: Սակայն ինչո՞ւ աշխատանքի հասարականացումը դնաց ոլորտոտուն ճանապարհով և ոչ իր սեփական հունով: Այդ տեղի ունեցաւ նոյն պատճառով, որով և վերջին ժամանակի օրինակի մէջ գետը ստիպուած էր թողնել իր հունը և գնալ պատուի անող ճանապարհով, — բնական հունը կարճ էր...

Երբ մենք նախընթաց դլխում խօսում էինք բոլոր զարգացման օրէնքի մասին, մենք բոլոր ժամանակ

ինկատի ունենք բոյսի կանոնաւոր (ճօրմալ) զարգացումը, այսինքն մենք նկատի ենք, որ ներկայ են այն բոլոր պայմանները, որոնք նպաստում են բոյսի զարգացման, և բացակայ են պայմանները, որոնք խանգարում են նրա զարգացման: Իսկ իրականութեան մէջ, կարելի է ասել, երբէք չի պատահում, որ ներկայ լինեն բոլոր նպաստող պայմանները և բացակայեն բոլոր խանգարող պայմանները: Միշտ մի որ և է կողմից թերութիւն կը լինի: Այդ պատճառով էլ բոյսի զարգացումը երբէք չի լինում կատարեալ կամ նորմալ (ճօրմալ): — չորային ամառ ժամանակ արմատները չատ խորն են մտնում հողի մակ, և ծղօտը կարճ է լինում, իսկ անձրեւային ամառը՝ տերև է ունենում հարուստ երեւոյթը, հասկը: Զարգացման ինչ երեւոյթներն էլ վերցրնենք, նրանք միայն նրանք բուսականութեան ուսումնասիրած են, միշտ նրանցից մենք կարող ենք հետևցնել մի ընդհանուր կանոն (ճօրմա), որ ցոյց է տալիս ուսումնասիրուղ զարգացման ընդհանուր ընթացքը: Իսկ մանուածոյային երկրորդական պատճառների աղերսութեան նկատմամբ՝ զարգացման ընթացքի մէջ միշտ լինում են աւելի կամ պակաս չափով չեղումներ ընդհանուր կանոնից (ճօրմայից) — չեղումներ, որոնք սակայն քնաւ չեն տատանում զարգացման օրէնքի ճշտութիւնը: Մեր ուսումնասիրութեան զարգացման վերաբերմամբ, ինչպէս և զարգացման ամեն երեւոյթի վերաբերմամբ:

Հասարակութեան զարգացումը կայանում է մարդուս գործունէութեան բոլոր տեսակների անընդհատ հասարակացման մէջ, — գործունէութեան, որի նպատակն է բաւարարութիւն տալ նրա նիւթական և հոգեւոր կարիքներին: Սա ընդհանուր օրէնք է: Համաձայն այդ օրէնքին, կանոնաւոր, ճօրմալ զարգացող հասարակութիւն մենք կ'անուանենք այնպիսին, որի մէջ ամեն բան կը նպաստէ մարդուս գործունէութեան բոլոր տեսակների



անընդհատ հասարակացման, և ոչինչ չէր խանգարի այդ հասարակացումը: Իրականութեան մէջ, ինչպես ցոյց է տալիս պատմութիւնը, մարդկային հասարակութիւնների զարգացումը ներկայացնում է մանաւանդ և մարդկութեան թանկ նստող չեղումներ ընդհանուր նօրմայից: Այդ չեղումները նօրմայից սկսել են հասարակական զարգացման թերևս առաջին սահմաններից:

Նախնական մարդկանց մօտ, ինչպես նաև հետևրով ապրող չատ կենդանիների մօտ աչխատակցութիւնը, համերաշխ գործակցութիւնը առաջ է գալիս ոչ թէ մտածելու ճանապարհով (սպասադրութեան), այլ ինքնապաչտպանութեան պահանջի հետևվանքով: Գիտական տեսողութիւնները ապացուցին, որ մարդկային հասարակութիւնները ծագել են տաք (տորա-արեւադարձային) երկիրներում, որտեղ ուտելու բոյսեր և պտուղներ չատ են եղել: Ստամաքաչունչի տակով, մեր նախահայր Ադամը կարող էր, առանց յուրա զգալու, մերկ մարմնի վրայ, մինչև որ նրան ձմեռակել բարին ու չարը ճանաչելու ծառից: Որովհետև նախնական մարդիկ այժմեականների նման ամենևակեր չէին և կերակրուում էին բացառապէս բոյսերով, — ուստի մտածելի առանձին պակաս չէին կարող զգալ: Աւելի վատ էր նրանց դրութիւնը թշնամիներից պաչտպանելու խնդրում, թշնամիներից, որոնք իրենց ամեն տեսակ վայրի գազանների վիճակում էին տաք երկիրների անտառներում: Մի մարդը մենակ ոչինչ չի կարող անել վագրի և նոհնի դէմ: Այստեղ անհրաժեչտ էր բազմաթիւ մարդկանց միանալ, որպէսզի հետևաբար լինէր միասին նրանց ոչ յաղթել՝ գոնէ վախեցնել, փախցնել իրենց թշնամուն: Եւ նախնական մարդիկ անկասկած ամենից առաջ միացան ինքնապաչտպանութեան համար: Անհատականից ինքնապաչտպանութիւնը աւելի ու աւելի դառնում էր հասարակական, — տեղի ունեցաւ ինքնապաչտպանողական հասարակականացումը: Հասարակութեան զարգացման տե-

սակէսից սկզբում այդ լաւ էր և կատարելապէս ներելի։ Բայց ահա սկսւում են չեզոքները։ Աշխատանքի բաժանման ներկայ հասարակութեան մէջ ծագում է պետական գաղափարը, որի վրայ է ծանրանում հասարակութեան պաշտպանութիւնը թշնամիներից։ Զինուորների մօտ երեւան են գալիս զօրավարներ, իշխաններ, որոնք յենելով իրանց զինուորական ոյժերի վրայ, հպատակեցնում են իրանց հասարակութիւնը և սկսում են հասարակական զիւորական ոյժի օգնութեամբ իրանց անձնական գործերը առաջ տանել, — պատերազմում են ուրիշ հասարակութիւնների հետ նրանց դիրքի մէջ դնելու համար, խլում են իրանց հասարակութեան անդամների ձեռքից նրանց դիրքը, սեփականացնում են հասարակական տուրքը ... Այսպիսով, ինքնապաշտպանութեան սկզբնական հասարականացումը առաջ է բերում այնպիսի կողմնակի հասարակական երեւոյթներ, որոնք ոչ միայն խանգարում են ինքնապաշտպանութեան իւառագայ հասարականացման, այլ կասեցնում են նաեւ հասարականացումը մարդուս գործունէութեան այլ տեսակների։ Օրինակ, արդիւնաբերութեան հասարականացումը անկասկած վնասում է այն բանից, որ զօրապետը խլում է աշխատակցող արտադրողների գիրքը և սեփական կանացում հասարակական տուրքը։ Ընդհանրապէս պէտք է ասել, որ հասարակութեան կանոնաւոր, ներդաշնական ժամանակ մարդուս գործունէութեան հասարականացումը պէտք է տեղի ունենայ հասարակական նախաձեռնութեամբ։ Այդպէս էլ էր, քանի դեռ չը կային կողմնակի պահանջներ, քանի դեռ հասարակական պետական ոյժի անօրինութիւնը չէր ընկել առանձին մարդկանց կամ դասակարգի ձեռքը։ Որովհետեւ պետական ոյժը կառավարելը տալիս է կառավարողներին մի չարք անհետեւական առաւելութիւններ, որոնք հակառակ են ամբողջ հասարակութեան շահերին, ուստի և հասկանալի է, որ իշխանաւորները անխուսափելիօրէն պէտք է թշնամ-



մաբար վերաբերուեն դէպի հասարակական նախաձեռնութիւնը։ Եւ իրօք մարդկութեան ամբողջ պատմութիւնը ներկայացած է անընդհատ արիւնոտ կռւով այդ երկու ոյժերի միջև — հասարակական նախաձեռնութեան, որ ձգտում է հասարականացնել մարդկային գործունէութեան բոլոր տեսակները յանուն հասարակութեան բոլոր անդամների բարօրութեան, և հակահասարակական, դասակարգային ոյժերի, որոնք ձգտում են իրանց մասնաւոր օգուտն ծառայեցնել հասարակական կեանքի բոլոր բարիքները։ Հէնց այն արդէն, որ մարդկային հասարակութիւնները այնուամենայնիւ առաջ են գնում, զարգանում են, — ցոյց է տալիս, որ հակահասարակական, դասակարգային ոյժերին չի յաջողւում կատարելապէս խեղդել հասարակական նախաձեռնութիւնը. մարդկային գործունէութեան հասարականացումը, չնայած բազմաթիւ արգելքներին ու խոչնդոտներին, անկասկած առաջ է գնում։ Սակայն այդ հասարականացման բարիքները ամենից առաջ դրսւում են ենթարկւում իշխանաւորների կողմից։ Այդպէս էր և աշխատանքի հասարականացման գործը։

Երբ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին գիտութեան արագ զարգացումը հնարաւորութիւն տւեց արագ կերպով առաջ մղելու աշխատանքի հասարականացումը, հասարակական նախաձեռնութիւնն այնքան էր թուլացած ունեւոր դասի ճնշման ներքին, որ նա չէր կարող չհասկանալ այդ նոր գրութիւնը աշխատանքի յետագայ հասարականացման համար յանուն ամբողջ հասարակութեան բարօրութեան։ Միւս կողմից ունեւոր դասի ձեռքում կային բոլոր միջոցները իր օգտին ծառայեցնելու նոր հասարակական գրութեան առաւելութիւնները։ Նրա ձեռքումն էին կենտրոնացած մեծ գրամագլուխներ — արտադրութեան միջոցները և արդէն կային աշխատաւոր ձեռները արտադրութեան այդ միջոցները գործի դնելու համար։ Բայց այդ, ինքը գիտութիւնը

նրա բացառիկ սեփականությունն էր, որովհետև այն ժամանակներում դիտությունը մատչելի էր միայն ունևոր դասին: Ահա թե ինչու աչխատանքի հասարակականացումը, որը 19-րդ դարում այնքան առաջ գնաց, չնորհիվ գիտության արագ զարգացման, անխուսափելիորեն պետք է դրամատիրական արդիւնագործութեան կերպարանքը սասանար նրա բոլոր հետևանքներով: Բայց վերևում ասածից երևում է, որ աչխատանքի հասարակականացումը ծնունդ չէ դրամատիրական արդիւնագործութեան: Ամբողջ հասարակութեան կարիքներն են, որ առաջ են բերել աչխատանքի այդ հասարակականացումը. ամբողջ հասարակութեան միահամուռ ոյժերն են, որ իրագործում են նրան, — բայց նրա ստեղծած բարիքները ծառայում են հասարակութեան մի մասին, դրամատիրական դասին:

**Կազմո՞ւմ են արդեօք դրամատիրական կարգերը ամեն մի հասարակութեան զարգացման անհրաժեշտ ասպնջականը.** — Դրամատիրութեան (կապիտալիզմի) պատմական նշանակութեան խնդրի հետ սերտ կերպով կապած է այն հարցը թէ արդեօք դրամատիրական կարգերը կազմում են իրաքանչիւր հասարակութեան զարգացման անհրաժեշտ սանդուղքը: Ելակէտ ընդունելով այդ դրութիւնը, ասելի ճիշտ, այն ենթադրութիւնը, որ դրամատիրական կարգերը ներկայացնում են հասարակութեան արդիւնաբերողական ոյժերի զարգացման չարժիչ ոյժը աչխատանքի հասարակականացման միջոցով, — Մարքսի մի քանի հետևողները համարում էին դրամատիրական կարգերը հասարակութեան զարգացման նորմալիսի անհրաժեշտ ասպիճան, ինչպէս են, օրինակ, հայտնաբերիչների ուսումը և ծլելը բոյսի զարգացման համար: Դրամատիրական արդիւնագործութիւնը, որը միայն ինդուստրիայում հասել է զարգացման բարձր ասպիճանի, ապրանքային արդիւնագործութիւն է, այսինքն ծախու համար կատարած՝



ապրանքների արտադրութիւն է: Այստեղից հետևակացնում են, որ դրամատիրական արդիւնագործութեան զարգացման օրէնքը ապրանքային արդիւնագործութեան զարգացման օրէնքն է: Իսկ այստեղից անում են հետևեալ հակառակ եզրակացութիւնը, որ ապրանքային արդիւնագործութիւնը անխուսափելիորէն առաջ է բերում դրամատիրական կարգերը:

Իրաքանչիւր երկիր, անհետութեան իրաքանչիւր ձիւղ, որ կանգնել է ապրանքային արդիւնագործութեան ճանապարհի վրայ, պէտք է վաղ թէ ուշ ենթարկուի դրամագլխի և արտադրութեան կենտրոնացման բոլոր հրապոյրներին:

Այդ ամբողջ եզրակացութիւնը ձիչտ կը լինէր, եթէ դրամատիրական և ապրանքային արդիւնագործութիւնը մնայուն երևոյթը լինէին: Իրօք այստեղ կրկնում է նոյն թիւրիմացութիւնը, որ մենք տեսանք աչխատանքի հասարակականացման վերաբերմամբ: Դրամատիրական արդիւնագործութիւնը չի կարող դադարութիւն ունենալ առանց աչխատանքի հասարակականացման, բայց աչխատանքի հասարակականացումը չատ լաւ կարող է իրականանալ առանց դրամատիրական արդիւնագործութեան: Ճիշտ նոյնպէս և դրամատիրական արդիւնագործութիւնը չի կարող դադարութիւն ունենալ առանց ապրանքային անհետութեան, բայց ապրանքային անհետութիւնը ծագում է դրամատիրականից առաջ և կարող է առանց նրան էլ դադարութիւն ունենալ:

Ապրանքային անհետութիւնը, այսինքն առարկաների արտադրութիւնը ոչ-սեփական ապրանքի, այլ փոխանակութեան կամ վաճառքի համար, սկսւում է այնտեղ, որտեղ — չնորհիւ մարդուս ոյժերի և ընդունակութիւնների բազմազանութեան, ինչպէս նաև չնորհիւ բնութեան պայմանների բազմազանութեան — առաջ է գալիս աչխատանքի բաժանում: Եթէ մարդս ինքը չի արտադրում իր կարիքները հոգալու համար անհրաժեշտ բոլոր

աւարկանները, նա պիտի ե վոխանակէ կամ ծախէ իր աշխատանքի արդիւնքները, որպէս զի ձեռք բերէ այն, որ նրան պակասում է: Միևնոյն ժամանակ սպառման ապարկանները ապրանք դարձնելու համար բնաւ հարկաւոր չէ, որ արդիւնաբերողը անպատճառ անձամբ լինի արտադրութեան միջոցներից: Աշխատաւոր հասարակութեան մէջ, որտեղ իւրաքանչիւր արդիւնաբերող իր արտադրութեան տակ ունի նրան անհրաժեշտ բոլոր արտադրութեան միջոցները, նոյնպէս շատ լաւ կարող է գոյութիւն ունենալ ապրանքային արդիւնագործութիւնը, ինչպէս և դրամատիրական հասարակութեան մէջ: Դրամատիրական կարգերի բնորոշ գիծն է կազմում այդ պատճառով ոչ թէ ապրանքային արդիւնագործութիւնը, այլ այն պայմանները, որոնց մէջ տեղի է ունենում այդ արդիւնագործութիւնը, այսինքն արտադրողի անձնաւորը արտադրութեան միջոցներից: Իսկ եթէ այդ այդպէս է, չի կարելի դրամատիրական արդիւնագործութեան զարգացման օրէնքը, որ արդիւնք է ինդուստրիայի վրայ կատարած դիտողութիւնների, աւանդ այլևայլութեան կիրառել ապրանքային արդիւնագործութեան վերաբերմամբ: Ապրանքային արդիւնագործութիւնը հնում արևմուտքում է այդ օրէնքին միայն այն ժամանակ, երբ նա դառնում է դրամատիրական, այսինքն երբ կան նրա մէջ մեզ արդէն յայտնի այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են դրամատիրական արդիւնագործութեան համար: Իսկ այնտեղ, որտեղ բացակայում է այդ պայմաններից գէթ մէկը, որտեղ դեռ չը կայ դրամատիրական արդիւնագործութեան լայն զարգացման համար, դրամատիրական արդիւնագործութեան զարգացման օրէնքը անպատճառելի է — վերաբանական արդիւնագործութիւնը կարող է ապրանքային լինել, բայց նա կը զարգանայ բոլորովին այլ ճանապարհով, քան դրամատիրականը:

Եւ այսպէս, ապրանքային արդիւնագործութեան գոյութիւնը այս կամ այն երկրում կամ անտեսութեան



այս կամ այն ճիւղում դեռ ապացոյց չէ բնաւ, որ երկիրը կամ անտեսութեան ճիւղը անխուսափելիօրէն պէտք է ընկնեն դրամատիրութեան ճանկը:

Եթէ մենք այժմ անցնենք դատողութիւնների չորրորդ դատողութիւնների չորրորդը, եթէ մենք դիմենք պատմութեան, կը տեսնենք, որ մարդկային հասարակութիւնների գոյութեան ամբողջ ընթացքում — գոյութեան, որ հաշուում է իր յետևում շատ հազարամեակներ, եթէ ոչ աւտեսակ հազարամեակներ, — դրամատիրական արդիւնագործութիւնը առաջին անգամ երևան եկաւ և սկսեց արագ զարգանալ 19-րդ դարում, Բրիտանիայի ծնունդից հաշուած, Եւրոպայի և Ամերիկայի մի քանի երկիրներում: Բնականն է արդեօք այդ դիտողութիւնը, որպէսզի մարդ իրաւունք ունենայ պնդելու, որ դրամատիրական կարգերը կազմում են իւրաքանչիւր հասարակութեան զարգացման անհրաժեշտ աստիճանը:

Եթէ հասարակութիւնների զարգացման ուսումնասիրութեան մէջ մոռանանք հետազօտութեան նոյն եղանակները, որոնք գործադրում են դիտութեան մէջ զարգացման ուրիշ երևոյթների ուսումնասիրութեան ժամանակ, — այդ դէպքում պէտք կը լինի այդ հարցին պատասխանել բացասական կերպով:

Մարդկային հասարակութիւնների պատմութեան մէջ 19-րդ դարը միայն մի «կարճ վայրկեան» է: Դիտողութիւններից, որոնք արուած են այդ դարի ընթացքում մի քանի հասարակութիւնների վրայ, կարելի է հետևցնել այդ հասարակութիւնների դիտողութեան ժամանակի, այսինքն միայն 19-րդ դարի զարգացման ներքին օրէնքը: Այդ օրէնքը սատմ է, որ հասարակական անտեսութեան այն ճիւղերում, որտեղ դրամատիրական արդիւնագործութիւնը գտնում է իր զարգացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները, տեղի է ունենում արդիւնագործութեան անընդհատ կենտրոնացում իր բոլոր հետևանքներով, աշխատանքի արդիւ-

նաև հասարակության անընդհատ բարձրացման միջոցով: Բայց այդ դիտողությունները, որոնք ընդդիմում են պատմական օրէնքին կարճ ժամանակ և սրած են ընդամենը մի քանի հասարակությունների վրայ, չեն կարող հիմք ծառայել ընդհանուրապես մարդկային հասարակութիւնների զարգացման օրենքի համար: Զարգացման բարդ երևույթները ուսումնասիրելու ժամանակ չափազանց անդրաժեշտ է լինում սահմանափակել այդ երևույթների որևէ մասով, որովհետև հնարաւորութիւն չի լինում ենթարկել միաչափ մասը անմիջական դիտողութեան կամ փորձի: Եթէ, օրինակ, ամբողջ բոյսի զարգացումը որևէ պատճառով անմատչելի է անմիջական ուսումնասիրութեան, այդ դէպքում կարելի է զբաղուել նրա առանձին մասերի, օրինակ, ծաղիկի զարգացման հետազօտութեամբ: Այդ հետազօտութիւնից կարելի կը լինէր հետևցնել ծաղիկի զարգացման կատարելապէս ճիշտ օրէնքը: Սակայն այդ օրէնքը, որ վերաբերում է բոյսի մի մասի զարգացման, կը լինէր միայն մասնաւոր օրէնք: Այդ մասնաւոր օրէնքի ճշտութիւնը քնաւ դեռ չէր ապացուցի, որ ծաղիկը բոյսի զարգացման անհրաժեշտ աստիճանն է: Օրէնքը կը լինէր ուղիղ, եթէ ծաղիկը լինէր բոյսի զարգացման ոչ նորմալ աստիճանը, այլ որևէ հիւանդոտ երևոյթ: Որովհետև հիւանդոտ երևոյթները ևս զարգանում են համաձայն իրանց կատարելապէս որոշ օրէնքների: Ծաղիկի զարգացման մասնաւոր օրէնքը կը մտնի բոյսի զարգացման ընդհանուր օրէնքի մէջ. ծաղիկը կը ճանաչուի որպէս բոյսի նորմալ մասը միայն այն ժամանակ, երբ կը հաստատուի ծաղիկի զարգացման պատճառական կախումը ամբողջ բոյսի զարգացումից: Իսկ դրա համար անհրաժեշտ է գիտենալ ամբողջ բոյսի զարգացումը: Նոյնը կարելի է ասել և դրամատիրական հասարակութեան զարգացման օրէնքի մասին: Մարքս-Էնգելսի օրէնքը մնանաւոր օրէնք է, որ ցոյց է տալիս թէ ինչպէս է ընթանում 19-րդ դարում մի քանի դրամատիրա-



կան հասարակութիւնների զարգացումը: Կազմում են արդիւնք դրամատիրական կարգերը ընդհանրապէս մարդկային հասարակութիւնների զարգացման նորմալ, անհրաժեշտ աստիճանը, — այդ հարցը կը լուծուի միայն այն ժամանակ, երբ կը հաստատուի դրամատիրական կարգերի զարգացման պատճառական կախումը հասարակութեան ամբողջ զարգացումից: Իսկ մինչև այդ ժամանակ, երբ այդ պատճառական կապակցութիւնը, կախումը կը հաստատուի, այդ հարցը պէտք է բաց մնայ: Լուծել նրան այժմ և եթէ նշանակում է դուշակութիւններ անել: Պէտք է արդիւնք հետաքննութիւն հասարակութիւն իր զարգացման մէջ անցնի դրամատիրական կարգերի բովից: Այն ամենը, որ հասարակագիտութեան ժամանակակից դերութիւնը թոյլ է տալիս մեզ այդ հարցին պատասխանելու. — այս է՝ կամ այո՛ կամ ո՛չ:

Հասարակութեան զարգացման օրէնքների ճանաչելը մեզ հարկաւոր է ոչ միայն այն պատճառով, որ իմանք ուսումնասէր ենք. նա մեզ հարկաւոր է գլխաւորապէս այն պատճառով, որ նրա հետ կապած են չատ կարևոր կենսական չահերը: Մարդիկ օժտուած են կամքով և գիտակցութեամբ և, ապրելով հասարակութեան մէջ, նրանք բաւական զգալի կերպով ազդում են իրանց կամքի և գիտակցութեան միջոցով հասարակական զարձերի ընթացքի վրայ: Եթէ գիտութիւնը կատարելապէս պարզ կերպով ցոյց տար, որ դրամատիրական կարգերը կոչուած են զարգացնելու հասարակութեան արդիւնաբերողական ոյժերը, և որ նա զարգացման անհրաժեշտ աստիճան է, որից հնար չկայ ազատուելու, — այն ժամանակ մարդիկ պէտք է իրանց գործէին այնպիսի գործողութիւններ կատարելուց, որոնք կարող էին խանգարել դրամատիրական արդիւնագործութեան կանոնաւոր և արագ զարգացման — չանել գործադուլներ, այլ ընդհակառակը սիրով ու հաչտութեամբ համաձայնութեան գալ գործատէրերի հետ, չը պահանջել հող քաղցած հա-

զագրծնների համար, որպէս զի չը խանգարւի դիւղատնտեսական արդիւնագործութեան կենտրօնացումը և այլն: Ի հարկէ, այն ժամանակ կենդանի մարդկանց չահերը ամբողջապէս կը զոհւէին արդիւնագործութեան զարգացման համար, բայց պիտակից մարդը կը տեսնէր, որ բոլոր արդելափակ զործողութիւնները զործին չեն օգնել, այլ միայն կը վնասեն — ծանր դրութիւնը միայն աւելի երկար կը տևի... Դժբաղդաբար, դիտութիւնը մեզ չի տալիս որոշ պատասխան, անհրաժեշտ են թէ ոչ դրամատիրական կարգերը: Ուսաի և պիտակից մարդիկ սովորած են դասել մօտաւորապէս այսպէս. «Արդիւնաբերողական ոյժերի զարգացումը անկասկած չատ լաւ բան է, և եթէ միայն դրամատիրական կարգերը կարողանային իրականացնել նրան, այն ժամանակ, անպայման, սովորած՝ պէտք կը լինէր անցնել դրամատիրութեան բովից: Բայց մայր-դիտութիւնը ասում է. Դուցէ դրամատիրութիւնը բնաւ հարկաւոր չէ արդիւնաբերողական ոյժերի զարգացման համար. այդ դէպքում ինչո՞ւ այդ կուռքին մենք այնքան մարդկային զոհեր պիտի բերենք: Երբ դրամատիրութիւնը զարգացընում է արդիւնաբերողական ոյժերը, նա իր ջրաղացքարերով ձեռքում-փչեիացնում է կենդանի մարդկանց, որովհետև նրա համար մարդը ոչինչ է, իսկ արդիւնագործութիւնը՝ ամեն ինչ: Եթէ յայտնի չէ դեռ, թէ ինչպէս է գործը առաջ գնալու, մենք մեր ամբողջ կամքը և դիտակցութիւնը կ'ուղղենք այնպէս, որ մարդկանց կեանքը հեշտացնենք: Որովհետև արդիւնագործութիւնը մարդուս համար է, և ոչ թէ մարդս արդիւնագործութեան համար: Եւ դուցէ, երբ մարդկանց կեանքը աւելի լաւանայ, արդիւնաբերութիւնն էլ դրանից օգուտ քաղի»:

Եւ պիտակից մարդկանց գործունէութիւնը կարող է ուղղուել այս կամ այն կողմը, տեսնելով թէ ինչպէս են նրանք հասկանում հասարակութեան զարգացումը: Այդ



պատճառով խոհեմութիւնը պահանջում է չ'անել խիստ չտապ եղրակացութիւններ դեռ լիովին չ'ապացուցած գիտական դրութիւններից, չ'ընդունել որպէս անսխալական օրէնք այն, որ դիտութեան ներկայ դրութեան ժամանակ միայն գուչակութիւն է, և ուղղել իրանց ամբողջ գործունէութիւնը այնպէս, որ մարդիկ աւելի լաւ ապրեն: Համարձակ կերպով կարելի է ասել, որ այս դէպքում սխալ չի լինի:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Դրամատիրական հասարակութեան զարգացման ընթացքի վրայ կատարած վերջին չքուն տարիների դիտողութիւնները հնարաւորութիւն են տալիս տանելու ճշտութիւնը ներքագրական օրէնքի, որ Մարքսն ու Ինգելսը նախագծեցին իրանց 1848 թ. լոյս ընծայած «Կոմունիստական Կուսակցութեան Մանիֆեստի» մէջ: Վերտառութիւնը ցոյց տուեց, որ ընդհանուր գծերով այդ օրէնքը հաստատուեց, բայց որ — բացի մի քանի երկրորդական նշանակութիւն ունեցող մանրամասնութիւնից — Մարքս-Ինգելսի օրէնքը բացարձակ կերպով չեղուեց իրականութիւնից դիւղատնտեսութեան մէջ՝ դրամատիրութեան կատարելիք դերի տեսակէտից:

Հասարակութեան արդիւնաբերողական ոյժերի ներկայումս նկատուող հակայական աճումը իրօք հետեւանք է արդիւնագործութեան կենտրօնացման՝ աշխատանքի արդիւնաւէտութեան անընդհատ բարձրացման միջոցով: Արդիւնագործութեան կենտրօնացումը հասել է իր ներկայ զարգացման ամենաբարձր աստիճանին ինդուստրիական մեծութիւնների կամ տրեստների մէջ, որոնք կենտրօնացնում են մի խոշորագոյն ձեռնարկութեան մէջ արդիւնագործութեան ամբողջ ճիւղեր: Արդիւնագործութեան և արդիւնագործական դրամագլխի կեդրօնացման

հետ զուգընթաց առաջ է գնում հաղորդակցութեան միջոցների կենտրոնացումը, ինչպէս և վաճառային (բանկային) ու առևտրական գրամագլուխների կենտրոնացումը: Մարքս-Էնգելսի ենթադրական օրէնքի համաձայն, արդիւնագործութեան կենտրոնացումը առաջ բերել վիրջին կէս դարի ընթացքում արդիւնագործական կրիզիսներ (ճգնաժամներ), որոնք գրամատիրական արդիւնագործութեան ծագման չրջանների հետ հերթով յաջորդում են իրար: Բայի այդ, արդիւնագործութեան կենտրոնացման զարգացումը ունի և առաջ տարաբ հատարակութեան ատիճանական չերտաւորումը և հող պատրաստում աշխատաւորութեան դասային ինքնագիտակցութեան լայն զարգացման համար: Այդ ինքնագիտակցութեան զարգացումը արտայայտւում ապագիսկ սոցիալիստական կուսակցութիւնների կազմակերպման մէջ, — կուսակցութիւնների, որոնք քաղաքակրթւած երկիրներում աշխատաւոր դասի ձգտումների և պահանջների արտայայտիչներն են:

Ըստ ատած արտադրութեան և գրամագլխի անկասկած աճող կենտրոնացման, Մարքս-Էնգելսի օրէնքը որոշ չափով չեղուեց իրականութիւնից այն մտքով, որ արտադրութեան կենտրոնացումը միշտ չի զուգադիպում գրամագլխի կենտրոնացման: Շնորհիւ բաժնեհիւրական ընկերութիւնների դործունէութեան, որոնք հնարաւորութիւն են տալիս մանր եւ միջին գրամագլուխների միանալ խոշոր ձեռնարկութիւններ կազմելու նպատակով, — արտադրութեան կենտրոնացումը կարող է առաջ գնալ և այն ժամանակ, երբ կենտրոնացած արդիւնագործութեան համապատասխանող գրամագլուխները մնում են գրած բազմաթիւ գրամատէրերի ձեռքում: Բացի այդ, դիտողութիւնը ցոյց է տալիս, որ խոշոր արդիւնագործութիւնը ինդուստրիայի մի քանի ճիւղերում միշտ չի աչքացնում մանրը և միջինը: Երբ առաւելութիւնները,



որ խոշոր արդիւնագործութիւնը ունի մանրի և միջինի նկատմամբ, — մեծ չեն, արդիւնագործութեան այդ բոլոր տեսակներն էլ կարող են իրանց դոյութիւնը պահպանել իրար կողքի, այնքան էլ իրար չը խանգարելով: Արտադրութեան կենտրոնացման չը զուգադիպելը գրամագլխի կենտրոնացմանը՝ չի աչքացնում գրամատիրական արդիւնագործութեան զարգացման օրէնքի ճշտութիւնը, որովհետև գրամատիրական արդիւնագործութեան էութիւնը արտադրութեան և ոչ թէ գրամագլխի կենտրոնացման մէջն է: Իսկ մանր և միջին գրամատիրական արդիւնագործութեան դոյութիւնը խոշոր կողքին ինդուստրիայի մի քանի ճիւղերում՝ մէկն է այդ օրէնքի կոմմենտարներից:

Դիտողութիւնները ցոյց տւին, որ անտեսութեան հողագործական ճիւղում գրամատիրական արդիւնագործութիւնը զարգանում է անհամեմատ աւելի դանդաղ, քան ինդուստրիայում: Բացատրւում է այդ գլխաւորապէս նրանով, որ հողագործութեան մէջ գրամագլուխը չի գտնում մէկը այն հիմնական պայմաններից, որոնք անհրաժեշտ են նրա զարգացման համար, այսինքն աշխատանքի արդիւնաէտութեան անընդհատ բարձրացման հնարաւորութիւնը նրա բաժանման և զարգացման միջոցով: Այդ պատճառով, ինդուստրիայի զարգացման օրէնքը անհրաժեշտութեան զարգացման վերաբերմամբ:

Սխալ դուրս եկաւ նոյնպէս Մարքսի և Էնգելսի ենթադրութիւնը գրամատիրական կարգերի կործանման ժամանակի մասին: Հիմնուելով գրամագլխի արագ կենտրոնացման վրայ, նրանք ենթադրեցին, որ գրամատիրական հասարակարգը պէտք է խորտակւէր 30-40 տարի սրանից առաջ: Բայց մի կողմից նրանք չափազանցրին գրամագլխի կենտրոնացման արագութիւնը, իսկ միւս կողմից նրանք հաշւի չ'առան, որ աշխատաւորութեան

*դասակին ինքնագիտակցությեան զարգացումը բնաւ ուշ-ղակի կախում չ'ունի դրամատիրական արդիւնագործու-թիւեան զարգացումից, ինչպէս այդ ցոյց տւեց Անգլիայի օրինակը:*

*Ի նկատի ունենալով այն ուղղումները, որ դրամա-տիրական հասարակութիւեան զարգացման վրայ վերջին յիսուն տարիների ընթացքում կատարած դիտողու-թիւնները տախտում են մեզ մացնել Մարքս-Էնգելսի եղիմադրական օրէնքի մէջ, — այդ օրէնքը կարելի կը լինի արտայայտել այսպէս.*

*Հասարակական տնտեսութիւան այն ձիւղերում, որտեղ դրամատի-րական արդիւնագործութիւնը գտնում է իր զարգացման համար բոլոր անհրաժեշտ պայմանները, տեղի է ունենում աշխատանքի արդիւնաւե-տութիւան անընդհատ բարձրացման միջոցով արտադրութիւան կենտրոնա-ցում եւ աշխատանքի հասարակականացում:*

*Բայց աշխատանքի այդ հասարակականացումը հետե-ւանք չէ դրամատիրական արդիւնագործութիւան զար-գացման, այլ, ընդհակառակը, դրամատիրական արդիւ-նագործութիւան զարգացումը հետաւոր դարձաւ չնոր-հիւ այն հանգամանքին, որ 19-րդ դարի սկզբին իրա-կանացան աշխատանքի հասարակականացման ամենա հա-մար անհրաժեշտ պայմանները: Աշխատանքի հասարա-կանացումը կարող է դադարել ունենալ առանձ դրա-մատիրական կարգերի, իսկ դրամատիրական կարգերը անհերետակայելի են առանց աշխատանքի հասարականաց-ման: Գիտութիւնն է հիմնական չարժիչը արդիւնաբեր-ական ոյժերի և աշխատանքի հասարակականացման զար-գացման:*

*Գիտութիւան ներկայ դրութիւնը թոյլ չի տալիս ասել, որ դրամատիրական կարգերը կազմում են իւրաքանչիւր հասարակութիւեան զարգացման անհրաժեշտ աստիճանը:*

---

Տո

7729
23508

ՀՀ Ազգային գրադարան
2013
NL0041061